№ 6 (224) XXII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1912

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՎԱՅՐԿԵԱՆԸ

Նորէն անդունդի ծայրն ենք... Քաօսը նորէն տիրեց օսմանեան դժոխքի մէջ և վերստին լսեցին աղէտաշունչ „կատաստրոֆային" գուշակութիւնները։ Պարբերաբար, բնական երևոյթի անհրաժեշտութեամբ, ժայթքում է նա—այդ ահաւոր քաօսը—պարբերաբար անիշխանութեան ու ռէակսիօնի սարսափը գալիս է ահաբեկելու խաղաղասէր ժողովուրդներին—և այդպէս կը շարունակի, քանի դեռ կանգուն կը մնան հիմնական պատճառները, քանի դեռ մահմեդական զանգուածը կը մրափի անյոյզ անշարժութեան մէջ, առանց կուսակցական ու գաղափարային շերտաւորումի. քանի դեռ զինուորականութիւնը միակ կուանը կը հանդիսանայ Սահմանադրութեան և երկրի ճակատագիրը մատնուած կը լինի մէկ հատիկ կուսակցութեան քմահաճոյքին, նրա յաւակնոտ ու բռնաւոր դիքտատորութեան։

Քմահաճոյքն ու կամայականութիւնը կապուած են միշտ ճակատագրօրէն դիքտատորական ռէժիմի հետ և վաղ թէ ուշ փորում են նրա գերեզմանը... Սակայն — այդտեղ է կացութեան տրագիզմը—գերիշխող կուսակցութիւնը տապալելուց յետոյ, չի գտնւում համապատասխան փոխարինող ոյժ, կազմակերպուած, առաջադէմ ոյժ, և ամեն ինչ վերստին խորասուզւում է նոյն նախնական քաօսի մէջ, ուր առատօրէն սերմանուած են ռէակցիայի ու բռնապետութեան սերմերը։

Իթթիհատեան Նեղմիա, գրգռիչ, ազգայնամոլ քաղաքականութիւնը տուեց ահա իր անխուսափելի պտուղները, տարածելով ամենուրեք դժգոհութեան փոթորիկը, յարուցանելով բրօնիկական խռովութիւններ, ներմուծելով պառակտումը բանակի մէջ, դառնալով ի վերջոյ իր սեփական գերեզմանափորը... Արամազդը, իր վոհին գլորելուց առաջ, խլել էր նրա բանականութիւնն ու ողջմտութիւնը... Եւ խելագար ռէժիմը առաջ գնաց ոստոստելով, մի կոյր ու բութ մոլեգնութեամբ, թափահարելով անդադար „պանթիւրքական" իր դրօշը, շպրտելով ամբարշտութեան ձեռնոցը իր բոլոր հակառակորդներին ու բարեկամներին, խեղաթիւրելով սահմանադրութեան էութիւնը, բռնանալով ընտրական ազատութեան վրայ, գրգռելով ալբաններին, բուլգարներին, արաբներին, հայերին, արհամարհելով բոլոր օրինաւոր գանգատները և բոլոր բողոքները։

Արդիւնքը—մեր աչքերի առջև է։ Իտալիան՝ կոկորդի վրայ, ալբանացի ապստամբները Ֆիրաշած իրենց երկրին, օսմանեան բանակը՝ բաժան-բաժան, մասսային դասալքութիւն զինուորների ու սպաների մէջ, ռումբեր և կոտորած Մակեդոնիայում, հարիւրաւոր քրիստոնեաներ խողխողուած և Բուլգարիան սպառնական դիրքի մէջ, Մօնտենեգրօն՝ Թատրի վրայ, սպանութիւններ և ընդհանուր անապահովութիւն Հայաստանում... խորհրդաւոր ու հապշտապ պատրաստութիւններ Ռուսաստանի ու այլ պետութիւնների կողմից և—որ ամենից սոսկալին է—երկիրը կատարեալ անիշխանութեան մէջ, պարլամենտը լուծուած, հին ռէժիմի մարդիկ գլուխ անցած կառավարութեան, ահաւոր շշուկները մթնոլորտում, ռէակցիայի ուրուականը՝ դռներին...

Ի՞նչ է այս նոր „դիմադարձութիւնը", ի՞նչ է այս նոր „զինուորական միութիւնը", որ գործում է այդպէս յախուռն ու տարօրինակ ժեստերով...

Ի՞նչ է կատարւում այդ համիդեան մինիստրների մութ, զառամեալ գլուխների մէջ և ո՞ւր է մղում դեպքերի դահավիժող ալիքը... Մուխտար փաշայի դահլիճը հրապարակ եկաւ սահմանադրականութեան, ապակենտրօնացման ու ազգերի իրաւահաւասարութեան խոստումներով, բայց դեռ նոր միայն հաստատուած՝ շտապեց ներուած շնորհել... հին ռէժիմի ամենայայտնի բորենիներին։ Ի՞նչ է այդ ցոյցի իմաստը, այդ տենդային աճապարանքի խորհուրդը... Արդեօք զառանցո՞ւմ են այն մի կարգ յոռետեսները, որ գուշակում են, թէ այդ „վերհանձն ու ազգափրկիչ ներումը" կը հասնէ շուտով նաև Իզզէթների ու Միւնիր բէյերի՝ բանտարկեալ Ցիրոյը՝ որի անունը այսօր բազմաթիւ ալբան ապստամբների շրթների վրայ է...

Եկէ՛ք ու լուծէ՛ք այդ մութ՞ կնճիռները. եկէ՛ք որոշելու թիւրքական մրրկածուփ իրականութեան նոյնքան մթին հոսանքները, որոնց բանալին փնտրելու է մի պառակտուած զինուորականութեան ցասկոտ ու յարափոփոխ բնազդների մէջ... Առ այժմ արձանագրենք կացութիւնը, որ միանգամայն կրիտիկական է, տագնապալի։ Այն միակ ուժեղ մահմեդական կազմակերպութիւնը, որ „Իթթիհատ և Թէրակկը" անուան տակ

չորս տարի առաջ կատարեց յեղափոխութիւնը, յենուած մակեդոնական բանակի վրայ—այսօր նա հալածական է և թերևս մօտ ապագայում ստիպուած լինի նորէն մտնել ստուերի մէջ, ապաւինել սառերկրեայ, գաւադրական գործունէութեան։ Սկսած է մահացու մենամարտը այդ ծաւալուն կոմիտէի և նորեկ կառավարութեան միջև։ Ի՞նչ ընթացք կ'առնէ նա անցքերի ոլորտոյթի մէջ և ինչո՞վ նա կը վերջանայ... Գուշակելը դիւրին չէ. յամենայն դէպս ներքին քաղաքացիական այդ պատերազմը չափազանց սուղ կը նստի Թիւրքիային. նա կըստեղծէ մի այնպիսի տագնապ՝ որի նմանը թերևս տեսած չլինի աշխարհ „Հիւանդ Մարդը" իր գոյութեան 500-ամեայ շրջանի մէջ։ Նա կը գայ վերջնականապէս համոզելու քաղաքակիրթ աշխարհը՝ որ մահմեդական մարդկութիւնը, մասնաւորապէս օսմանեան զանգուածը անկարող է կազմակերպուել, իբրև ուրոյն ու յարատև պետութիւն, ժամանակակից իմաստով. նա կը գայ ամենաուժեղ պատրուակը ընձեռելու միջազգային գիշատիչ դիւանագիտութեան, որ արդէն պատրաստուում է ամեն կողմից նետուելու իր որսի վրայ, յօշոտելու, կլանելու...

Թիւրքական տագնապը բևեռել է իր վրայ ամբողջ աշխարհի լարուած և յուզուած ուշադրութիւնը։ Միանգամայն հասկանալի է այդ, եթէ մի վայրկեան անդրադառնանք այն ահաւոր հետևանքների վրայ, որ կունենան Թիւրքիոյ, Արևելքի ցնցումները համաշխարհային խաղաղութեան տեսակէտից։

Երկիւղը ընդհանուր է. բայց — հա՞րկ է արդեօք յիշեցնել—որ ամենից աւելի յուզելու պատճառ ունենք... Հայերս։ Մի անգամ ևս և ուժեղ շեշտով՝ անցքերը գալիս են հասկացնելու, թէ որքա՜ն միամիտ ու վտանգաւոր է՝ տարուել „լէգալիզմով", ապաւինել սոսկ խաղաղ, կուլտուրական գործունէութեան դրօշին... Յուլիսեան Յեղափոխութեան առաջին օրերից ի վեր՝ Հայ Մարտական Կազմակերպութիւնը զարկել է շարունակ ահազանգը, ցուցադրել է կացութեան արատները, տիրապետող ցեղի սահմանադրական տհասութիւնը, „զինուորական ընդվզումների" քմահաճ բնոյթը, հակադարձ շարժումների անվերջ հնարաւորութիւնը... և շարունակ կոչ է արել դէպի զգաստ, շրջահայեաց ազգային քաղաքականութիւն, հրաւիրել է խուսանելու կազմակերպութեան շարքերը, աճեցնելու ժողովրդեան դիմադրական կարողութիւնը, պատրաստելու ժողովրդին՝ վտանգաւոր պատահարների դէմ։

Եւրոպացի մեր բարեկամները, այդ ծանր պատահարների հնարաւորութիւնը նախազգալով, յորդորում են մեզ՝ զգոյշ լինել, չտարուել վրէժխնդրութեան նկատումներով հանդէպ Իթթիհատի, այլ ձգտել առաջ բերելու համերաշխութիւն ու միութիւն սահմանադրական ուժերի միջև... Շնորհապարտ ենք մեր վեհանձն բարեկամներին. մեր դերն է եղել սկզբից ի վեր համերաշխութեան այդ քարոզը և—մեր կենսական շահերից իսկ դրդուած—չպիտի երբէք հրաժարինք այդ դերից, անգամ այն բոլոր դառն, հիասթափեցնող փորձերից յետոյ, որ տուեց մեզ Իթթիհատի և նրա սիրած դահլիճների տխմար ու հակակրելի քաղաքականութիւնը հայ ժողովրդի ամենահիմնական և ամենահրատապ կարիքների հանդէպ...

Հ. Յ. Դաշնակցութիւնը, անկախ մի մարմին — ինչպէս նորերս յայտարարեց Արևմտեան Բիւրօի թռուցիկով — չունի ոչ մի կապ որևէ կուսակցութեան հետ. բայց եթէ սկսեն իրականանալ յոռետես մարգարէութիւնները, եթէ նորակազմ դահլիճը, յենուած Զինուորական Միութեան վրայ, փորձէ շուռ տալու սահմանադրական զարգացման անիւը դէպի հին, նզովեալ ռէժիմը, „Դաշնակցութիւնը" առաջինը կը լինի, որ կը փութայ միանալու Իթթիհատին և բոլոր ազատասէր տարրերին՝ սահմանադրական իրաւակարգը վերստին նուաճելու համար։

ՕՍՄԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ

Հայրենակիցներ,

Երկիրը կ'անցընէ տագնապի օրեր, պետութիւնը կը գտնուի վտանգի առջև։

Պատճառը միայն ալքանական շարժումը չէ, ո՛չ պատերազմը և ոչ ալ կուսակցութեանց կամ խմբակցութեանց միջև տեղի ունեցող բաղխումը։ Ասոնք իրենք իսկ արդիւնքն են աւելի խոր ու ցաւագին պատճառի մը։

Դժգոհութեան և վտանգի հիմնական պատճառը՝ երկրին հիւանդոտ դրութիւնն է, մեր աղքատ, յետամնաց վիճակն է, վարչական մեքենային ժանգոտած ըլլալն ու ինչալալլահի բաղաքականութիւնն է, պիւտճէի անհաւասարակշռութիւնը և պետութիւնը կազմող տարրերու անգոհունակութիւնն է։

Կասկած չի կայ, թէ նախասահմանադրական վարչութիւններն են, որ ստեղծած, սնուցած և վտանգի այս գագաթնակէտին հասուցած են պետական վիճակը։

Սակայն նոյնքան ստոյգ է, որ սահմանադրական կառավարութիւններն ևս գիտակցութիւնը կամ կարողութիւնը չունեցան դիմելու լուրջ փոփոխութեանց, արմատական դարմաններու՝ որպէս զի կարելի ըլլար բուժել պետութիւնը կրծող հիւանդութիւնները։

Նորերը հիներէն տարբերուեցան գլխաւորաբար մեծադղորդ յայտարարութիւններով և փքուռոյց խոստումներով՝ առանց հոգ տանելու, որ այդ խոստումները գործի վերածուին շիտակութեամբ և հետևողականօրէն։

1908-էն ետք մէկ մէկու յաջորդող դահլիճները, տարբեր ձևերով, շարունակեցին հին ռէժիմի վարչութիւններուն սիստեմը,—չնայելով խորունկը և հեռուն, մոլեռնով ծածկելով պետական վէրքերը, իրենց գլխաւոր ուժը սպառելով կարելի եղածին չափ երկար ատեն

ապահովելու իշխանութեան սանձը իրենց ձեռքին մէջ...

Կեանքի անիւը շատ աւելի անողոք է սակայն իր օրէնքներով՝ քան ինչ որ կը կարծեն իշխանութեամբ արբեցողները։

Հ՝օրօրինք այլ ևս սին յոյսերով, թէ երկրին խաղաղացումը կը վերահաստատի՝ սոսկ առօրեայ կնճռոտութիւնները հարթելով, փոլիթիգոսութեան ճարտար խաղերով, կամ զօրքը՝ բարձր իշխանութեան նեցուկ դարձնելով...

Երկրին ապագան կախուած է գլխաւորապէս այն բանէն, թէ մենք ո՛րչափ հեռատեսութիւն կրնանք ունենալ՝ ճշտելու պետական խոշորագոյն ցաւերն ու անոնց նպատակայարմար դարմանները, ո՛րքան կամք և հմտութիւն կրնանք ցոյց տալ՝ բուժելու այդ վէրքերը արագ ու համարձակ բարեփոխութիւններով։

Հասեր է ժամը, երբ այլ ևս խոստումներու տեղ անհրաժեշտ են գործեր՝ իրականացնելու համար հետևեալ պահանջներն ու բարենորոգումները։

1. Անապահովութիւնը վերցնելու, պաշտօնեաներու կողմնապահութիւնն ու անձեռնհասութիւնը բառնալու, պատասխանատուութեան սկզբունքն ուժեղացնելու և պետական մեքենան օգտակար շարժման մէջ դնելու համար՝ անհրաժեշտ է ամեն մէկ շրջան, մասնաւորապէս ծայրագաւառները օժտել կարող և անաչառ վարչութիւններով կամ վարիչներով (օսմանցի թէ օտար)։ Անհրաժեշտ է տալ ամեն իրաւասութիւն այդ վարչութեանց կամ վարիչներուն՝ հսկելու պաշտօնեաներուն վրայ և փոխելու ապիկարները, բարեկարգութիւն մտցնելու՝ տեղական պայմաններու համաձայն և հիմնաւորելու անդորրութիւնը։

2. Որպէս զի կարելի ըլլայ բարձրացնել աշխատաւորին ձեռներէցութիւնը, զարգացնել ճարտարարուեստը և ստեղծել դրամագլուխ,—անհրաժեշտ է պակսեցնել աշխատաւոր դասի տուած հարկերը, համաչափութիւն մտցնելով հողագործ և վաճառական դասակարգերու վճարածներուն միջև, ոչնչացնել աշարը, ճամբու, աղի և այլ մարդ գլուխ տուրքերը և հաստատել յառաջատուական տուրք՝ ժառանգական և եկամտային-հարստութեանց վրայ։

3. Որպէս զի կարելի ըլլայ ապահովել պետութեան ֆինանսական-քաղաքական անկախութիւնը և աւելցնել անոր տնտեսական կարողութիւնը,—անհրաժեշտ է հաւասարակշռել պիւտճէն՝ զեղջելով պաշտօնեաներու թիւը, բարձր ամսականները և անհաշիւ կենսաթոշակները։ Անհրաժեշտ է պակսեցնել ոչ-արդիւնաւէտ ծախսերը և ընդհակառակը, ուժ տալ ճամբաներու և երկաթուղիներու կառուցման, ոռոգման և այլ շինարար ձեռնարկներու։

4. Վերջ դնելու համար ազգային-կրօնական բաղխումներուն՝ անհրաժեշտ է հրաժարիլ այնպիսի կարգադրութիւններէ և քայլերէ, որոնք բաղկացուցիչ ազգութեանց կը ներշնչեն թրքացման և իսլամացման քաղաքականութեան երկիւղներ։ Այս պատճառով, անհրաժեշտ է գործնական միջոցներով ապահովել ազգերու իրական հաւասարութիւնն ու զարգանալու հնարաւորութիւնը. պէտք է կրթական պիւտճէն բաշխել ազգային վարչութեանց միջև՝ ըստ ազգութեանց թիւին, պաշտօնեաներ նշանակել նաև տեղացի ազգութիւններէ, թիւրքերէնին հետ ճանչնալ նոյնպէս տեղական լեզուներու հաւասարութիւնը, վերցնել դաւանական տարբերութեանց մասին օրինագրքերու մէջ գտնուած տարամտութիւնները, և յատուկ օրէնքներով ապահովել փոքրամասնութիւն կազմող տարրերու համաչափ մասնակցութիւնը ընտրութեանց, ինչպէս և պետական-վարչային մարմիններու մէջ։

5. Որպէս զի կարելի ըլլայ ապահովել սահմանադրական ռէժիմի ամրապնդումը, երկրին քաղաքական յառաջդիմութիւնն ու ներկայացուցչական սկզբունքը,—անհրաժեշտ է անխախտ ու անձեռնմխելի պահել խօսքի, խղճի, ժողովներու, միութեանց և մամուլի ազատութիւնները։ Պէտք է յատուկ կանոններով երաշխիքներ ստեղծել ընտրական ազատութեանց համար — ընտրական գործերէն հեռու պահելով կառավարութիւնները, ջնջելով գաղտնի ֆոնտերը, ճշտելով Բ. կարգի ընտրողներու շրջանակները, ընտրութիւնները կատարելով մէկ օրուայ մէջ, ոստիկանական շէնքերէ դուրս և կուսակցական խառն մարմիններու հսկողութեան տակ։

Այս և միայն այս հիմնական խնդիրներու կարգադրութիւնն է, որ օսմանեան երկիրը կ՝ազատէ տագնապէ, ներքին ու արտաքին հարուածներէ։

Այս նպատակին է, որ ձգտած ենք միշտ և այս ոգիով է, որ անաչառ խստութեամբ քննադատած ենք սահմանադրական եկող գացող վարչութիւնները։

Եւ այսօր ալ մենք ԱՆԿԱԽ ԽՄԲԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆԵՂ ՎԷՃԵՐԷՆ, ՉՈՒՆԵՆԱԼՈՎ Ո՛Չ ՄԷԿ ԿԱՊ Ո՛ԵՒԷ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ, մենք մեր կատարեալ ազատութեան մէջ՝ մեր խօսքը կ՝ուղղենք օսմանեան երկրի բոլոր գաղափարական տարրերուն, ունենալով ընդհանուր հայրենիքի բարձրագոյն շահերուն մտահոգութիւնը միայն։

Եկած է ժամը, որ երկրին ճշմարիտ վիճակը հասկցող օսմանցիները ընդգրկեն և գործադրել տան արմատական բարենորոգմանց այն հարկադրական ծրագիրը, որուն գլխաւոր գիծերը ցոյց տուինք ահա։

Եւ միայն այս ուղին է որ, մեր ամենախորին համոզումով, կարող պիտի ըլլայ վերջ դնել ներքին տեսական տագնապներուն և առաջնորդել երկիրը վերածնութեան ու փրկութեան։

Հ. Գ. Դաշնակցութիւն
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1912, յուլիս 18

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

—

„Vae victis"!

Անսովոր տենդ ու ջղայնութիւն—քաղաքական մըթնոլորտում։ Ֆրանսիական մինիստր-նախագահի ուղևորութիւնը դէպի Պետերբուրգ աւելի ևս սաստկացրեց յուզուած տրամադրութիւնը։ Ամենուրեք լարուած ուշադրութեամբ հետևում են Պուանկարէի քայլերին, Պետերբուրգի ցոյց տուած ընդունելութեան, ցարի ու մինիստրի փոխանակած ճառերին, որոնք ըստ երևոյթին նոր դարագլուխ պիտի բանան Ֆրանկո-ռուս զինակցութեան մէջ, նոր ու աւելի սերտ կապերով պիտի շաղկապեն երկու էապէս հակամարտ ուժերը, որոնց տարաձայնութեան ամուսնութիւնը 25 տարուց ի վեր չկարողացաւ գտնել համակրութիւն, լայն, անկեղծ ժողովրդականութիւն՝ գէթ Ֆրանսիայում։ Շատ ու ականաւոր ֆրանսիացիների աչքում—և ոչ միայն սոցիալիստների—այդ արտառոց „միութիւնը ջրի և կրակի", հանրապետութեան ու բռնապետութեան այդ նողկալի գրկախառնումը մի անարգանք է Ֆրանսիայի համար։ Նրանց յայտնի չէ, թէ ինչ է շահել իրենց հայրենիքը այդ դաշնակցութիւնից, որի շնորհիւ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը տասնեակ տարիներից ի վեր մի շարք խոշոր խնդիրներում ստորադրւել է ռուսականին, վարկաբեկւել բարոյապէս, իջել մինչև ամենաանարգ սպասաւորութեան աստիճան։ Նրանք միայն գիտեն, որ Ռուսաստանն է մեծապէս շահել,—աւելի ճիշտ՝ ցարիզմը—բանի որ յանուն դաշնակցութեան, Ֆրանսիայի միլիարդները հոսել են շարունակ դէպի Պետերբուրգի աւազականոցը, գնացել են սնուցանելու Անդրսիբիրեան և ուրիշ տխրահռչակ ձեռնարկները, բազմացնելու բանտերն ու ոստիկան-ժանդարմական վոհմակները, ուժեղացնելու բռնապետական ռէակցիան, խորտակելու ժողովրդական յեղափոխութիւնը...

Եւ այժմ էլ այդ նոյն սրտացաւ քաղաքացիները անհանգիստ հարց են տալիս իրենց՝ արդեօք այդ նոր ուղևորութիւնը չի՞ պատրաստում նոր ու հսկայ մի փոխառութիւն...

Ուղևորութիւնից քիչ առաջ հրապարակ նետուեց մի անակնկալ. երկու զինակիցները վերջերս բանակցել և կապել են մի նոր, լրացուցիչ դաշինք — նաւային դաշինք։ Եւրոպական պատերազմի ատեն՝ երկու պետութիւնների ոչ միայն բանակները, այլ և նաւատորմերը պէտք է միանան, աջակցեն փոխադարձաբար։ Բայց... Ռուսաստանը նաւատորմ չունի, գրեթէ չունի։ Նա ճգնում է դուրս նետուել Սև Ծովի իր բանտարկութիւնից դէպի լայնարձակ Միջերկրականը, ուր մրցում են զօրաւոր պետութիւններ։ Բայց նրա ծովային ուժերը խորտակւել են Եապոնական պատերազմի միջոցին և այժմ նա նորէն պէտք է վերակազմի իր նաւատորմը։ Իսկ դրա համար—դրամ է պէտք և մեծ, հսկայ դրամագլուխ։ Ենթադրում են, որ դարձեալ Ֆրանսիան է, որ պիտի հոգայ։

Բայց Պուանկարէի խորհրդաւոր ուղևորութեան հետ կապում են և մի շարք այլ հիպոթէզներ. կապում են Թիւրքական ճգնաժամը և Դարտանելի բացման յաւիտենական կնճիռը. ոմանք չափազանց հեռու են գնում՝ գուշակելով մօտալուտ և հիմնական յեղաշրջումն դիւանագիտութեան հաւատամքի ու ընթացքի մէջ և՝ իբրև դրա հետևանք... Թիւրքիոյ մօտալուտ հաշտեցարդարումը։

Այսպէս թէ այնպէս, դեռ շատ հեռու ենք բաղձալի խաղաղութիւնից—պատերազմի մոլորը միշտ աւելի և աւելի սրում է իր ժանիքները։ Մի վայրկեան քիչ մնաց, որ հրդեհը բորբոքւէր ամբողջ Բալկանեան թերակղզու վրայ, Մօնտենեգրօի և Թիւրքիոյ յարաբերութեան խզումով։ Առաջն առան. բայց յայտնի չէ, որքան ժամանակով։ Մակեդոնիայի վիճակը շարունակ զբաղեցնում է արիւնակից Բուլգարիային, Թիւրքական ռէժիմը այդ վայրում ևս ցոյց է տալիս իր կատարեալ անկարողութիւնը, ինչպէս Հայաստանում և հետզհետէ աւելի ու հաւանական է դառնում Բուլգարիայի գալոց զինուած միջամտութիւնը։ Մակեդոնական և բուլգարական ախորժակները աւելի ևս վառելու են Ալբանիայի ինքնօրինութեան նաճումով... Յամենայն դէպս, հաշտութիւնը և յարմարումը Թիւրք ռէժիմի հետ բնաւ չի նկատւում մակեդոնական բուլգարների մէջ, ևս առաւել չի լինի այսուհետև, Քօշանայի սոսկալի կոտորածից յետոյ։ Սոֆիայի կիսապաշտօն „Միր"ը յիշեալ կոտորածի առթիւ ցաւսումով բացականչում է, որ Թիւրք ռէժիմից ոչ մի յոյս չկայ, որ նա երբէք չպիտի կարողանայ բարեկարգել երկիրը, որ նոր Թիւրքերը հների պատճէնն են, նրանց հաւատարիմ սաները՝ ներքին, „ազգային քաղաքականութեան" մէջ, որ հետևապէս բալկանեան պետութիւնները պիտի ձեռք առնեն անհրաժեշտ միջոցներ՝ իրենց ցեղակիցներին ազատագրելու...

***

Արևելքը, սակայն, մտահոգութեան միակ կենտրոնը չէ եւրոպական դիւանագիտութեան համար։ Ցոռետեսները նախատեսնում են գալոց պատերազմը աւելի լայն հորիզոններում։ Եւ ի՞նչպէս չնախատեսել, երբ կատարւում է մեր աչքերի առջև այդ խոլական մրցութիւնը արևմտեան պետութիւնների միջև, այդ յարաճուն տենդը զինաւորման մէջ, զրահանաւերի այդ անվերջ բազմապատկումը իւրաքանչիւրի կողմից։ Անգամ Աւստրիան և Իտալիան տենդային կերպով սկսել են աճեցնել իրենց նաւատորմը՝ Միջերկրական Ծովի վրայ իրենց դիրքերը հաստատելու և պահպանելու համար։

Բայց ընդհանուր ուշադրութեան առարկան է—Գեր-

մանիան։ Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին ամենից աւելի անհանգիստ է անում գերմանական նաւատորմը, որ աճում է հսկայական քայլերով։ Այդ ահաւոր իրողութեան հանդէպ ամենից շատ մտատանջուողը Անգլիան է։ Պատճառները բացատրել ենք հանգամանօրէն „Դրօշակ"ի մի շարք յօդուածներում *)։

Վաղուց չէ տեսնուած մտքերի այնքան բուռն ալէկոծում նաւատորմի շուրջը բրիտանական կայսրութեան մէջ, ինչպէս վերջին ամիսները։ Պարլամենտի մէջ մի քանի մինիսարներ յաջորդաբար ճառեցին այդ հրատապ նիւթի մասին և փաստեցին նաւատորմն ուժեղացնելու անհրաժեշտութիւնը։ Մամուլը, հասարակական կարծիքը բուռն կերպով արծարծում են նոյն թեզը։ Ազատամիտ նախարարութիւնը, որ շատ բարեկամ չէ Զեմբերլէնների իմպերիալիստական ծրագիրների, գրեթէ էապէս նոյն քաղաքականութիւնն է բանեցնում այսօր, ինչ որ մղել են պահպանողական նախարարութիւնները։ Համաբրիտանական կայսրութիւնը վտանգի մէջ է—վտանգի մէջ է նրա հռչակաւոր և վիթխարի նաւատորմը։ Պէտք է այն դարձնել շատ աւելի մեծ, աւելի վիթխարի, որպէս զի ընդհարման պարագային կարողանայ տապալել մի քանի միացեալ հակառակորդների... Այլապէս, ասում են, Մեծ Բրիտանեան չի կարող պահպանել աշխարհածաւալ իր տիրապետութիւնը։

Գերմանիան ուժեղացնում է իր նաւատորմը հիւսիսում, իսկ նրա երկու դաշնակիցները—Աւստրիան, Իտալիան—ուժեղացնում են հարաւում, Միջերկրականի վրայ։ Անգլիան պէտք է այնքան զօրանայ, այն աստիճան պիտի աճեցնէ իր զրահանաւերի քանակը, որ կարողանայ ապագայում ամեն տեղ հասնել, ամեն տեղ զարնել յաղթականօրէն... Այնուամենայնիւ սեփական ուժերը չպիտի բաւեն, որքան էլ լինին մեծ ու ծաւալուն։ Եւ ահա Անգլիոյ քաղաքագէտները ձգտում են ստեղծել մի հոյակապ զինակցութիւն. ձգտումը նոր չէ. 7—8 տարի է արդէն, ինչ դարբնուել է հռչակաւոր *entente cordiale*-ը (մտերմական համաձայնութիւն) Անգլիայի և Ֆրանսիայի միջև, այնուհետև Ֆրանսիացիների դաշնակից Ռուսաստանը ևս քաշուել է այդ համաձայնութեան մէջ. այժմ ձգտում են երեքպետեան այդ համաձայնութիւնը վերածել մի ահեղ և ներդաշնակ նաւային բանակի։ Եւ այդ պէտք է լինի, ենթադրաբար, Պուանկարէի ուղևորութեան նպատակներից մինը...

Այո՛, հեռու ենք տակաւին խաղաղացումից։ Ժողովուրդների, բոլո՛ր ժողովուրդների պատերազմական տենդը մի ահարկու սլացք առաւ վերջին ամիսներում, Թիւրքական Արևելքը մեծ, չարաշուք հնոցն է, ուր բորբոքւում են միջպետական խորժակները ու մրցումները. պատերազմի ուրուականը ճախրում է և Արևելքում և Արևմուտքում, հնչում է ամենուրեք զօրաւոր բագոյնի վայրագ ճիչը, հնչում են դեռ վրէժխնդրութեան կրճտոցները, մի նոր մրրիկ կարող է անցնել քաղաքակիրթ աշխարհի վրայից, աւելի հսկայ և կործանիչ, քան բոլոր եղածները... Ամենքն էլ ձգտում են չո՞ր պահել իրենց վառօդը, վա՛յ այն ազգերին, որ կը մերժեն ամօթալի երկչոտութեամբ ինքնապաշտպանութեան հաւատամքը, վա՛յ նրանց, որ բացառութիւն կը կազմեն էգօիզմի, մարտական եսասիրութեան այդ ճարակող ուրագանի մէջ... *Vae victis!*

*) Տես „Գերմանական արշաւը և Թիւրքիոյ ճակատագիրը" վերնագրով յօդուածաշարքը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԴԱՒԻԹ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(«ԾՈՒՌ ԴԱՒԻԹ»)

—

1910 թ. յուլիսի 30-ին Վանի Արարատ հրապարակի վրայ, մի զզուելի դաւադրութեան զոհ գնաց մեր „Ծուռ Դաւիթ"ը—Դաշնակցութեան զինուորական շարքի ամենայանդուգն դէմքերից մէկը։

Դաւիթ Թումանեան

Դաւիթը բնիկ ալշավազցի էր, Վանի գաւառէն, գիւղի զաւակ, անգրագէտ, բայց զգայուն սրտով և իր ժողովրդի ցաւերին գիտակից։

Նա յարել է Դաշնակցութեանը մեծ կոտորածներից առաջ, աշխատել է դեռ Պետօի և Վազգէնի օրերում։

Զարդերէն վերջը, երբ 800 վասպուրականցի երիտասարդներ իրենց գերեզմանը գտան Գիւզալդարայի

լանջերում, և երբ քաղաքի մէջ մնացել էին „խոհեմ-ները“ իրենց հպատակութեան կոչերով, Դաւիթը դուրս էր մնացել այդ անկումից և չդիմանալով այդ լքման՝ անցել էր արտասահման։

Կոտորածները, հակառակ Համիդի երազներին, չեն դառնում յեղափոխութեան գերեզմանափորը, ընդհակառակը. Գիւզալդարայի զոհերը վրէժ էին աղաղակում — և վրէժը լուծուեց... „Խանասորի արշաւանքը“ նոր թափ ու ոգևորութիւն մտցրեց երկրի մէջ մնացած յեղափոխական փոքրիկ շրջանակների մէջ. պէտք էր վերակազմուել։ Դէպքերից յետոյ արտասահման անցած ուժերը կամաց-կամաց անցնում են երկիր. արդէն ճիշտ „Արշաւանքի“ օրերը Վազգէնի և Գուրգէնի և երկրացի բազմաթիւ ընկերների հետ առաջին խումբը մտնում է Վան։

Հարկաւոր էր նորէն ուժ ամբարել, հարկաւոր էր զէնք, իսկ այդ կը բերուէր արտասահմանէն, ամէն մի զէնքի համար յաճախ մի քանի մարդկային զոհեր տալով...

Եւ ահա՛ „Խանասորի արշաւանքի“ դպրոցի առաջին զինատար խումբը ճանապարհւում է Վան, յայտնի սպարապետի Շաշոի խմբապետութեամբ, որը Արշաւանքի քաջերէն մէկն է։

Դաւիթ արտասահման մնացողներէն չէ, երկիրը քաշում է նրան, և նա արդէն Շաշոի հետ է։

Խումբը մտնում է հէնց սահմանագլխից և կռիւ բռնում։ Ճանապարհած և չլսուած զինատար խմբերի պատմութեան մէջ—նրանք 8 օր գրեթէ անդադար կռուելով, առաջանում են դէպի Վան... կռիւները սարսափ են տարածում շրջանի մէջ. կռուողներից մի քանիսը իրար կորցնում են, նրանց մէջ էր Դաւիթը։ Լաւ ծարօթ լինելով շրջանին և ճանապարհին՝ նա զէնքերը պահելով, ուզում է մտնել Բաշկալէ, բայց դժբախտաբար բռնւում է։ Եւ սկսւում է Համիդեան ռէժիմի յատուկ բարբարոս ծեծը... Դաւիթը անյողդողդ է. բայց բան փրցնել բերնից չեն կարողանում. ընդհակառակը. գաղափարի և զէնքի մարդը յաղթանակում է։ Դաւիթը սկսում է բանտի մէջ իր սիրած քրդական երգը, որով գրաւում է բոլոր պաշտօնեաներին և քիւրդ բանտարկեալներին... Ծեծը վերջանում է, սկսւում է դատավարութիւն. արդիւնքը պարզ է. զէնքով դիմադրութիւնը կառավարութեան՝ արժանանում է „կախաղանի“, բայց օր աւուր սպասւող կախաղանի փոխարէն հասնում է ընդհանուր ներման լուրը։ Դաւիթ ազատ է և Վանում սուսիկ-փուսիկ զբաղւած է իր գործով. նա արհեստով պայտագործ էր։ Վերակազմութիւնը շարունակւում է. խմբերից յետոյ հասնում են ինտելիգենտ ուժերը։ Յեղափոխական կեանքը սկսում է տաքանալ Վանում. հասել է և Վարդգէսը... Դաւիթը արդէն նրա մօտ է... Յորեկը համեստ արհեստաւոր, գիշերը կարիճ Փէդայի—ահա Վանի մեր համեստ ընկերներից մի քանիսի մեծ արժանիքը։

Աշխատել միշտ լեգալ լինել, աշխատել բեռ չլինել կազմակերպութեան գլխուն, ընտանիք պահել և կուսակցական գործերն էլ տանել, ահա Դաւիթի և նման ընկերների թանկագին առաքինութիւնը։

Բայց այդ երկար չի տևում, մէկ երկու տարի և ահա ծայրը բացւում է, այս կամ այն ձևով։ Դաւիթը երկար չի կարողանում մնալ լեգալ վիճակի մէջ։ Կառավարութիւնը գործի վրայ է, նրա քունը խանգարւել է։ Գերեզմանները շարժւում են, մեռելները յարութիւն առնում, մեռած կարծւած յեղափոխութիւնը նորէն հասունանում է. բայց բռնակալները կոյր են, փոխանակ իսկական պատճառները հարւածելու, հետևանքներն են հարւածում...

Յեղափոխական խմորումը Վանի մէջ զգալի կերպով ուժեղացաւ Վարդգէսի գալէն վերջը։ Եւ կառավարութիւնը տրամաբանեց. ուրեմն յեղափոխութիւնը Վարդգէսն է, նրան մէջտեղից վերցնելով, յեղափոխութիւնն էլ կը մեռնի։

Վանը — ի մեծ ցաւ վանեցիների և ի մեծ դժբախտութիւն մեր շարժման — հարուստ է ոչ միայն լաւ յեղափոխականներով (Վազգէն, Աւետիսեան, Միքօ, Փոխուն, Ախպար և այլն), այլ մանաւանդ լաւ դաւաճաններով. պատճառների մէջ չենք մտնում...

Հայ մատնիչի օգնութեամբ Վարդգէսի տեղը մատնւում է, զօրքերը շրջապատում են Խամար քասանի, անկիւնի „Թուռչանց“ տունը, ուր գտնւում էր Վարդգէսը, միայն երկու զինւորներով։ Ցօների առթիւ տեղացի զինւորները տուն էին գնացել, իսկ դրսի ընկերներէն Գէորգ Զաւուշ (այդ ժամանակ մի քանի ընկերներով Վան էր), Վարդան-Շահպազ, Դաւիթ և ուրիշներ խմբով անցել էին Ալճաւազ՝ կազմակերպական գործով։

Վարդգէսը հասկանում է, որ շրջապատւած են. սենեակից դուրս ելնելով, կրակում են կտուրի վրայ կանգնած զինւորների վրայ, որոնք թափւում են փողոց։

Որոշում են փողոցի դուռը բանալ, յանկարծ գրոհ տալ, մեռնել և կամ ազատւել։ Դուռը բանալով ներսի ու դրսի կրակները իրար են զուգադիպւում, Վարդգէսը ոտէն զարկւում է, առաջանալ այլ ևս անկարելի է։ Զինւորների զէնքերը փճանում են, կրակել չի լինում։ Ստիպւած են դառնալ և փորձել տանիքների վրայով խուսափել. ելնում են տանիքը.—դրացու կտուրը մօտ է իրենց տանը. անցնել հեշտ է, բայց միւս կողմը հարկաւոր է վար ցատկել 6—8 մետր մի կտուր. զինւորները ցատկում են, նրանց հետևում է և Վարդգէսը, ոտի վերքէն ուշագնաց լինելով՝ մնում է տեղն ու տեղը... մնացածը յայտնի է. միւս օրը Վարդգէսը ձերբակալւում է։

Քաղաքը սարսափ է ընկնում, կոտորածների սարսափը դեռ թարմ էր։

Վարդան և Դաւիթ Ալճաւազէն կը դառնան՝ գործերը

ղեկավարելու։ Բայց նախ պէտք է դաւաճանը զարնել։

Դաւիթն է տերրորիստը։ Օրը ցերեկով, քաղաքի բանուկ փողոցի մէջ, դաշոյնի մի քանի հարուածով գետին է փռւում մանրիչ Խաչիկ Սէմէրճեանը։ Եւ սարսափը կրկնապատկւում է, կառավարութիւնը ամենախիստ միջոցների է դիմում տերրորիստին բռնելու համար։ Քաղաքացիք ահաբեկւած՝ չեն տալիս ապաստան և ահա մեր Վարդան-Հայպազը, Դաւիթը և միւս ընկերները ստիպւած են լեռ քաշւիլ Ձիւն-Ձմեռը, 3—4 մետր ձիւն մէջ ապրել շաբաթներով, Վարագայ լեռան քարանձաւներում, վայրի այծերի ընկերակցութեամբ, անօթի ու ծարաւ։ Իսկ վարը՝ քաղաքը կատարում է իր քրիստոնէական պարտականութիւնը տօների և խրախճանքների մէջ...

Դաւիթ փախստական է արդէն, զբաղւում է զէնքերի փոխադրութեամբ, զինւորական խմբեր կազմակերպելով, նորեկ ընկերներին գաւառ առաջնորդելով և այլն։ Սէմէրճեանի տերրորը Դաւիթի շուրջը նոր համակրանք և պաշտամունք է բերում. „Ծուռ Դաւօն“ արդէն ահ ու սարսափի նշանակ է. նրան սկսում են երգել, նա ինքն էլ հիւսում է Վարդգէսի բանտարկութեան և դաւաճանի սպանութեան առթիւ մի բրդերէն երգ, որ յետոյ այդ շրջանի քիւրդ ժողովրդի սիրած երգերից մէկն եղաւ։

1905 թ ամառն է. լսում է, որ Կովկասի մէջ կռիւ կայ, պահել չի լինում. գանգատւում է, թէ „Վանի պարոնները խաղաղասէր են, անունք կռիւ չեն ուզէր, աղէկ կ'ընեն, բայց ես առանց կռւի չեմ կ'նար մնալ, Կովկաս կերթամ“...

Եւ ահա նա Կովկաս է, հայ-թիւրքական ընդհարումների մէջ, միշտ քաջ, միշտ անձնուէր և միշտ մաքուր, մի բան, որ փոքր ինչ դժւար էր գտնւում այդ ժամանակ, սունկի պէս բուսած նորելուկ զինւորների մէջ։

Ընդհարումները վերջացած են, նա քաշւում է գործի՝ Բագու։ Սակայն պայթում է Վանի աղէտաւոր դաւաճանութիւնը (1908 թ.)։ Դաւիթը սահմանագլուխն է, խմբի հետ պատրաստւում է Վան մտնել։ Ուշ էր. սահմանագրութիւնը երկնքից շուտ հասաւ, մեզ և իրենց փրկելու համար։ Բայց նա արդէն Վան է. միշտ նոյն ձգտումներով, նոյն կորովով և անձնուիրութեամբ։ Իր ընտանիքի հացը հայթայթելու համար՝ նա զբաղւած է իր գործով և հարկաւոր դէպքում կազմակերպութեան։ Եւ այդ օրերից մինչև իր մահուան օրը՝ նա մնաց Վանի կազմակերպութեան պահպան հրեշտակը. նա է Վռամեանի հետ ամեն տեղ. նա է գաւառների ամեն անկիւն վազողը. նա է մարտ 31-ի ըէակսիոնի օրը շուկայ վազողը և ժողովրդին ամենավտանգաւոր ճանապարհով Այգեստան առաջնորդողը։

***

Վանի ղեկավար ընկերները երբէք չեն մոռանայ Դաւիթի հերոսական ժեստերէն մէկը հայկական ըէակսիոնի օրերին։ Վանի ամբոխը կատաղել էր մի հրապարակային դասախօսութեան առթիւ, ուր վիճաբանութեան ժամանակ երիտասարդ ուսուցիչներից մէկը հակակրօնական դիտողութիւններ էր արել։ Սկսւում է արշաւանքը նախ երիտասարդութեան և ապա կուսակցութեան դէմ։ Այգեստանի մէջ „նոր սերնդականների“ որս էր. ամբոխը թաղեր ընկած երիտասարդներ կը փնտռէին „ի խաչ հանելու“ համար։ Շատերը կուշտ ծեծւում ու վիրաւորւում են. երեկոյեան դէմ ինտրիգներով լարւած ամբոխը հաւաքւում է Դաշնակցութեան կլուբի առաջ, աղաղակելով, թէ „կլուբը անաստուածութեան բոյն է, թէ գրքերը պէտք է վառենք“ և այլն։ Վռամեանը վրայ է հասնում, բայց նրա յորդորներն ու սպառնալիքները զուր են անցնում, նրան ևս սպառնում են ատրճանակով. վերջապէս ոստիկանութիւնն է վրայ հասնում, ամբոխը ցրւում, „երիտասարդ“ աստուածներից մի քանիսին բռնում, իսկ գործը յանձնւում է հայոց առաջնորդարանին, իբրև կրօնի ներկայացուցչի։

Միւս օրը ամբոխը նորէն կլուբի առջև է. քաղաքի շուկայում կոչ է եղել. „Աստուած սիրողը այսօր խանութ չբանայ և առաջնորդարան գայ“։ Ամբոխը պահանջում է, որ ինքը անձամբ առաջնորդարան տանի երիտասարդներին, դատելու համար, սպառնում է գրադարանի դռները կոտրել... Դաւիթը նախընթաց օրը քաղաքում չէր. նոյն գիշերը պատահաբար դարձել էր. միւս օրը նա էլ կլուբի մէջ է, ամբոխը նրան գիտէ։ Երբ պահանջը կրկնւում է, նա տասնոց ատրճանակը քաշած մէջտեղ է նետւում գոռալով. „Ով որ համարձակւի կլուբի դռան մօտենալ, դիակը գետին կը փռւի“...

Ամբոխը ցրւում է, քաշւելով առաջնորդարանի առաջ։ Երիտասարդները Դաւիթի ուղեկցութեամբ առաջնորդարան են գնում... Ցեսարանը յիշեցնում է Հռոմի մէջ 1600 թւին տեղի ունեցած Ջորդանո Բրունոյի դատը։ Խե՜ղճ վանեցի պատանիները, առանց Բրունօ լինելու, նրա պէս անմահացան այդ օրը... Կրօնական ծողովը սկսել է դատը. շուկայի հազարաւոր ամբոխը կուտակւել է Առաջնորդարանի առջև և կուզէ ուժով վեր ելնել ու իր ցանկալի ուղղութիւնը տալ դատին։

Դաւիթը նորէն մէջտեղ է, մի բարձր քարի վրայ. „Ծօ՛, դուք Աստուած կը պաշտպանէք, ծօ, դուք աստուածավա՞խ էք, հապա՛ ձեզ հետ ի՞նչ գործ ունի դաւաճան Դաւօի հայրը, դաւաճան Ամին, սրիկայ կոռուպուճեր, ծօ դուք աստուածավա՞խ էք, ձեր...“։ Եւ ատրճանակը քաշում է ու ամբոխի մէջ նետւում։ Ամբոխը, ամօթահար, քաշւում է Ս. Նշանակի եկեղեցին՝ միտինգի։ Ծողովը տալիս է իր դատավճիռը. երիտասարդներից մի քանիսը դատապարտւում են. „զրկել ազգային իրա-

ունքներէն և ազգային վարժարաններու մէջ պաշտօնավարելէ"...

Եւ կրօնական պրօբլեմը դրանով լուծուած կարծեցին...

Այնուհետև Դաւիթն եղաւ ժողովրդի, երիտասարդութեան պաշտամունքի առարկայ։ Եւ այդ՝ առանց բաժանելու երիտասարդների հայեացքները։ Կուսակցութեան դէմ պայքար կար, պէտք էր չէզոքացնել հարուածները և ապա ներսը մաքրել ներքին վէճերը։

Իրաւունք ունէր Դաւիթի մահը „Դրօշակ"ի խմբագրութեան հաղորդող ընկերը, երբ նա ասում էր. „Սա մի չափազանց դժգոյն նկարագրութիւն է, եթէ ինկատի ունենանք Դաւիթին իր ծայրայեղ կորովով, յանդգնութեամբ, զոհաբերութեամբ։ Նա մի անձնաւորութիւն էր, որ յեղափոխական ժամանակներում սարսափ էր ազդում թշնամիներին, խաղաղ ատեն պատկառանք և նրա մահով մենք չկորցրինք մի սոսկ մարդ, այլ մի անձ, որ յիշեցնում էր իր ներկայութեամբ մի ամբողջ շրջան։ Նա գնաց. նրան փոխարինել դժուար կը լինի"...

Այո, նա գնաց պառկելու Արարատ գերեզմանատանը՝ Վազգէնի, Միքօի, Արշակի, Ցարութիւնի, Ռուբէնի քով... Եւ այդ գերեզմանները կը դառնան ուխտատեղի յեղափոխական հաւատացեալների համար։

ԱՐԱՄ

ԹԵՐԹՕՆ

ՈՐՊԷՍ ՀԷՔԻԱԹ

I

ՍԵՒ ՁԻԱՒՈՐԸ

Ա.

Շոգ ամառ էր.

Ճաշը վաղուց անցել էր, բայց արևը դեռ շարունակում էր թափել երկնքից կիզիչ շողեր, որպէս հալուած կապարի ցնցուղներ։

Գիւղն ամայի էր, փողոցները՝ թափուր. կրակ կարած մթնոլորտը բոց մշուշով խաղում էր տափակ կտուրների ու խոտի խանձուած դէզերի վրայ։ Վաղ առաւօտից՝ հօտ ու հովիւ քաշել էին սարերը, և մշակ ու հնձուոր արտերում, մարգերում աշխատանքի դուրս եկել։

Խրճիթներից քիչ հեռու, կանաչ բլրի լանջին, ուր մի աղբիւր էր կարկաչում, ու մի քանի ուռիներ զով ստուեր էին տարածում, նստած էին մի խումբ կանայք օրուայ խեղդող տօթը վանելու համար։ Նրանց չորս կողմը բազմաթիւ մեծ ու փոքր մանուկներ՝ կիսամերկ, գլխաբաց ու ոտաբոբիկ, բայց ժպտուն, անհոգ ու չարաճճի թաւալ էին տուել գետնին, փոշիների մէջ, իրար քաշքշում էին ու քրքջում։ Ապա մէկէն նրանք վեր ցատկեցին որսալու համար այն երկու թիթեռներին, որոնք իրար համբոյր տալով՝ մերթ թաղւում էին ուռիների զով սաղարդի մէջ, մերթ յայտնւում, միշտ տարփագին, միշտ սիրազեղ ու հմայիչ։ Սակայն թիթեռները վտանգն զգալով բլուրն ի վեր խոյս տուին, քաշ տալով իրենց յետևից կանչերտող փոքրիկների ամբողջ խումբը։ Մի վայրկեան կանաչ մարգագետինը թնդաց ուրախ ճիչերով, գանգրահեր գլուխներն ու երփներանգ թիթեռները պտոյտներ գործեցին արևի շողերով ողկեզծ, յետոյ խումբը հևիհև յետ եկաւ յաղթական—ամենից ճարպիկները թիթեռների թևերից բռնած բերում էին։ Ու փետեցին գժբախտ, թրթռուն միջատների մի մի թևը, վար դրիր գետին նրանց դողդողուն եթերային մարմինները. ու խելայեղօրէն քրքջում էին, զւարճանում, երբ ջինջ եթերի, արձակ հովերի, բուրաւէտ ծաղիկների հետ խաղացող թիթեռները, թևակոտոր ու խղճուկ, որպէս վաղաժամ խամրած երազներ, սողում էին փոշիների մէջ անօգուտ ճիգեր թափելով նորից սլանալ դէպի կապոյտ անհունը։

Ապա մանուկները ձանձրացած՝ նրանց մի մի թևն էլ կտրեցին և վերջում ջարդեցին թաթերով։

Այսպէս մեռան թիթեռները մի արևոտ օր, երբ որ այնքան շող ու բոյր կար երկնում... Եւ մանուկները ցնծում էին, մանուկները երջանիկ էին։

Նրանց մայրերն՝ այն գեղջուկ նազանքով, որ ժողովրդի կնոջ անարուեստ զարդն է, ուռիների ստուերում փռել էին իրենց գեղն ու հրապոյրները անհոգ և փարթամ, որպէս մայր բնութիւնը։ Ով գիտէ, ո՞ր ձորից, ո՞ր լեռնակատարից մոլորուած հովը սուրում էր այստեղ, մի վայրկեան զով համբոյր էր տալիս մեղկօրէն մերկ սրունքներին, կիսաբաց լանջերին ու մարմար պարանոցներին, վշվշում էր ուռիների սաղարդի մէջ, ապա անցնում, որպէս մի չքնաղ պատրանք։

Կանայք զրոյց էին անում ու աշխատում։ Մէկը հանդարտ կարում էր մի կտաւէ շապիկ. երկուսը եռանդով բուրդ էին գզում սանդերքի վրայ։ Նրանցից քիչ հեռու երկու ջահել հարսներ, երեսների կարմիր քօղը կիսով չափ բարձրացրած՝ նուրբ ու վարժ մատներով գուլպաներ էին գործում և իրենց միայն լսելի շշնջիւնով պատմում իրար հարսնութեան գաղտնիքներն ու արբեցուցիչ յոյզերը։ Պառաւ Եղսանի կողքին, երեք հարսները միաժամանակ շուլուլում էին մի կտաւէ վերմակ, մինչդեռ չորրորդ հարսը կերակրում էր օրօրոցի փոքրիկ մանկանը։

Ամենից բարձր սակայն պառաւ Եղսանի ձայնն էր լսւում։ Քանի օր առաջ հեռաւոր գիւղում մի աղջիկ էին փախցրել հարսամիները, և այդ առթիւ պառաւը պատմում էր բոլոր հին ու նոր նման անցքերը, որ երբ և իցէ ապրել էր գիւղը։ Ու կռիւներ էին նրա զրոյցները, արիւնահեղ ընդհարումներ, սպանութիւններ,

կորած, անյայտ հերոսութիւններ, անծայր ու գալարուն, որպէս անիրաւ կեանքը մեր աշխարհի։ Այսօր թարմ անցքի տպաւորութեան տակ, առանձնապէս ուժգին շեշտեր էր գտել պառաւ Եղսանը ուկնդրուհիներին յուզելու համար։ Եւ երբ հասաւ „Սև Ձիաւորին“ քար լռութիւն իջաւ ուռենին'րի տակ։ Մանուկներն իսկ դադարեցին իրար քաշքշելուց ու բերանաբաց, աչքերը՝ խոհուն, ականջ էին դնում անձայն։

— Հա՛յ, տունդ աւերւի, Սև Ձիաւոր, ո՞ւր ես, դու էլ մի տղամարդ էիր, եկար աշխարհ ու գնացիր... ո՞ւր ես, չէ՞ ասում են սև օրերին դու էլի մեր սարերում երևում ես քո հրեղէն ձիով...

Աղբիւրը կարկաչում էր. ուռիները փսփսում էին մեղմիւ և հեռուն, դաշտ, սար ու ձոր մի անծայր յօրանջով հևում էին բարկ մշուշի մէջ։

— Էսպէս օրօրոցի երեխայ էր, շարունակեց Եղսանը, մայրը կաթ չունէր, քանի անգամ բերել է ծիծ եմ աւել, հազար երանի՞... առիւծի ձագի պէս էր ծծում ստինքներս... յետոյ մեծացաւ..

Պառաւը յանկարծ լռեց, ու սկսեց արագ արագ ձեռքի թեշին պտտել, երբ հանդիպակաց խրճիթից դուրս եկաւ մի ջահիլ կին, որ նայեց ուռիների տակ նստած խմբին ու կանգ առաւ։ Նա բարեձև, շնորհալի հասակ ունէր ու գեղանիստ, գալար իրան, որի փարթամ ձևերը չէր կարողանում աւրել նրա անպաճոյճ զգեստը։ Սև լաչակի տակ գունատ դէմքը, տրտմօրէն անուշ, վաղաժամ խամրած ծաղկի պէս կրում էր իր վրայ մի լուռ ու մխացող վիշտ. և աչքերը խորունկ ու երազուն՝ անդառնալի մի կորուստ փնտրողի տեսքն ունէին։

Կանանց խմբի մէջ խեղդւած շշուկ բարձրացաւ և անցաւ մի ծայրից՝ միւսը։ Ա՞յդ նկատեց արդեօք, թէ՞ մի այլ մտածումով, մեծաւոր կինը ըստ երևոյթին փոխեց իր մտադրութիւնը, չ'առաջացաւ դէպի ուռիները, նստեց խրճիթի դռան սաւերապատ թմբի վրայ, յետ արեց լաչակը, բաց ձգեց լանջը, մի փոքր զով առնելու համար, և գլուխը քաշ՝ սկսեց հանդարտ գործել ձեռքի փոքրիկ թասագը։ Ուռիների տակից դէպի նա սլացաւ մի վեց-եօթ տարեկան մանուկ, հասաւ մեծաւոր կնոջը ու խանդաղատագին փարեց նրա պարանոցով։ Մայրը հմբուրեց զաւակին ջերմօրէն ու նրա արևաւ այտերը ափերի մէջ բռնած՝ երկար նայում էր աչքերին։

Վաղքից ու շոգից յոգնած երեխան գլուխը մօր ծնկանը դրեց ու պառկեց, խոհուն հայեացքը դէպի վեր յառած։ Թուխ դէմք ունէր նա, պայծառ իմացական աչքեր և սև հարուստ խոպոպներ, որոնց ծայրերը արևից խանձւած՝ հասած հասկի պէս դեղնել էին։ Մայրը նրա գլուխը քնքշօրէն տեղաւորեց ծնկանը, մատները թաղեց թաւ մազերի մէջ, գուրգուրեց, բացեց լայն, բարձր ճակատը, քրտինքը սրբեց, կռացաւ կրկին հմբուրեց, ապա լռելեայն վերսկսեց աշխատանքը։

Երեխան նայում էր մօր ձեռագործին, բայց մտքերը հեռու էին, ու աչքերի մէջ մի անյագ հետաքրքրութիւն էր փայլում։

— Մա՛յրիկ, Սև Ձիաւորն ո՞վ է, ասաց նա յանկարծ։

Մայրը շարունակեց՝ ընդհատեց աշխատանքը, կռացաւ զաւակի դէմքին, լուռ նայում էր։

— Ա՜խ, ջանիդ մեռնիմ բալա. ու նա խորունկ ախ քաշեց։

— Մայրիկ, Եղսան մարէն ա՛յ էնտեղ Սև Ձիաւորն էր պատմում, յետոյ դու որ դուրս եկար, սուս կացաւ, բոլորն էլ սուս կացան, յետոյ ինձ նայեցին, էլի բաներ ասացին... ու ես էլ եկայ... Մա՛յրիկ, գիտե՞ս, սարից էն կողմը, հեռու, չեմ իմանում ո՞րտեղ, մի աղջիկ են փախցրել, Եղսան մարէն ասաց՝ „Սև Ձիաւոր ո՞ւր ես“... Մայրիկ ջան, ո՞վ է Սև Ձիաւորը։

— Հէքիաթ է, բալա՛ ջան, Սև Ձիաւորը, հէքիաթ, հանգստացիր, քրտնած ես, յոգնած։

— Մայրիկ, ես ուզում եմ, որ դու ինձ Սև Ձիաւորը պատմես։

Մայրը վերստին լռեց, և իր պրպտողի հայեացքը ուղղեց հեռուն. երևի յուշերը ծանր էին, աչքերը արագ-արագ թարթում էին՝ եռացող արցունքները զսպելու համար։

— Քնի՛ր բալաս, թող ես էլ թասագը գործեմ, ասաց նա փոխւած ձայնով։

— Մայրի՜կ... երեխայի ձայնը դողաց. նա յամառաբար Սև Ձիաւորի հէքիաթն էր ուզում։

Ուռիների վրայ զարկւեց ճնճղուկների մի ամբողջ երամ. նրանք ոստոստում էին ու ճռւողում. կանաչ ու կարմիր բզէզները լողում էին արևի ոսկէ շողերի մէջ. շատ վերև՝ զով բարձունքում, երկու արագիլ սաւառնում էին անվերջ շրջաններով. կանայք զրուցում էին ցածրաձայն։ Եւ մեծաւոր կինը՝ անուշադիր դէպի բոլորը՝ մեղմիւ պատմում էր զաւակին Սև Ձիաւորը։

Բ.

— Սև Ձիաւորը, բալա ջան, ասում էր նա կերկերուն ձայնով, բոյ ու բուսաթով տղամարդ էր. նա սև մազեր ունէր, սև աչքեր, ու երբ սուրը կողքին, հրացանը մէջքին, հեծնում էր իր ձին ու անցնում գիւղով, բոլորը դուրս էին թափւում նրան նայելու։ Ձին խաղում էր նրա տակ, խրխնջում, փնչացնում, ու ոտներով փոշի էր հանում ամպի պէս։ Ցերեկով էլ էր գնում Սև Ձիաւորը, գիշերով էլ. սար ու ձորի տէրն էր, ոչ ոքից վախ չունէր, աւազակները նրա անունից դողում էին։

Էսպէս էր Սև Ձիաւորը։

Ու մի անգամ հաւար եկաւ դաշտից, թէ մի աղջիկ տարան։

— Ո՞վ տարաւ մա՛յրիկ։

— Հարամիները, բա՛լա ջան. մեր սարերում շատ հարամիներ կան. նրանք աղջիկ են փախցնում, մարդ են սպանում, թալանում, աւազակներ են. խաբար եկաւ, թէ աղջիկ փախցրին դաշտից։ Սև Ձիաւորը ամենից առաջ հասաւ հաւարին. այ, էնտեղից անցաւ, էն լէն ճամբով. էլի ձին խրխնջում էր ու վիշապի պէս գնում։

Գնաց հասաւ հարամիներին. նրանք շատ էին։

— Հէ՛յ, քաֆուրներ, պոռաց, ո՞ւր կը պրծնէք իմ ձեռից, ցած դրէք աղջիկը։

— „Հէ, ասաց հարամին, դու ինձ չես հասնի“. ու աղջիկը ձիու թամբին պինդ բռնած, քշում է, հա քշում, իսկ Սև Ձիաւորը նրա յետևից հասուէ հաս։

— Հէ՞յ, աղջի, պոռաց Սև Ձիաւորը, թեքւիր, թեքւիր մի կողմի։

Աղջիկը լսեց, կռացաւ, քաշ ընկաւ ձիուց. հարամու թիկունքը բացւեց. Սև Ձիաւորը քաշեց հրացանը, նշան մտաւ, զարկեց հարամու մէջքից. հարամին ընկաւ, ընկերները փախան, աղջիկն ազատւեց։

Էսպէս էր Սև Ձիաւորը. նա առաւ աղջկան, գիւղ բերեց, յետոյ եօթն օր եօթ գիշեր հարսանիք արին ու նրանց պսակեցին։

Մայրը խորը հառաչեց ու լռեց։

— Յետոյ ի՞նչ եղաւ Սև Ձիաւորը, մայրիկ։

— Սև Ձիաւորն էլ չկայ, բալա՛ ջան։

— Ի՞նչ եղաւ մայրիկ Սև Ձիաւորը։

— Մի օր էլ հաւար եկաւ, շարունակեց մայրը, թէ գիւղի նախիրը տարան աւազակները. Սև Ձիաւորն էլի գնաց նրանց վրայ, կրակի պէս գնաց։ Յետոյ՝ ուշ գիշեր էր, որ ձին մենակ եկաւ, սև ձին. եկաւ հասաւ քրտինքի մէջ կորած, խրխնջալով կանգնեց դրան առաջ, փնչացնում էր, ոտները գետին տալիս ու լալիս. տէրը չկար. ձորերի մէջ մի անիրաւ գնդակ էր դիպել Սև Ձիաւորին ու նա ընկել էր հեռու, հեռու մի սարալանջի։ Էսպէս մեռաւ Սև Ձիաւորը բալա ջան, հարիմները զարկեցին։

Կրկին լռութիւն տիրեց...

— Մա՛յրիկ դու ինչո՞ւ ես լալիս։

— Ե՞ս... ես չեմ լալիս, բալա։

— Ա՛յ, աչքիդ արցունք կայ։

Մայրը շտապով սրբեց գոգնոցով արցունքի խոշոր կաթիլը, որ քաշ էր ընկել աչքից և իր մութ վիշտը մատնել զաւակին. ապա դարձեալ մատները նրա մազերի մէջ թաղեց, բացեց ճակատը, նայեց, նայեց, կռացաւ համբուրեց այնպէս տարփոտ գորովով, որ երեխայի հոգին սարսռեց։

— Մայրիկ, երբ ես մեծանամ, ինձ համար մի սև ձի կ՚առնեմ։

Ու երեխայի աչքերը վառւում էին յափշտակութեան բոցով։

— Ա՜խ, բալա ջան, սև չէ, սպիտակ ձի, ամպի պէս ճերմակ։

— Չէ՛, ես սև եմ ուզում, սևը լաւ է վազում։

— Սևը դուշմանիդ, ճերմակ ձի, ճերմակ ձի, քեզ մատաղ։

Մանուկը գլուխը տարուբերեց. նա համաձայն չէր. նա դեռ երկար նայում էր հեռուն, երկար խորհում էր իր մանուկ խոհերը, որոնք առնական ծանրութիւն ունէին իրենց անորոշութեան մէջ, ապա կամաց կամաց թերթերունքները քաշ ընկան ու նա նիրհեց երազելով սև ձին, մութ ձորերն ու գիշերները ահաւոր։

Գ.

Արևը հանդարտ իջաւ դէպի մուտքը. սաւերները երկարացան ու կախուեցին սարերից. մենաւոր կինը դեռ իր տեղումն էր ու երեխան ծնկին՝ քնում էր մուշ մուշ։ Մայրը գործը թողած՝ անթարթ նայում էր զաւակին, նրա խուփ աչքերին, պայծառ ճակատին, կիսաբաց շրթունքներին, լսում էր նրա եթերային շնչառութիւնը, և զգում էր այդ սիրուն գլխի ջերմութիւնը, որ ծնկից բարձրանալով՝ տարածւում էր ամբողջ մարմնով և իր մատաղ ու վիրաւոր մայրութիւնը փոթորկում։ ստինքների մէջ քնքոյշ յոյզերի բոցը սփռում։

— Քնի՛ր բալա, մեծցի՛ր բալա, արևիդ մեռնեմ, մրմնջում էր նա։

Եւ այդ „սիրուն բալայի“ առնական ապագայի հեա՝ նա ո՛չ մի որոշ մտապատկեր կապած չունէր. մայրութիւնն էր միայն, որ բնազդօրէն տենչում էր իր զաւակը տեսնել տղամարդ, յաղթակազմ, հուժկու տղամարդ։ Ու երբէք նա չէր ասել որդուն թէ, „Սև Ձիաւորը“ նրա հայրն է, իր քաջարի ամուսինը, երբէք չէր ասել, որ աւազակների ձեռքից խլած աղջիկը՝ հէնց ինքն է, այս վշտաբեկ այրին։ Չէր ասել, որ այն հոյակապ հերոսի սուգն է կրում տարրներից ի վեր։ Լռելեայն ու գաղտնի արցունքով նա համբուրել էր զաւակի պայծառ աչքերը, ուր հոր իմացականութիւնն էր փայլում, նրա բարձրագիր ճակատը, ուր նրա հպարտ արիութիւնն էր թառած, նուրբ շրթունքները, ուր հոր անընկճելի կամքն էր թրթռում։ Վրէժի կարմիր թոյնը չէր քամել իր զաւակի մատաղ հոգում, և ոչ հոր առնական կորովը ու անձնուրաց առաքինութիւնները շշնջացել նրա ականջին։ Ո՛չ, Նազանը չէր ուզում, որ զաւակը հոր ճամբով գնայ, այդ ճամբան շատ էր քարքարոտ, փշոտ, արիւնոտ. թո՛ղ մեծանայ զաւակը հէնց այնպէս, ինչպէս անտառի կաղնին... իր մոր համար։

— Քնի՛ր բալա, մեծցի՛ր բալա... չէ՛, չէ՛ սև ձին չեմ ուզում, արևիդ մեռնիմ...

Արդէն երեկոյ էր։

Ուռիների տակից կանայք հետզհետէ քաշւեցին, դաշտից դարձող աշխատաւորներին հոգալու. թեթև հովը օրօրում էր ուռիների դալար ոստերը. աղբիւրը քրքջում

էր միակերպ ու անծայր. և մանուկը դեռ քնում էր այնպէս խորն ու այնպէս անուշ և մայրը ակնապիշ ու հմայուած՝ նայում էր նրա կիսաբաց շրթունքներին, որոնց վրայ մի քանի անգամ երազի պէս դիւթիչ ժպիտ խաղաց ու անցաւ, նայում էր այդ անմեղ հրեշտակային դէմքին. ու խորհում էր Սև Ձիաւորի մասին, որ մի օր սև ճամբով գնաց այլ ևս երբէք յետ չգալու համար։

Ա՛խ այդ ճամբան, արիւն-արցունքի զուլում ճամբայ...

Հօրից յետոյ նաև զաւա՞կը.. սև ձիու վրա՞յ... նոյն զուլում ճամբո՞վ... Ու վախով յիշեց, թէ ինչպէս վառուում էին փոքրիկի աչքերը, երբ սև ձի էր ուզում քիչ առաջ. յետոյ՝ այնպէս նման է հօրը, այնպէս նմա՞ն...

— Չէ՛, չէ, սև ձին չեմ ուզում, մրմնջում էր նա։ Ե՛ւ հպարտ էր, որ հօրն է նման զաւակը, և՛ դողում էր, վախում էր, որ այդպէս է...

Յետոյ մի այլ պատկեր եկաւ խռովելու նրա հոգին. մի կորիճ երիտասարդ, որ չորս տարուց ի վեր, իր կինը կորցրած՝ Նազանի ձեռքն է խնդրում։ Սև Ձիաւորի պէս չէ նա — ո՞վ կը լինի Սև Ձիաւոր, նա մի զարմանալի հէքիաթ էր, եկաւ ու անցաւ — բայց գիւղի ամենէն ընտիր, ամենէն սրտոտ տղամարդն է Օհանը։ Եւ նրան գուցէ կարողանար տալ իր ձեռքը Նազանը, եթէ Սև Ձիաւորն այնպէս պինդ նստած չլինէր նրա սրտում և այնպէս յամառաբար չը պահէր իր տեղը նրա հոգում։ Յետոյ զաւակը կար, այս չքնաղ մանուկը, որ իր աչքերի մէջ, իր ճակատի ու շրթունքների վրայ հօր պատկերն էր կրում ու խրճթի մէջ, նրա կողքին նրա նուիրական յուշերը կենդանի պահում։

Այնպէս հզօր են մեծ մեռելները...

Եւ Նազանն սպասում էր, որ ժամանակը մեղմացնի վէրքերի կսկիծը, ճամբայ հարթի մի նոր բախտի համար։

Սպասում էր և՛ Օհանը։

Նրանք փոխանակում էին լուռ, նշանակալից հայեացքներ միայն, իսկ գիւղը շշնչում էր, կանայք յօրինում էին հազար ու մի զրոյցներ։ Տարիներն անցնում էին սակայն և Նազանի գլխից այրիութեան քօղը չէր վերանում, միայն մանուկն էր օր աւուր աճում ու զօրանում և մայրը հսկում էր նրա վրայ, որպէս արծիւն իր ձագին։

— Քնի՛ր բալա, մեծցիր բալա, արևիդ մեռնեմ։

Եւ մանուկը քնում էր մուշ մուշ, ու սև ձիու թիկունքին նա տարուում էր դաշտերով, ձորերով, հովը շոյում էր նրա ճակատը, ձին թռչում էր, ձին սլանում էր վիշապի պէս, փոշին բարձրանում էր ամպերով ու մանուկը երջանիկ էր, մանուկը ժպտում էր հեռաւոր երազներին, ու ճամբան վերջ չունէր, ու ձոր ու դաշտ անծայր էին... Եւ նրանից հեռու մի մարդ էր գնում, մի ահագին հսկայ, նոյնպէս սև ձիով, նրա առաջ լեռները իրենց մէջքերն էին ծռում որպէս ծեծուած շներ, և ձիու ոտների տակից կայծեր էին ցայտում կրակի փունջերով...

Դ.

Արևն իսպառ ծածկուեց։

Արևմուտքը ողջ լողում էր երփներանգ ցոլքերի մէջ և լեռների թիկունքից կարմիր լոյսերի հսկայական խուրձեր էին ժայթքում դէպի երկնքի ճակատը։ Ցեղյեղուկ ու շառագոյն ամպեր, որպէս կարմիր յուշերի երերուն կարաւան, թրթռում էին լեռնակատարներին, ապա կամացուկ լուծուում հսկայական հրդեհի ծոցում։

Աղջկերանց խմբերը դարձան դաշտերից երգ ու ծիծաղով և իրենց հետ դէպի անհամբոյր ու խղճուկ խրճիթները բերին լայնարձակ, դիւթիչ բնութեան խինդն ու բոյրը։ Հնձւորների դանդաղ յոգնաշխատ շարանը յայտնուեց դաշտերի ճամբին ու նրանց գերանդիներն ու մանգաղները վերջալոյսի բոսոր ցոլքերի տակ կայծկլատացին։

Նախիրը դեռ չկար և ոչ հօտերը ոչխարի. տանտիկիններն ի զուր էին սպասում կովկիթները ձեռներին։

Ու յանկարծ՝ հաւար բրդաւ.

„Նախիրը տարան դաշտից, ոչխարը քշեցին հարամիները“...

Գիւղում խուճապ սկսուեց։

Աղմուկ, կանչ, օգնութեան ճիչեր... Կանայք կտուրները բարձրացան, տղամարդիկ դէպի դաշտ վազեցին, զինուած՝ ով ինչով կարող էր։ Նազանը ցնցուեց. երեխան զարթնեց, բացեց իր խոշոր աչքերը, ուր դեռ լողում էին երազները, ու քնաթաթախ հայեացքով նայում էր իր շուրջը։ Մայրը գրկեց նրան, սղմեց կրծքին այնպէս պինդ, պինդ, ասես սկսած շփոթն ու իրարանցումը նրա զաւակը խլելու համար լինէր։

Հեռու ձորերում ճարճատեցին հրացանները. լեռները տնքացին մահասարսուռ արձագանքներով, իսկ գիւղում եկեղեցու զանգը հնչեց դողդոջ ու գալարուն, աղօթք ու լաց, անէծք ու օրհնութիւն իրար խառնուեցին։

— Մայրիկ էս ի՞նչ է։

— Ոչինչ բալա, էդ ամպերն են գոռում սարերում։

Նազանը դողդողում էր և սղմում, սղմում զաւակին գրկի մէջ։

— Մա՛յրիկ, էս ի՞նչ լացի ձայն է, այ էնաեղ։

— Պառաւ Հէրիքի կովերն են կորել բալա, ու նա լալիս է։

— Մա՛յրիկ, գիտե՞ս, ես երազիս տեսայ Սև Ձիաւորին, նա գնում էր, ես էլ յետևից, ես էլ ձիով, սև ձիով.

Ու մայրը վերստին երկիւղով տեսաւ զաւակի երազուն, քնաթաթախ աչքերում ծանօթ կրակը, որպէս հեռաւոր մշուշի մէջ փայլող թրթռուն բոց։

— Սո՛ւս, բալա ջան, սո՛ւս...

Մշուշը թանձրացաւ, խաւարը պատեց արար-աշխարհ, Նազանը դեռ իր տեղումն էր, երեխան պինդ սղմած

կրծքին, աչքերը՝ կիսախուփ, հոգին՝ ալէծոով, երևակայում էր այն Սև Ձիաւորը, որ ասում են, ամեն անգամ երևում է ձորերում, հենց որ գիւղին ազէտ է պատահում։

Սև խաւարը պատել էր գիւղն ու շրջակայքը։ Հրացանների ձայները դադարեցին, հօտ ու նախիր անհետ կորան, գիւղացիք յետ եկան և իրենց հետ բերեցին մի դիակ։

Օհանն էր սպանուած...

Նազանը կանգնել էր խրճիթ ներս մտնելու համար, ու քարացաւ իր տեղում, երբ գիւղի կենտրօնում բարձրացաւ Օհանի մօր լացն ու ողբը։

Նազանը ծնօտի տակ պինդ ամրացրեց կրկնակի այրիութեան քօղը։

— Էլի՛, էլի՛... մրմնջում էր նա, ու ոտները դողդողացին վշտի այս նոր բեռի ծանրութիւնից, նա յետ յետ գնաց, թիկունքը պատին տուեց, ձեռքերը ջղայնօրէն տարածեց խաւարի մէջ, ու դժուար էր իմանալ. աղօթում է նա, աղերսում, թէ անիծում։ Կուրծքը յուզմունքից ալէկոծ, բիբերը լայնացած, նա անթարթ նայում էր մութ հեռուն, ուր ինչ որ անորոշ ձևեր, խօլական ստուերներ գալարուում էին, բարձրանում, իջնում ու առաջ սլանում, որպէս մրրկի շնչով հալածական։

Նրա շները ոռնում էին չարագուշակ ու այլանդակ։

— Մա՛յրիկ, ի՞նչ մութ է, տուն մտնենք, մրմնջում էր երեխան մօր փէշերին կպած։ Մայրը չէր լսում. նա աջ ձեռքով ծածկել էր աչքերը շտեսնելու համար ահաւոր տեսիլքը, ու խօսում էր ինքնիրան այնքան մեղմ, այնպէս պաղատագին, որ ասես անթաղ մեռելի մի ստուեր լինէր, որ ապաստան էր խնդրում մայր երկրից իր ցաւատանջ թափառումները կարճելու համար

— Չէ՛, չէ՛, անողորմ... քշիր հեռու այդ սև ձին... մենակ եմ ախր... տաշտի վերջին հացը քաղցած մուրացիկն իսկ չի տանի, ի՞նչ ես ուզում, ո՞ւմ ես փնտրում...

Եւ անհամար բազմութեամբ սև ձիաւորներ. իրար յետևից, իրար ոտքի տալով սլանում էին երկնքի երեսից, և սև խաւարը տնքում էր նրանց ոտների տակ, ու հեռուն Օհանի մայրը դեռ անիծում էր, ողբում, չորացած ձեռներով փոշի ցանում դէպի վեր, դէպի աստղերը։

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Նազանը չէր լսում.

— Տե՛ս, այրիութեանս քօղը կրկին հանգոյցով պինդ կապեցի... ամեն օր թոնրից ծուխը պալան-պալան կը հանեմ, սև մազերս սպիտակ կը հիւսեմ, ու դու քո սև ձին քշիր հեռու, ճամբադ սև է, սև՛ սև...

Մի վառ աստղ ցոլաց երկնքում, գունատ, թրթռուն փայլով ողողեց մօրն ու զաւակին, Նազանն ուշքի եկաւ, թափով խլեց մանկանը, ներս տարաւ ու դուռը պինդ փակեց։

Եւ դրսում, գիշերային քար լռութեան մէջ աղբիւրը պատմում էր խաւարին մի հին հեքիաթ, որ ոչ սկիզբ ունէր և ո՛չ վախճան. ուռիները վերից թախծօրէն օրօրում էին իրենց սաղարդները, ցօղէ արցունքներ մաղում ու վշշում, բարձրում խօլական ստուերները ակօսում էին հորիզոնները ցասկոտ ու անհանգիստ, և սսկուած խրճիթների տակ, վիրաւոր սրտերի մէջ, մի հին ու մեծ վիշտ էր մխում թագնուած կրակի պէս...

Ե.

. . . . . .

. . . . . .

Ճրագի լոյսը պլպլում էր մեղմիւ. սիւների ստուերները երերում էին պատերի վրայ. ու գիշերային հովը աշխարհի հազար ու մի ցաւագին ճիչերով բեռնաւորուած՝ յամառ ու միակերպ ծեծում էր Նազանի դուռը, որի յետևում Սև Ձիաւորի զաւակն էր հանգչում.

„Բա՛ց, բա՛ց...“։

ՏԱՐԱԳԻՐ

ԱՆՑԵԱԼԻ ԱՐՇԻՎՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

„Նախաբան“ գուցէ պէտք չէ. անունն արդէն յանձնարարական է։ Պետօ, Սաքօ, Դուման, Վարդան— մեր առաջին „դիտազօրներն“ են (éclaireurs), մեր անդրանիկ դրօշակակիրները, որ հանդէս են եկել կազմակերպութեան արշալոյսին, նետուել են հայոց ազատութեան մարտադաշտը, իբրև ռազմիկ և մանաւանդ քարոզիչ, պրօպագանդիստ, գնացել են հերկելու խոպան գետինը, մղում տալու „Կայծերի“ հեղինակի ծրագիրներին, ձուլելու երկրի մէջ և կիսազատ սահմաններում այն առաջին կազմակերպական կորիզները, որոնք յետոյ աստիճանաբար աճելով, ծնունդ տուին լայնատարած, զանգուածային բանակին։

Առաջին երկուսը այսօր արդէն նահատակ են։ Մինը— Պետօն — որ դեռ 1890 թուականից հաստատուել էր Վանի մէջ և սերմանել առատօրէն իր ըմբոստ գաղափարները, նահատակուեց Վասպուրականում, 1896-ի արիւնալի ամրդհարման մէջ։ Միւսը — Սաքօն — մեռաւ 1908 թուականին, Երևանում, երբ դիմում էր դէպի Պարսկական Յեղափոխութեան կրկեսը։

Վերջին երկուսը, բարեբախտաբար, կենդանի են և ի վիճակի՝ պատմելու մեզ յեղափոխական գործունէութեան այն նախնական դրուագները, այն առաջին քայլերն ու խարխափումները, այն խիզախ ու յուսահատ, երբեմն օրհասական, հոգեվարքում թռիչքները, որոնցով հայ անդրանիկ քարոզիչը ձգտել է խորտակել անտար-

բերութեան սառուցը, իր թշուառ Հայրենիքում, ձգտել է փոթորկել սարկութեան մրափը և հրել զանգուածները դէպի կռիւ ու վերածնութիւն...

Ահաւասիկ այդ պատմութիւնը։ Պարզ, անպաճոյճ, ինչպէս ինքը հեղինակը, ինչպէս մեր բոլոր գինուորները։ Բայց որքա՜ն յուզիչ է նա իր միօրինակ ու միապաղաղ ֆօնի մէջ... Միօրինա՜կ է տանջանքի ու զրկանքների այդ հրեշաւոր պատկերը, միօրինա՜կ են հերոսական մաքառումի այդ դժոխային մանրամասները — և գուցէ տեղ-տեղ նրանք ձանձրացնեն ընթերցողին. ի՞նչ արած... այդ դաժան միօրինակութիւնը մեր կեանքի էլարշուք սեփականութիւնն է, մեր ռազմիկի „ստորերկրեայ“ գոյութեան ու գործունէութեան յատկանիշը...

Քայլի՛ր անմռունչ գիշերային խաւարի մէջ, սարերով ու ձորերով, լուսաբացին թագնի՛ր անմատչելի դարաններում, հսկի՛ր մշտապէս քրդական վոհմակների դէմ, որ ամեն մի քայլափոխիդ հետևում են նզովքի պէս, տնքա՛ բեռի տակ, փոխադրելու հրացանները շալակիդ, դողա՛ միշտ մատնելու վտանգից, մաքառի՛ր շարունակ սոսկալի բնութեան դէմ, տառապի՛ր ցրտից, քաղցից ու ծարաւից, ապրի՛ր միշտ անքուն, տանջալի գիշերներ, առանց տաք սնունդի, առանց տաք ծածկոցի, փնտրի՛ր մշտապէս անառիկ քարայրներ, ուր կարենաս շունչ առնել, փոքր ինչ հանգստանալ, կազդուրուել. պատրա՛ստ եղիր ամեն վայրկեան պաշտպանելու, կռուելու և վտանգի բոպէին մագլցի՛ր լեռն ի վեր, շտապի՛ր գրաւելու ամենաբարձր դիրքերը, թաղի՛ր հապճեպով սպանուած ընկերներին, երբեմն ձգի՛ր նրանց հոգեվարքի ցնցումներում և փախի՛ր գահավիժուող խուճապներից... մի՛ խօսիր ու մի՛ հագիր պտոյտների միջոցին, քո ձայնը կարող է լսելի լինել շրջապատին, անտառի մէջ քայլելիս մի՛ զարնուիր տերևներին, նրանց դաւաճան խշշոցը կարող է ուշադրութիւն հրաւիրել, մի՛ ծխիր օդի մէջ, որովհետև այդ ծուխն ևս կարող է նկատուել թշնամու որջերից... թագնի՛ր բոլորից, և՛ քրդից ու հայից, և՛ կառավարական զաֆթիէից, և՛ հովից ու շներից, կծկի՛ր ու գալարի՛ր, երբ հանդիպես մի անմեղ կարաւանի, թէկուզ մի հատ ճամբորդի, թէկուզ մի խեղճ, ողորմելի լամուկի, որ կարող է „հաւա՜ր“ ձգել և խմբի գոյութիւնը վտանգել... Եւ այդ ահաւոր միջավայրում, այդ անհնարին դժոխքի մէջ՝ միաժամանակ առա՛ջ տար քո դրական աշխատանքը, մտի՛ր գաղտագողի հայկական գիւղերի մէջ, հաւաքի՛ր զգայուն երիտասարդներին, խօսի՛ր, քարոզի՛ր, կազմակերպի՛ր, հալածի՛ր վատերին, պատժի՛ր լրտեսներին, մատնիչներին, դաւաճաններին — ահաւասիկ հայ ռազմիկի գերմարդկային պաշտօնը, ահաւասիկ այն եզակի, անօրինակ պայմանները, որոնց մէջ մեր անդրանիկ խմբերը կատարել են իրենց վսեմ, առաքելական թափորը... Սոսկալի է. յոգնում էք, ձեր նիարդերը թուլանում են և ուղեղը տառապում է այդ մենատոն պատկերների անծայրածիր շարանից...

Այո. հայ կեանքի „ռէալիստները“, անհրապոյր և նիւթապաշտ անդորրութեան մէջ փափկացած հոգիները կարող են արգահատական ժպիտով անցնել այս բոլորի վրայից, բայց նրանց համար չէ Վարդանի յիշատակարանը, նրանց չէ, որ կը մատուցանենք հայ յեղափոխական արշիւների այս անապատ ու սրտառուչ էջերը, որոնցից հիւսուած է մեր նորագոյն պատմութիւնը — մի պատմութիւն, որի բեմը զարդարել է գաղափարական երիտասարդութեան ամենաընտիր, ամենաշքեղ հատուածը...

Թողնե՛նք այժմ, որ խօսէ ինքը Վարդանը, Վասպուրականի, Շատախի այն հինաւուրց կռիւների հերոսը, որին քաջ լեռնականները յաւերժացրել են իրենց ոգեշունչ տաղերի մէջ „Շատխու առիւծ“ մականունով *)։

I

ԴԷՊԻ ՎԱՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ

ԲՈՂԱՋՋԷՍԱՆԻ ԿՌԻՒԸ

—

Առաջին հանգրուանը — Պարսկաստան...

1890 թ. վերջերից կուսակցութիւնը հաստատուել էր արդէն Ատրպատականում և կազմում էր պատկառելի ուժ։ Մի քանի հոգի եկել էին այդտեղ՝ „երկիր“ մտնելու նպատակով և դրա համար.. պէտք եղաւ երկար սպասել։

Մէկը ես էի։ Եկել էի 1890-ի վերջերին և տենդային անհամբերութեամբ սպասում էի բաղձալի օրուան։ Այնտեղ, Վանում, Դաշնակցութիւնը ունէր արդէն իր ներկայացուցիչը։ Պետոն, անխոնջ, անձնուէր, գաղափարական Պետոն, հող էր պատրաստում ապագայի համար։ Նա անցել էր, իբրև հաւաքանցի վաճառական, ազատ կերպով, բաւական ժամանակ ապրել էր ազատ, ծանօթացել էր ժողովրդի և տեղական միակ կազմակերպութեան, արմենականների հետ, նրանց միջոցով զէնք էր մտցրել երկիր, ժողովրդի յեղափոխական տարրերին բաժանելու։ Պետոն սակայն շուտ հիասթափուեց արմենականների վերաբերմամբ և որոշեց, որ պէտք է աշխատել՝ Դաշնակցութեան սեփական ուժերով գործի ձեռնարկել։ Անցնում է այդ նպատակով Պարս-

*) Վարդանը տեղ-տեղ ակնարկում է հակառակորդ կուսակցութիւնների անդանկալի արարքների վրայ։ Ցեղ ենք տալիս նաև այդ ակնարկներին՝ պատմութիւնը և պատկերը լրիւ ցուցադրելու համար և ոչ բնաւ կուսակցական քինախնդրութեամբ։ Հ. Ց. Դաշնակցութիւնը վաղուց արդէն հասել է այնպիսի դիրքի՝ ուսկից դիւրին է անաչառ և արդար լինել դէպի հակառակորդ մարմիններն ու անհատները, յարգել նրանց մէջ լաւերին և արհամարհել վատերին։

ԽՐՄ.

կաստան, այնտեղից Կովկաս։ Կրկին վերադառնում է Պարսկաստան և խմբի համար պատրաստութիւններ են տեսնում։

Հասաւ 1894-ի սեպտեմբերը, երբ պիտի ուղղւէինք դէպի Մայր-Հայաստան։ Մինչ այդ՝ ժամանակիս մի փոքր մասը անցուցել էի Սալմաստի գիւղերում, տեսչի ծառայի պաշտօնով (թեմական տեսչի ձիաւոր). իսկ ամենամեծ մասը՝ Դերեկ վանքում, մերթ վանահօր օգնականի պաշտօնով, մերթ սպասաւորի, ձիաւորի, երբեմն էլ վանքական կալւածների կառավարչի օգնականի։

Այդ վանքի մէջ շատ արկածների հանդիպեցայ, շատ փորձանքների մէջ ընկայ։ Այդ վանքը եղաւ իմ կեանքի դպրոցը, ուր առաջին անգամը ստացայ ռազմական քիչ թէ շատ փորձառութիւն։ („Վանք“ բառը այստեղ չպէտք է հասկանալ բուն էութեամբ, աղօթատեղի, ուր մարդիկ աղօթքով ու ժամասացութեամբ են զբաղւում)։

Հասաւ բոլորիս ցանկացած օրը. պէտք է երկիր մտնէինք, բայց դժբախտաբար, այդ ժամանակը ես հիւանդ էի և բժիշկը արգելում էր երկար ճանապարհ գնալ, երկիւղ կրելով վատ հետևանքից։ Բոլոր ընկերները խնդրում են, յորդորում են ինձ, որ այդ անդրանիկ խմբին չմասնակցեմ։ „Հիւանդ ես և կարող ես ամբողջ խումբը վտանգի մատնել“—ասում էին և շատ էին խնդրում ու թախանձում։ Բայց ոչ մի կերպ չեն կարողանում համոզել։ Ես ի վերջոյ այսպիսի պայման դրի. „ընկերնե՛ր, եթէ տեսնեմ ճանապարհին, որ յետ եմ մնում ու չպիտի կարողանամ ձեզ հետ քայլել և իմ պատճառով խումբը ստիպւած պիտի մնայ դաշտի մէջ, ես ինձ կ'ըսպանեմ և դուք իմ զէնքերը վերցնելով կարող էք շարունակել ճանապարհը“։ Բոլոր ընկերները զիջանում են ո՛չ միայն այդ պայմանը աչքի առաջ ունենալով, այլ և այն՝ որ ես ամենից երկար սպասողն եմ եղել այդ օրին։

Սեպտեմբերի վերջերն էր. Դաշնակցութեան 12 հոգուց բաղկացած անդրանիկ զինակիր խումբը—կազմ ու պատրաստ։ Նրա անդամները համարեա թէ բոլորն էլ աչքի ընկնող երիտասարդներից էին. բոլորն էլ՝ զինավարժ։ Խումբն իր հետ տանում էր 18 հրացան. խմբի մէջ էր և Պետոն։

Երեկոյեան, մութը գետինը ծածկելուց յետոյ, երբ արդէն գիւղի ամբողջ ժողովուրդը ընկղմել էր խոր քնի մէջ, մի փոքրիկ բակում շարէշար կանգնած էին հայդուկները. նրանց շրջապատել էին մի քանի կանայք և տղամարդիկ. աղօթում էին ու բարի ճանապարհ մաղթում...

Առաջ շարժւեցինք։ Գնում էինք ամենայն արագութեամբ, որպէս զի դեռ լոյսը չբացւած հասնէինք որոշ կայանը։ Առաւօտեան, մինչև լուսաբացը արդէն մեր որոշւած տեղումն էինք, առանց որևէ ճամբորդի հանդիպելու։ Ամբողջ գիշերւայ ընթացքում առաջի կայանը՝ Դերեկի հանդէպ գտնւած սպիտակ սարի լանջն էր։ Ցերեկն այդտեղ անցկացնելով, երեկոյեան առաջ ենք գնում։ Ես միշտ երկիւղի ու տարակուսանքի մէջ էի, թէ ահա մի ժամից ոտքերս կը կաշկանդւին, ճանապարհին կը մնամ, բայց չէ, որքան գնում եմ, այնքան ուժերս աւելանում են և ամենից առաջ ինքս եմ, շարունակ հարցնելով հանգուցեալ Շ. Էրօի ց. —„ե՞րբ արդեօք կը մտնենք Հայաստան“։

Այդ գիշեր ճանապարհին պետոն հիւանդանում է, բայց բրդական գիւղի շների հաչոցը, գիշերապահների միմեանց ձայնակցելը ստիպում էր բոլոր թափով առաջ գնալ. ահա և Խանաբադին, ս ա հ մ ա ն ա գ լ ո ւ խ ը։ Այդտեղ — մի կարկաչուն աղբիւր։ Նստում ենք, քիչ հանգստանում։ Կուշտ խմում ենք ու առաջ գնում։ „Ահա և մենք Հայաստանի մէջ“—բացականչում է յանկարծ Շերօն։ Իմ ուրախութեանը սահման չկար. այլ ևս չեմ քայլում, այլ թռչկոտում եմ... „Հիմա որ մեռնեմ էլ՝ հոգս չէ“։

Աղօթարանը դեռ չբացւած՝ գտնւում ենք մի այրի մէջ։ Շէրօն էր գտել։ Եւ անունն էլ մնացել էր „Շէրօյի այր“։ Եղանակը ցուրտ էր, և մենք ամբողջ մարմնով դողում էինք։ Երբ լոյսը բացւեց, մեր առջև փռւած էր Խ ա ն ա ս օ ր ի ահագին դաշտը. զանազան կողմեր արածում էին բրդական հօտերը։ Ցերեկը ապահով անցկացնելով երեկոյեան ճանապարհ ընկանք դէպի „կարմիր քարեր“ կոչւած տեղը։ Ճանապարհին մեր ընկերներից մէկը բաւական յոգնել էր և չէր կարողանում լաւ առաջ գնալ։ Այդ պատճառով չկարողացանք մեր որոշ ապահով տեղը հասնել, այլ մնացինք լեռան ստորոտում, ճամբու մօտիկ մացառների մէջ։ Մեր դրութիւնը վտանգաւոր էր, եթէ թշնամին նկատէր։ Ամբողջ ցերեկը գրեթէ առանց շարժւելու—մի՛ գուցէ մեր շարժումից մացառներն էլ շարժւին ու ճամբորդները մեզ նկատեն—պառկել էինք մինչև երեկոյ։ Բարեբախտաբար, ոչ ոք չնկատեց։ Մութն ընկաւ, առաջ գնացինք։ Գիշերը լուսնեակ էր և պէտք էր անցնել զինւորների պահականոցի մօտից. Շէրօն ամեն բան գիտէր, նա այդ կեանքի մէջ լաւ փորձւած էր և մեզ ամենայն աջողութեամբ ու գաղտնի ճանապարհով էր տանում, երբեմն այնպիսի ճանապարհներով, որ ցերեկով տեսնողը կը սարսափէր... Բայց ի՞նչ արած, միակ գիծն էր։

Առաւօտեան հասանք Ա շ կ ե ր տ ո ւ լեռ։ Մի ահագին լեռ է, շրջապատւած հայ ու քիւրդ գիւղերով։ Այդտեղ ամառը վրաններ են լինում, իսկ մեր ժամանակ միանգամայն թափուր էր և մենք կարողանում էինք ցերեկով ևս առաջ երթալ։ Լեռան գագաթին պառկել էինք հանգստանալու. հեռուից ոչխարներ տեսանք և կասկածելով, որ դէպի մեր կողմը կարող են անցնել, տեղից ելանք և մի յարմար տեղ փոխադրւեցինք։ Հէնց նոր էինք պառկել այդտեղ՝ նորէն հեռուն

մի ինչ որ մարդ երևաց. երկար նայեցինք դիտակով, բայց նրա հայ կամ քիւրդ լինելը չկարողացանք իմանալ։ Սակայն, նկատելի էր, որ ձեռքին հրացան ունէր. հաւանական էր, ուրեմն, որ քիւրդ որսորդ էր։ Ինքն էլ կարծես մեզ էր նկատել. իսկ թէ ի՞նչ մարդկանց տեղ կընդունէր մեզ՝ այդ էլ դժուար էր ասել։ Բայց յամենայն դէպս մենք հարկ տեսանք հեռանալ մեր տեղից, կամաց-կամաց աւելի բարձր դիրքեր քաշուեցինք, որպէս զի եթէ ուրիշներին իմաց տալու լինէր մեր մասին, իբրև թշնամիների, և կռիւ ծագէր, մենք լաւ դիրքերում լինէինք։ Մինչև իրիկուն մնալով, ո՛չ մի հաւար և ո՛չ մի մարդ չեկաւ մեր կողմերը։ Ցերեկը կամաց-կամաց հանգստանալով շարունակեցինք ճամբան մինչև կէս գիշեր։ Ապա մի այր գտնելով մտանք մէջը քնելու։ Գիշերը սարսափելի ցուրտ էր։ Մի քանի ժամ պառկելուց յետոյ, տեղներիցս ելանք ու լեռներով առաջ գնացինք։ Մի քանի ժամ բարձրացանք ու մի բարձր տեղ նստեցինք. գիշերուայ գնալիք ճամբէն էինք դիտում։ Առջևնիս փռուած էր Խոշաբի սարահարթը. հսկայ լեռներ, որոնց միջից երևում էր հեռուն Վարագայ լեռան գագաթը, ուր պէտք է հասնէինք այդ գիշեր։ Երեկոյեան, դեռ բոլորովին չմթնած՝ լեռից իջանք մի ահագին ձոր։ Ամբողջ 4 ժամ քայլեցինք ու հազիւ դուրս ելանք։ Դեռ ձորի մէջտեղը՝ մեր առջևից յանկարծ հրացանի ձայն լսուեց։ Ամենքս դուրս ելանք ճամբուց և դիրք բռնեցինք։ Բայց բանից դուրս եկաւ, որ չարաճճի Շերօն էր. մի վայրի ոչխար յանկարծ առաջն էր դուրս եկել. Շերօն չի համբերում ու կրակում է...

Այդ գիշեր մեր կացութիւնը աւելի վտանգաւոր էր. գնում ենք կառավարական ճանապարհով և ամեն քայլում կարող էինք ճամբորդների հանդիպել։ Պէտք էր շտապել ժամ առաջ տեղ հասնել, բայց մեր յոգնած ընկերը դժուարանում է քայլել։ Նրա ոտքերի տակը ուռել էր..

Ճանապարհին տեղ-տեղ կարաւաններ էին պատահում, քաղաք գնացող։ Դրանցից միշտ խոյս էինք տալիս զգուշութեամբ։ Հասել էինք Ն ո ր-գ ի ւ ղ ի կեսատուկի ստորոտը, այդտեղ նորէն հանդիպեցանք ձիաւորների, որ հաւանօրէն զաբթիաներ էին։ Մենք իսկոյն քաշուեցինք մի կողմ, պահուեցինք քարերի ետև, մինչև նրանք անցան։ Ապա ահագին զառիվերը առջևնիս առած՝ սկսանք բարձրանալ։ Ահա և Վարագայ լեռը։ Առաւօտեան դէմ մտել էինք մի փոքրիկ քարանձաւի մէջ, հանգստանում էինք. մէկ էլ տեսանք՝ որտեղից որտեղ՝ ոչխարի հօտը մեր վրայ դուրս եկաւ. ահա և հովիւը։ Վերջինը նկատելով զինուած մարդկանց՝ մնաց քարացած. աչքերը ապշած յառել էր մեզ։ Շէրօի հարցին՝ պատասխանում է, թէ հայ է և Վարագայ վանքի հովիւ։ Երբ հեռը սկսեցինք հայերէն խօսել՝ նա ուշքի եկաւ և ուրախութեան ժպիտ արտայայտեց, իմանալով մեր հայ լինելը։

Մեր հացը վերջացել էր։ Հովուից հաց խնդրեցինք և նա իր բոլոր ունեցածը մեզ աւեց, բայց էլի շատ քիչ էր, նոյնիսկ մէկ անգամ ուտելու համար։ Ուստի խընդրեցինք հովուից, որ քիչ կաթ կթի ոչխարներից։ Աշուն էր, ոչխարների կաթը՝ քիչ։ Մի քանիսը կթեց, հազիւ երկու հովուական կոտ դուրս եկաւ. ամենայն ախորժակով կլանեցինք։ Ճանապարհի համար իւրաքանչիւրս մի-մի գրանքայ չամիչ էինք վերցրել (գարմիան). ցուրտ եղանկին նա քիչ օգնում է։ Շերօն իր տոպրակի մէջ պահել էր իր բաժինը. հացի նեղ պարագային՝ փշրանքներով խառն՝ այդ էլ կերան հայդուկները։

Հովուին երկար ու բարակ հարց ու փորձ արինք. վանքում ո՞վ կայ, վանահայրը ո՞ւր է (Հանգուցեալ Դանիել վարդապետը). արդեօք վանքի մէջ կառավարական պաշտօնեայ կա՞յ ևն ևն։ Վանահայրը վանքումը չէր. այնտեղ զաբթիայ կար և մի երկու բարի ուսուցիչներ, հայեր։ Հովուին ասինք, որ այն երկու հայերին յայտնէ մեր մասին (մենք նրանց ճանաչում էինք) և ասէ նրանց, որ անպատճառ հաց բերեն։

Ամբողջ ցերեկն այդտեղ սպասելով, գիշերը քաշուեցինք մի աւելի փոս տեղ, ուր շատ թէ քիչ կարող էր տաք լինել՝ ցրտից պաշտպանուելու համար։ Առտուան դէմ, լոյսը չբացուած, քաշուեցինք աւելի բարձր ու ամուր դիրքեր։ Ամբողջ ցերեկը մնալով առանց հացի ու ջրի երեկոյեան նորից իջնում ենք ձորը՝ գիշերն այդտեղ անցնելու համար։ Այդ գիշեր, այն երկու ուսուցիչները մի մեծ կապոց հաց հետերնին առած՝ գալիս են ձորերում փնտրելու մեզ, երգում են ևն, բայց չեն գտնում մեզ։ Նրանց երգի ձայնը մենք չենք լսում. երկար ման գալուց յետոյ՝ նորէն դառնում են վանքը։ Քաղցը մեզ շատ էր նեղում, ցորեկը բարձրանում էինք լեռը, առանց հաց ու ջրի անցկացնում, իսկ երեկոյեան իջնում էինք ձորը՝ գէթ ջուր խմելու։ Արդէն երրորդ օրն էր, որ անօթի էինք։ Հայդուկներից մէկին, կարթալանցի Սահակին զէնքերը առնելուց յետոյ, ուղարկում ենք վանքը, որ գուցէ կարողանայ հաց բերել։ Հայդուկը մտնում է վանքը և գաղտնի կերպով տեսնում դռնապանի հետ, ասելով նրան, որ իրենք մի քանի ընկերներ են, աղ են բերել, անօթի են ու հաց չունին։ Դռնապանը, անպիտան Զ ո ղ ա խ-Դ ա լ մ օ ն (հայ), պատասխանում է. —„սո՛ւտ ես ասում, դու զաչաղ ես, քեզ բռնել կըտամ“։

Խեղճ Սահակը հազիւ կարողանում է մի հաց վերցնել իրեն համար ու վանքից հեռանալ։ Անօթութիւնը սաստիկ նեղում էր մեզ։ Լուսաբացին, երբ բարձրանում էինք լեռը՝ հազիւ էինք ոտերնիս քարշ տալիս, այնքան թուլացել էինք։ Հայդուկների գլխում զանազան մտքեր էին ծագում և մի քանիսի մէջ մանաւանդ յուսահատական տրամադրութիւն էր նկատուում։ Ուզում էին, օրինակ, ճանապարհը բռնել ու անցնողին կողոպտել, գուցէ այդ ձևով կարողանային հաց ճարել։ Բայց միւս-

ները, որ Գործը իրենց սրտին աւելի մօտ էին ընդունում, համբերութեան խրատ էին տալիս և կարողանում էին յետ կանգնեցնել այդ վտանգաւոր ծրագիրներից։

Մի պարզ առաւօտ էր, ձորի մէջ երկու մարդ նկատեցինք, որոնք ձեռքերում ինչ որ կապոց ունէին բռնած. դիտակով զննեցինք և իսկոյն ճանաչեցինք դրանց ով լինելը։ Մի քանի հոգի վազէվազ իջանք ձորը, այդ մարդկանց մօտ։ Վանքում եղած մեր բարի ծանօթներն էին, որ մեզ համար հաց էին բերել։ Կարճ բարեւեւուց յետոյ, նետուեցինք հացի վրայ ու սկսեցինք կլանել լագահութեամբ։ Ոչ մի խօսակցութիւն. միայն ուտում էինք։ Եւ այնքան կերանք ու պաղ ջուր խմեցինք, որ հիմա էլ շատ ուտելուց չէինք կարող շարժուել։

Վանքից եկողների հետ երկար խօսեցինք ու ճանապարհ դրինք։ Նախորդ գիշերը մեր ընկերներից երկուսը գնացել էին Վան՝ թէ հաց ղրկելու և թէ մեզ համար տեղ պատրաստելու։ Վանքի մարդկանց գնալուց մի-երկու ժամ յետոյ՝ ձորում երևացին երկու այլ մարդիկ, մի երրորդի առաջնորդութեամբ։ Վանից էին գալիս, մեր ընկերներն էին ղրկել։ Նոյնպէս հաց էին բերել։ Բայց արդէն կուշտ էինք,—վանքից եկած ամբողջ հացը, ժաժիկը, ընկուզը և խնձորը կերել էինք։

Հաց բերողները միևնոյն ժամանակ մեզ վալադութիւն պէտք է անէին դէպի քաղաք։ Դեռ մութը չհասած՝ բարձրացանք Զիաթռնուկ կոչուած լեռը (Վարագի շղթաներից է)։ Այդտեղից պէտք է իջնէինք դաշտը ու դէպի քաղաք, բայց մեր վալադը փոքր ինչ մոլորուեց, ժամանակն էլ ուշ էր, ուստի մնացինք Զիաթռնուկ լեռը ամբողջ գիշերը և ցերեկը։ Հացը նորէն պակսեց մեզ. պէտք էր ճար տեսնել։ Առաւօտեան վաղ մարդ ղրկեցինք քաղաք և շուտով երկու երիտասարդներ մի տոպրակով հաց բերին մեզ։

Գնում ենք Վան, որպէս զի մինչև կոլերի դուրս գալը՝ քաղաք իջնէինք։ („Կոլ“ կոչւում են գիշերապահ զինուորները, որ երեկոյեան, ժամը ըստ Թրքական 2-ին դուրս են գալիս պտտելու քաղաքի զանազան մասերում. հետևակները քաղաքի մէջ, իսկ ձիաւորները քաղաքից դուրս, դաշտերում)։ Երբ լեռից ցած իջանք Կարմրաւոր վանքի Վերին-աւագան կոչուած տեղում, մեր մի քանի ընկերները քաղաքից եկած, սպասում էին մեզ։ Ի՞նչ խօսք՝ որ հանդիպումը չափազանց յուզիչ եղաւ... Մեզ հաց, թութուն տուեցին, մեր զէնքերը վերցրին, իրենց վրայ առան աւելորդ զէնքերը ու ճանապարհ ընկանք։ Ճամբու զանազան կողմերում պահապաններ էին դրած մեր մարդկանցից, մեր գիծը լրտեսելու նպատակով։ Ցեղ-տեղ նրանք ևս միանում էին մեզ և սաւար խումբ էինք կազմում։ Ամենայն աջողութեամբ, առանց նկատուելու՝ մեր ճարպիկ առաջնորդները մեզ ուղեկցեցին մինչև Այգեստանի ծանօթ աներից մէկը, ուր մնացինք գիշերը և ցորեկը, իսկ միւս երեկոյեան բաժանուելով երկու մասի՝ երկու ուրիշ տներ փոխադրուեցինք։

Այդ ժամանակ Վանի նահանգապետը, (զինուորական-նահանգապետ) գաղտնի Բահրի փաշան էր, որ ամբողջ ժողովրդեան վրայ սարսափ էր ձգել իր բարբարոսութիւններով։ Այդ բաւական չէր, մենք ունէինք և մի ուրիշ հակառակորդ տարր — արմենականները։ Նախ քան մեր Վան ճանապարհվելը՝ նրանք նամակներ էին գրել իրենց ընկերներին, որ ամեն կերպ աշխատեն ժողովրդի գործին ծանօթ մարդկանց համոզել, որ մեզ չ'ընդունեն, համարելով մեզ խռովարար ու վնասակար մարդիկ, որ իբր քաղաք մտնելուն պէս՝ պէտք է կռիւ սարքէինք և ժողովրդին վտանգի մատնէինք։ Բայց չնայած դրանց գործ դրած բոլոր ջանքերին՝ ժողովուրդը սահմանափակ չափով մեզ լաւ ընդունեց և կարողացանք ամբողջ 22 օր պահուիլ։

Պէտք է սակայն, աւելացնել, որ պահւում էինք ամենախիստ պայմաններում. մեր տեղը ոչ ոք չգիտէր. չգիտէին նոյնիսկ մեր ամենամօտիկ ընկերներից շատերը. ամենամօտիկն դրացի չպէտք է իմանար, թէ իր դրացու տանը յեղափոխական մարդիկ են ապրում. մի փոքրիկ կասկած լինելուց՝ անմիջապէս փոխադրւում էինք այդ տնից մի ուրիշ տուն։ Ցորեկը և գիշերը տնից դուրս գալը, տան բակի մէջ երևալն անգամ վտանգաւոր էր. բարձր հազել և խօսել չէր կարելի. ամեն բան կատարւում էր չորս պատերի մէջ, տան խուլ անկիւններում. իւրաքանչիւր դրացի կասկածանքով և ենթադրութիւններով կարող էր որոշ բաներ իմանալ. — օրինակ, դուռը յաճախ ծեծելուց, շուկայից պարէնը սովորականից շուտ բերելուց, վերջապէս, մի փոքրիկ, չնախատեսուած, արտակարգ երևոյթ տեղի ունենալուց՝ կարող էին մի բան կռահել։ Նրանք սովորաբար գիտեն, թէ իրենց դրացին կամ այս ինչ տանտէրը օրական ինչքան հաց, միս ու այլ բաներ է առնում, կամ թէ ինչ մարդիկ են սովորաբար մուտք գործում ելն ելն։ Այդ բոլոր գործողութիւնները պէտք է կատարէին շատ զգոյշ կերպով։ Միս, հաց կամ այլ բաներ զանազան մարդիկ զանազան խանութներից էին առնում մեզ համար, որպէս զի բան չհասկանային։ Շատ անգամ մարդիկ, որոնց կանչում էինք մեզ մօտ խօսելու համար, սովորաբար գալիս էին այգիներով ու գիշերով. և որպէս զի դուռը չծեծեն՝ հողի կամ քարի փշրանքներ էին նետում պատուհանին, որով հասկանում էինք նրանց ով լինելը և ներս էինք առնում։ Մեր Վան մտնելու գլխաւոր նպատակն էր՝ փոքր ինչ զէնք մտցնել և շփւել ժողովրդի երիտասարդ տարրի հետ։ Ապա, մեզնից երկու ներկայացուցիչ թողնելով (Պետոին ու Ցովսէփին) տեղւոյն կազմակերպութեան համար — մացածներս լրիկ-մնջիկ յետ պիտի դառնայինք։ Այդպէս էլ արինք։

22 օր մնալով այդ դժոխային պայմաններում, թողինք մերոնցից երկուսին, թողինք նաև զենքերի մեծ մասը, ու մեզ հետ առնելով միայն 7 հրացան՝ քաղաքից դուրս ելանք։ Ցեղացիներից (քաղաքացի և գաւառացի) մի քանիսը մեզ հետ միացան։ Ընդամենը 15 հոգի ճանապարհ ընկանք, ունենալով հետերնիս 2 լաւ վալադներ։ Գնում ենք Պարսկաստան։

Առաջին գիշերը գնացինք մինչև Կարմրաւոր վանքը միայն. 22 օրւայ մէջ համարեա տեղներից չէինք շարժւել, ոտքերնիս խամացել էին, շուտ էինք յոգնում։ Վանքի մէջ 2 սարկաւագ կային, որոնցից մէկը վանահօր տեղապահն էր։ Նա մեզ շատ սիրով ընդունեց և իր սենեակում տեղ տւեց բոլորիս։ Այդ սարկաւագը մի աշխոյժ, փորձառու եմիտասարդ էր, միանգամայն նուիրւած մեր Գործին։ Հայաստանի մի քանի կէտերում ժողովրդի մէջ պատել էր առաջներում և բաւականին տեղեկութիւններ ունէր։ Ժամանակին, վարդապետ ձեռնադրւելուց յետոյ, մեր յայտնի գործիչներից մէկը դարձաւ։ Մասնակցեց Վանայ մեծ կռւին և Պետոի հետ միասին նահատակւեց կռւի դաշտում, 1896-ի յունիսին։

Սարկաւագը ոչինչ չխնայեց մեզ համար. թէյ, տաք կերակուր, ճանապարհի պաշար։ Միւս երեկոյեան տարաւ մեզ եկեղեցին ու մի յեղափոխական պահպանիչ կարդաց, բոլորիս հետ համբուրւեց ու ճանապարհ դրեց։

Վալադները առաջ ձգելով, բռնեցինք Արջակու ճանապարհը. մի քանի ժամից յետոյ սկսւեց սարսափելի անձրևը, որ փառաւորապէս թրջեց մեզ։ Քրտինքը ներսից, անձրևը դրսից... Մինչև ոսկորներիս ծուծը թրջւած էինք. ոտնամաններս արեխներ էին. փրկութիւն չկար։

Լուսադէմին Արջակու ժայռն էինք գտնւում, բայց որովհետև լուսնեակ էր՝ չէր կարելի գիւղ մտնել, ուստի մի քիչ հեռու տեղ նստեցինք. հրացանի կոթով հողի վրայի թաց շերտերը մի կողմ ւրինք, տակից չոր հող հանեցինք ու վրան նստեցինք, մինչև լուսնեակը մայր մտաւ։ Այն ժամանակ այդ կողմերի վալադ Սահակին մոցրինք գիւղը, որպէսզի տեղ պատրաստէ մեզ համար։ Մենք էլ գիւղի մի ծայրում, մի աւերակ տան մօտ նստած, սպասում էինք։ Սահակը այդ գիւղի մէջ ազգական ունէր, որի տունը գտնւում էր հէնց գիւղի ծայրում. նա մտնելով տուն, յայտնում է, որ մի խումբ մարդկանց պէտք է ներս ընդունեն։ Տանտէրը իսկոյն հասկանում է „խումբ մարդկանց“ ով լինելը։ Սահակի հետ միասին գալիս են մեզ մօտ և մեզ ներս ընդունում։

Մի չքաւոր ընտանիք էր ապրում այդ տան մէջ։ Նա բաղկացած էր մի մեծ սենեակից ու մի գոմից. մենք մեծ սենեակում մնալ չէինք կարող, քանի որ կարող էին ցերեկով դրացիներից գալ... Ստիպւած էինք գոմը մտնել, ուսկից արդէն նախիրն արօտի էին հանում առաւաւտ դէմ։ Մի կերպ անասունների աղբը մաքրեցին, մի հին կապերտ ձգեցին գետնի վրայ, հայդուկների մի մասը կապերտի վրայ իսկոյն տեղաւորւեցան. միւս մասը անասունների մսուրի մէջ։ Որովհետև շատ յոգնած էինք՝ պառկելուն պէս քնեցինք... լաւ ախորժակ պահելով, որպէս զի կէսօրին տաք ապուր ուտէինք։ Մի քանի ժամ քնելուց յետոյ, արթնանում ենք, բայց ի՞նչ ձախորդ լուր ենք առնում... Թոնրի վրայ եփելու ժամանակ՝ ամանը շուռ է գալիս և ապուրը թափւում. իսկ խեղճ տանտիկինը ուրիշ թան-ժածուն չի ունենում, որ նորից ապուր եփի։ Այնպէս որ՝ մնում ենք առանց ոչնչի և մեր տոպրակ հացն ենք սպառում, որովհետև տնեցիք ուտելու հաց անգամ չունէն։

Երեկոյեան մութը ընկնելուն պէս, պատրաստ ճանապարհ ընկանք։ Այդ տան անդամներից մէկը, մի 18 տարեկան պատանի, կպաւ մեզ — „Ես էլ կուզեմ գալ ձեզ հետ“... Որքան աշխատեցինք յետ կանգնեցնել պատանին՝ չեղաւ։ Գիւղից բաւական հեռացել էինք, մէկ էլ տեսնենք, վազէվազ եկաւ ու միացաւ մեզ։ Էլ երկար խօսելու տեղը չէր. առանք հետերնիս ու առաջ գնացինք։ Գիշերը սաստիկ մութն էր և ճանապարհը դժւար էր գտնել։ Նա անցնում էր Հ ա զ ա ր ի հայաբնակ գիւղի մօտով, ուր այդ պահուն նստած էր Թաբուր-աղասին (Ձիաւորների հրամանատար) իր ձիաւորներով։ Այդ մասին մենք յետոյ իմացանք։ Դեռ լոյսը չէր բացւել, արդէն գտնւում էինք Բողազ-քէսէնի մօտ։ Երկու հոգի մոցրինք գիւղը, որ մեզ հաց ու տեղ պատրաստեն։ Ցանկարծ շների հաչոցը բարձրացաւ գիւղում. նշան էր՝ որ մերոնք նկատւել էին։ Անցաւ մօտ կէս ժամ և ահա գիւղացիներից մի քանիսը դէպի մեզ եկան ու խորհուրդ տւին գիւղում չմնալ, ասելով, որ Թաբուր-աղասին այդտեղ մօտիկ է և կարող է վազն իսկ գիւղը գալ։ Լաւ կը լինի, ասացին, որ գնանք գիւղից կէս ժամ հեռու գտնւող աւերակ ջրաղացը, ուր աւելի ապահով է։ Բողազ-քէսէնցիներին չէր կարելի չհաւատալ։ Իսկոյն դիմեցինք դէպի ջրաղացը։ Ցուրտ գիշեր էր. մի լաւ կրակ արինք ջրաղացի մէջ. գիւղացիք հաց, պանիր, կարագ բերին. կուշտ կերանք, տաքացանք ու հանգստանում էինք, երբեմն գիւղացիների հետ խօսակցելով։ Քիչ յետոյ գիւղացիներից մի երկուսն էլ եկան ու խորհուրդ տւին էլ չմնալ ջրաղացում, աւելի հեռու տեղ երթալ։ Կարծես թէ մի բան նախազգում էին, Այդ էլ ընդունեցինք, իսկոյն վերցրինք մեր ունեցածը և ուղղւեցինք Արջաձոր կոչւած ձորը մի այլ վալադի հետ (վալադ Մարտիրոսը հիւանդացել էր)։ Աղօթարանը բացւելուն պէս՝ մենք արդէն այդտեղ էինք։ Առաջ գնալ չէր կարելի, քանի որ մեր դիմաց քրդական գիւղօրայք կային, կարող էին հեռւից մեզ նկատել։

Հոկտեմբերի վերջն էր, ձիւնէ բարակ սաւանը ծածկել էր ձորը և շրջակայքը։ Ցուրտը շատ զգալի էր և մենք ամբողջ մարմնով դողում էինք։ Հրացանի կոթով

սառած գետինը փորել, չոր հողին հասնել ու նստել վրան—դեռ բաւական չէր, դողում ենք անընդհատ։

Այդ ձորում մի փոքրիկ կրակ արեցինք, հաւաքելով գազ (կպչան), որ փոքր ինչ տաքանանք։ Բայց... թաց էր, չէր այրւում և միայն ծուխ էր անում. իսկ ծուխն էլ վտանգաւոր էր. հեռից կարող էին նկատել մեզ... Լաւ էր, որ ձորը շատ մեծ ու խոր էր և ծուխը մինչև ձորից դուրս գալը՝ անհետանում էր։

Վերջապէս, տեսանք, որ ոչ մի օգուտ չկայ կրակից. հանգցրինք և այնպէս նստանք, իւրաքանչիւրը իր փորած տեղում. որովհետև սոսկալի ցուրտ էր, ոչ մէկը չէր կարողանում քնել։ Գիւղացիներից մեզ հետ եկած վալադը պէտք է լեռան գագաթին պահպանութիւն անէր և մի բան նկատելուց՝ մեզ իմաց տար։ Կէս օր էր։

Արեգակի ճառագայթները քիչ տաքացրին մեզ. հայդուկների մի մասը քնեցին, միւս մասը արթուն՝ զէնքերն էին սրբում։ Մի երկուսը ման էին գալիս։ Ցանկարծ Ինգոն (վալադը) լուր բերեց, թէ մի ձիաւոր դէպի մեր կողմն է գալիս. իսկոյն տեղներիցս վեր թռանք, քնածներին արթնացրինք, մեր զէնքերը վերցրինք, հացի տոպրակներն առանք ու ամենայն արագութեամբ վազում էինք դէպի վեր։ Դեռ չէինք հասել ձորի եզրը, յանկարծ մեր առջև մի ձիաւոր դուրս եկաւ, երկար միրուքով, բարձրահասակ, ձմրան վերարկուն վրան հագած, հրացանը առաջը դրած։ Հրամայեց մեզ ձորը մտնել. „գի՛ր դարեա, գի՛ր դարեա“, (մտէ՛ք ձորը, մտէ՛ք ձորը). ձիաւորը դրանով մեզ հանգստացնում էր և ուզում էր մեզ նորից ձորը մտցնել, մինչև իր ընկերների հասնելը.—բայց դէ ո՞ւր կը մտնէինք, իսկոյն մեր կողմից մի քանի հրացաններ պարպուեցան, բայց ապարդիւն. ձիաւորը ինքն էլ մի անգամ արձակելով մեզ վրայ՝ ձին քշեց։ Ես էլ իմ հրացանս ուղղեցի ձիաւորին, բայց իրեն դիպչելու տեղ՝ ձիուն դիպաւ ու ձին յետի ոտքերի վրայ նստեց։ Ուրախութեանս չափ չկար, սկսեցի պոռալ.—աղե՛րք, ձին խփեցի“։ Ցղերքն ասում են. „իրեն խփի՛ր, իրեն խփի՛ր“. բայց որ չի՞ դիպչում... Այնքա՞ն էինք շնչասպառ եղել, որ հրացանը հանգիստ չենք կարողանում նշան առնել։

Ձին նստելուն պէս՝ ձիաւորը ձիուց իջաւ, անցաւ ձիու յետևը, հրացանը թամբի միջից ուղղեց ինձ, բայց նոյնպէս ապարդիւն անցաւ, ձին թողեց ու ոտով փախաւ։ Հրացանների ձայնից՝ ձիաւորի ընկերները, թւով 50 հոգի (նոյնպէս ձիաւորներ), թաբուր-աղայի հետ միասին ձիերը քշեցին, հասան լեռան գագաթը, որտեղ մենք էինք գտնւում։ Սարի գագաթը բոլորովին հարթ էր, այդտեղ չէր կարելի երկար կուեր։ Ենգօն առաջ անցաւ և պատւիրեց իր ետքից գնալ։ Մենք անցնում էինք ձիաւորների միջով, նրանք մեզ էին գնդակներ նետում՝ մենք նրանց, բայց և այնպէս ո՛չ մի կողմից ո՛չ ոք չէ ընկնում։ Հիմա սարից նորէն պէտք է մտնէինք ձորը և նորէն բարձրանայինք մեր դիմաց բարձր բարքարոտ լեռը, որտեղ բաւական լաւ դիրքեր կային։ Մենք թէ իջնում էինք և թէ կուում։ Մեր ետևից կարկտի պէս թափւում էին գնդակները. այլ ևս վազելու ուժ չէր մնացել։ Ետևում մնացել էինք միայն չորս հոգի զինուած, իսկ մնացածները զինուած թէ անզէն՝ բարձրանում են դիմացի լեռնային դիրքը։

Ձորը իջնելիս՝ թշնամու գնդակներից մէկը դիպաւ կտրիճ Սահակին. խեղճը վիրաւոր ընկնում է և մրմնջում. „այլ ևս չեմ կարող գալ“... Նրա հրացանը հայդուկներից մէկն առնում է հետը։ Ետ մնացած չորս հոգիներս, մի գծի վրայ իրարուց բաւականին հեռու՝ ուղղւում ենք յարկարծակի թշնամու վրայ, գնդակներ թափում ու էլի դառնում մեր ճանապարհը գնում։ Այսպիսով թշնամուն ժամանակ չենք տալիս կանոնաւոր կերպով նշան առնել մեր առջև շատոնց անցած անզէն ընկերների և մեր վրայ։

Ձիաւորները, նկատելով, որ մենք դէպի լեռն ենք ձգտում բարձրանալ՝ նոր հասկացան իրենց սխալը, իսկոյն ձիաները հեծան ու ձորի միւս կողմով պտոյտ գործելով աշխատում էին մեր դիրքերը գրաւել, բայց արդէն ուշ էր. տղերքն արդէն հասել էին լեռան գագաթը և գրաւել էին դիրքերը։ Թշնամին հէնց մեր դիմացը մօտաւորապէս 200 քայլի վրայ, մի ուրիշ դիրք էր գրաւել, ուսկից մեզ վրայ գնդակ էր թափում։ Թէ մեր և թէ թշնամու դիրքերը համարեա նման էին ու շատ ապահով պահւելու տեղ կար. մեզ պաշտպանող քարերը հազիւ էին պատսպարում մեզ. շարժւել՝ անկարելի էր։

Քիչ յետոյ բարձրացաւ սարսափելի ձիւնախառն բուք։ Այդքան վազած, քրտնած, բէզարած — հիմա էլ այդ բուքը... Սաստիկ մրսում էինք։ Սկիզբը մի քիչ „Լ՝ ը“ երգեցինք, բայց սիրտ չկար շարունակելու. թշնամու շատութիւնը մտատանջում էր մեզ... Մանաւանդ որ առաջին անգամն էր Ցաճկաստանում կռիւ ունէինք. ծանօթ չէինք թշնամու քաջութեան, նրա բնաւորութեան, նրա ռազմական հնարքներին։ Վերջապէս, տեղի պայմանները մեզ անծանօթ էին։ Կարծում էինք, թէ ահա ամենքը կը բշեն մեզ վրայ միանգամից, չեն նայի ընկած զոհերին ու կը կոտորեն մեզ բոլորիս։ Բայց շատ չանցաւ, տեսարանը փոխւեց. սրտերս ամրացան. թշնամու քաջութիւնը չափազանցրել էինք։ Քաջալերւեցինք ու աներկիւղ կուում էինք։ Ձիաւորներին օգնութեան հասան շրջակայ գիւղօրայքում բնակւող քրդերը։ Հաւա՛րով, վայրենի աղաղակներով, նրանք գալիս էին զանազան կողմերից, գալիս էին ձիաւորներ, սրարշաւ և հայհոյելով ու սպառնալով մեզ... Կռիւը շարունակւում էր բաւականին տաք։ Մեր դիմացի դիրքում զաբթիաներից մինը տեղից ելաւ ու կուզէկուզ փորձեց դիրքը փոխել, աւելի լաւը գրաւել։ Բայց մեր առաջի դիրքում գտնւած երեք հայդուկների գնդակներից իսկոյն գետին գլորւեց՝

Ուրախութեան քրքիջ բարձրացաւ մեր փոքրիկ բանակի մէջ, բարձրաձայն սպառնալիքներ ու հայհոյանքներ էինք ուղղում դէպի անիրաւները։

Փոթորիկը սարսափելի էր, անընդհատ ու ձիւնախառն հողմը փչում էր ու աչք բանալու հնարաւորութիւն չէր տալիս։ Ծխողներս իրար ետևից էինք ծխում, որ գուցէ դրանով փոքր ինչ տաքանանք։ Անզէններից մէկը ինձ համար գլանակներ էր պատրաստում ու քարի տակից դէպի ինձ նետում։ Կուի ժամանակ 15 հոգի էինք, մէկը վիրաւոր ու մերձիմահ ընկաւ ձորի մէջ. մնացած 14-ը 7 հրացաններով 3 դիրք էինք գրաւած. իրարից հեռու-հեռու։

Կուիը շարունակուեց մինչև արևամուտը։ Կամաց-կամաց ձիաւորները սկսեցին քաշուել։ Երբ մութն ընկաւ, այլ ևս ոչ մի ձայն չէր լսուում։ Մենք էլ բոլորս ի մի հաւաքուեցինք, տեսանք, որ մեզնից այլ ևս ոչ մէկը չէր վնասուել այդ բուռն կուի միջոցին. մեծ ուրախութեամբ հանդիպեցինք իրար, կարծես ամբողջ ամիսներով բաժանուած էինք։ Լուսնեակ գիշեր էր, բայց մեր բախտից՝ մի ամպ կտրեց լուսնի առջևը և մենք կարողացանք իջնել լեռից աննկատելի կերպով։ Գիշերը հանդարտ էր, ամենուրեք լռութիւն։ Ենգօն յայտնում է, որ մեզ հետ չի կարող գալ. ոտքերը ցաւում են. նա կերթայ գտնելու Սահակի դիակը և անկէ՝ դէպի գիւղ։ Մենք մեր ճանապարհը բռնեցինք ամենայն զգուշութեամբ, մի գուցէ շրջապատուած լինէինք։ Իսկ Ենգօն վերադարձաւ Սահակի դիակի մօտ։ Մեր ընկերը տակաւին չէր մեռած, միայն ցուրտը և վերքից հոսած արիւնն էր նրան թուլացրել։ Ենգօն, Սահակին շալակած մի քիչ տեղ տանում է, ապա գաղտագողի մտնում է գիւղը և իմաց տալիս մի երկուսին։ Գիւղացիք գալիս տանում են Սահակին և տեղաւորում մի խոտի դէզի մէջ, ուր և մնում է ամբողջ ցերեկը. կարողանում են միայն քիչ կաթ խմացնել, որ դժուարութեամբ է ընդունում։ Այդ նոյն գիշերը մտցնում են նրան մի ցորենի հորի մէջ, որպէս զի խուզարկութեան ժամանակ չգտնեն։ Այնտեղ էլ մեռնում է։

(Կը շարունակուի)

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՄԲԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Վերյիշենք դարձեալ նոյն 1890 թուականը... Շարժման արշալոյսն է. „Զայնը արդէն հնչել էր Էրզրումի լեռներէն“, կատարուել էր Էրզրումի մէջ անգրանիկ և արիւնոտ ցոյցը սուլթանական բռնակալութեան դէմ. թոյլ, վեհերոտ ստրուկը տուել էր իր գոյութեան առաջին ապացոյցը և արիւնակից Կովկասը փոթորկուել էր ծայրէ-ծայր։ Գաղտնի ժողովներ, ապստամբական կարմրավառ թռուցիկներ, խմբական տենդային պատրաստութիւններ և ամենուրեք նոյն պատմական ու սրտառուչ կոչը. „դէպի Հայաստա՞ն“։

Եւ մինչ խմբապետ-քարոզիչների շարանը „Դաշնակցութեան“ ղեկավարութեան տակ մղում էր Պարսկաստանի վրայից դէպի Վասպուրական՝ տրամադրութիւնները չափելու, խոպան հողը մշակելու և հասունցնելու ապստամբական կռիւների համար — անդին՝ քաջերի մի այլ խումբ, մի ամբողջ վաշտ, Պետերբուրգի արհեստագիտական դպրոցի ուսանող Սարգիս Կուկունեանի առաջնորդութեամբ, սլանում էր յաղթական թափորով Արարատեան դաշտի վրայից, Ալէքսանդրոպոլի,



Կուկունեան խումբ

Ղարսի և ամբողջ գծի հայ ազգաբնակութեան խանդավառ ցոյցերի մէջ, դէպի թիւրքական սահմանագլուխը, դէպի „Երկիր“, գնում էր պատժելու հարազատ ժողովրդի արիւնարբու ոսոխներին, վրէժխնդիր լինելու բաշիբոզուկ կառավարութիւնից ու քրդական հրոսակներից և դիմելու անյապաղ ապստամբական գործողութիւնների...

Խումբը, ինչպէս յայտնի է, սահմանի մօտ զարնուեց ռուսական կազակներին, ձերբակալուեց և դատուեց Երևանում. մի մասը, իբրև „քաղաքական յանցաւորներ“, աքսորուեց Սիբիր, տաժանակիր աշխատանքի վայրերը... Մի քանիսը մեռան այնտեղ, մի քանիսն էլ փախան, ապաստանեցին Պարսկաստան։

Դատը ունեցաւ մեծ շառաչում։ Առաջին անգամ նա

կոնկրետ կերպով և յստակօրէն ցոյց տուեց այն եղերական քաղաքականութիւնը, որ բռնել էր և պիտի շարունակէր Ալէքսանդր III-ի բթամիտ ռէժիմը հայութեան օրինաւոր տենչանքների վերաբերմամբ։ Մեր շարժման այդ նշանաւոր վայրկեանն է, որ կուզէինք վերարտադրել „Դրօշակ"ի մէջ, հրատարակելով Մեղադրական Ակտը որի պատճէնը պահւում է 22 տարուց ի վեր „Դաշնակցութեան արշիվներում"։

Մեր այդ պատմական լէգէօնը տուեց մի շարք փայլուն դէմքեր—հզօր՝ իրենց հայրենասիրութեամբ ու գաղափարականութեամբ — որոնք այլ և այլ ժամանակներ գնացին մասնակցելու „Դաշնակցութեան" շարքերի մէջ հայ ազատագրական պատերազմին։ Երկուսը այդ սիրելի դէմքերից անջնջելի տառերով արձանագրուած են մեր նորագոյն պատմութեան էջերում։ Մինը — „Պարսկաստանի Գարիբալդին", նահատակուեց քիչ առաջ։ Միւսը, ինքը խմբապետը, ապրում է... շղթայակիր, բանտի մէջ, ինչպէս 22 տարի սրանից առաջ, դատապարտուած վերստին 15-ամեայ սիբիրեան կատորգայի...

ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ *)

Երևանի Շրջանային Դատարանին են յանձնուած Նուխի գաւառի Նիժ գիւղի բնակիչ Սարգիս Մովսիսեան Կուկունեանց, 27 տարեկան, Երևանի բնակիչ Ստեփան Ցարութիւնեան (մականունը Ծերունի), 24 տարեկան, Թիֆլիս նահանգի Սղնախ գիւղի բնակիչ Կոնստանդին Լիսինեան, 25 տ., Թիֆլիսի բնակիչ Ռուբէն Ցովհաննիսեան, 24 տ., Ալէքսանդրօպոլի բնակիչներ Նիկողայոս Թոխմաչեան, 20 տ., Բարդողիմէոս Քեամանչաճեան, 21 տ., Մկրտիչ Մուրղուսեան (՞), 20 տ., Ալէքսանդրօպոլ գաւառի Իլխիաբա գիւղի բն. Մարտիրոս Գալստեան, 26 տ., Նոյն գաւառի Գօռօշ գիւղացի Մուրադ Կալմուկեանց (՞) կամ Մանուկեանց, 26 տ., Մօլա Գեօկչայ գիւղացի Գաբրիէլ Բօյաճեան, 22 տ., Ախալցխայի բն. Գրիգոր Աքմաչեան, 23 տ., Հարար գիւղացի (Զանգեզ. գաւ.) Մովսէս Մելքումեան, 28 տ., Գանձակի նահանգի Բարսում գիւղի բն. Լ. փրեմ Ասիրբեկեան Դաւթեան, 19 տ., Նոյն նահանգի և գաւառի Զեագլիկ գիւղի բն. Մեհրաբ Դաշօյեանց, 27 տ., շուշեցի Ցովհաննէս Մարգարեան, 23 տ., Թաքիր-Միրիբենդցի Արտեմ Խոսրովեան, 21 տ., Զանգեզուրի Ուջանաբաս գիւղացի Աբրահամ Ադամաեան, 23 տ., կաղզուանցի Գալուստ Սելզեան (՞), 22 տ., Կաղզուանի շրջ. Բաշքէոյ (՞) աւանի բն. Աւետիս Մանուկեան, 24 տ., Նոյն շրջանի Արշուանով (՞) գիւղի բն. Պօղոս Տէր Գրիգորեան, 40 տ., Մարգար Միրզայեանց, 29 տ., Եղօ Մանուկեան Առաքելեան, 36 տ., Սիմէոն Մանուկեան Առաքելեան, 27 տ., Թիւրքահպատակ՝ Հաճի Կարապետ Բալեան, 27 տ., Դաւիթ Գրիգորեան Զոլախեան, 25 տ., Ռուբէն Դերձակեան, Խաչատուր Հայկունի, 25 տ., Գրիգոր Տէր Մեսրոպեան, 22 տ., Առաքել Դաւթեան, 30 տ., Մամուտ Մխոյեանց, 20 տ., Մանուկ Գալստեան Խաչատրեան, 24 տ., Մինաս Մելքումեան, 25 տ., Արշակ Պետրոսեան, 24 տ., Գալուստ Կարապետեան, 25 տ., Պետրոս Գրիգորեան, 26 տ., Ղարսի Նահանգի Շօրագեալի շրջ. միջին քեադիկլեարցի Սարօ (նաև Դառուկ) Ցովհաննիսեան, Ղազօ Տարանեան (՞), 16 տ., Ներքին քեադիկլեարցի Վարդան Թիֆիլեան, 28 տ. և Մկրտիչ Հաջի Դանիելեան (մականունը Հրեա-Մկրտիչ), 25 տ.։

Բոլոր վերոյիշեալ անձերը մեղադրւում են սպանութեանց, աւազակութեանց մէջ, ապա և իշխանութեանը դիմադրելու մէջ։

Կաղզուանցի Ֆահրատ Կարապետեան, 27 տ., Մկրտիչ Վարոսեան (Մկօ), 27 տ., Ցովհաննէս Տէրպետրոսեան, 33 տ., Վարդան Աջաղլինեան (՞), 27 տ., Սիմէոն Մարգարեան, 33 տ. և Հայրապետ Ալէքսանեան, 27 տ., մեղադրւում են այն պատճառով, որ սպանութեանց մասին չեն տեղեկացրել իշխանութեանը։ Բոլոր ամբաստանեալները պահւում են հսկողութեան տակ։

1890 թ. սեպտեմբեր 26-ին, Կաղզուան աւանի բնակիչներ Աշրաֆ Մահմեդ Օղլի, Սէիդ Իբրահիմ Օղլի և Ռաջաֆ Իսօ Օղլի դուրս գալով Կաղզուանից դէպի անտառը փայտ բերելու, Գիւմիւշ-Թափայի վրայ հանդիպեցին մի խումբ հայերի, մի մասը ձիաւոր, միւսը ոտքով, ամենքն էլ եափունջիներով. շարժւում էին դէպի ցած, Արաքսի հոսանքով դէպի... *)։ Հարց ու փորձ անելով Աշրաֆ Մահմեդ Օղլիին և ուղեկիցներին և իմանալով նրանց մահմեդական լինելը՝ խումբը շրջապատեց նրանց։ Մէկը խմբի անդամներից դաշոյնով հարուած տուեց Աշրաֆ Մահմեդ Օղլիին։ Վերջինս ձիով էր և աջողեց խոյս տալ։ Փախաւ նաև Ռաջաֆ Իսօ Օղլին։ Իսկ երրորդը, Սէիդ Իբրահիմ Օղլին մնաց խմբի ձեռքում։ Բայց տեսնելով միւս երկու ընկերների փախուստը, խումբը նրան ևս արձակեց։

Առաջին փախչողը, Աշրաֆ Մահմեդ Օղլին, երկիւղ կրելով մի գուցէ իր երկու ընկերներն սպանուին, անյապաղ վերադարձաւ Կաղզուան և տեղեկացրեց դէպքի մասին Կաղզուանի գաւառապետին։ Եւ նոյն օրը, ժամը գիշերուայ երկուսին, գաւառապետի օգնականը՝ կապիտան Կուդուշեվ, առնելով իր հետ Աշրաֆ Մահմեդ Օղլիին և մի վաշտ կօզակներ ու միլիցիականներ, գնաց փնտրելու չարագործներին։ Արաքսի ափին, Գիւմիւշ-Քիւմբեթի և Կաղզուանի միջև, աղի հանքերի մօտ, կօզակները ձերբակալեցին երեք հայերի՝ Եփրեմ Դաւթեանց, Մեհրաբ Դաշօյեանց և Սահակ Ասրօեան։ Ձերբակալուածները նախ բացատրեցին, թէ եկած են Սարբղամիշից և ուխտի կերթան Էջմիածին։ Նրանցից իւրաքանչիւրը ուներ բերդանի հրացան, սարճանակ և դաշոյն։ Իւրաքանչիւրի մօտ — պատրօնդաշ, բերդանի հրացաններով։ Բացի այդ՝ մէկն ուներ սուլիչ, ամրացրած թոկի վրայ, կապած հրացանին։

Միևնոյն ժամանակ աղի պահեստներից մէկում ձերբակալւեց մի ուրիշ հայ, որ ինքզինքը կ'անուաներ պարսկաստանցի Մկրտիչ Պողոսեան (յետագայում պարզուեց, որ Շուշի քաղաքացի Ցովհաննէս Արզումանեան Մարգարեանն է)։ Վերջապէս, Արաքսը անցնելու միջոցին, կօզակները տեսան երկու ափերի վրայ մի քանի փամփուշտներ, որ անշուշտ նետուած էին գետն անցնող մարդկանց ձեռքով։ Մկրտիչ Պողոսեանը գինուած և հագնուած էր բոլորովին նոյն ձևով, ինչպէս առաջուան ձերբակալուածները։ Կապիտանի հարց ու փորձի վրայ՝ Պողոսեանը բացատրեց, որ ինքը և ձերբակալուած Եփրեմը, Դաշօյեանցն ու Մինասեանը գտնուում էին յետնապահ շարքերի մէջ 100 հոգուց բաղկացած հայկական մի խմբի, որ մտադիր էր անցնել սահմանը և մտնել Թիւրքիա՝ վրէժխնդիր լինելու քրդերից այն զրկանքների համար, որ վերջինները պատճառում են իրենց արիւնակից հայերին։ սակայն չորս օր լեռների մէջ մնալուց յետոյ, չուտենալով ուտելուի պաշար, խումբը իջել լեռներից Վարդիհեր վանքի կողմից և քայլել է Արաքսի ափերով, նրա հոսանքով։ Արաքսն անցնելիս, Պողոսեանը, իր ասելով,

*) Թարգմանում ենք ռուսերէնից բառացի, մի քանի անկարևոր հատուածներ կրճատելով։

*) Անընթեռնելի է։

ԽՄԲ.

կորցրել է հրացանը և ուժասպառ դառնալով, մտել է աղաղանքի պահեստներից մինը, հանգստանալու։ Պողոսեանի հրացանը (կավալերիական բերդան) կօզակները գտել են Արաքսի ափին։ Այդտեղ նշմարել են նաև հետքերը Արաքսն անցնող մարդկանց ու ձիերի սմբակների։

Ընկելով ձերբակալածներին Կաղզեան՝ կապիտան Կուզուշովը գնաց աղահանքերի մօտ, Արաքսի ափին գտնւող խառ գիւղը և այդտեղ հարց ու փորձ արեց տանուտէրին՝ չկա՞ն արդեօք դրսեցիներ գիւղի մէջ։ Խառի տանուտէրը պատասխանեց, որ ոչ ոքի չի տեսել։ Իսկ մուխտարը, Գրիգոր Ոսկանեան հաղորդեց, որ առաւօտեան տեսել է Խառի մէջ երեք իրեն անծանօթ հայերի։ Խառ գիւղը գտնւում է սարի վրայ։ Գիւղից քիչ վար՝ լեռնալանջերին, մեծ տարածութեան վրայ և սանդուխաձև Արաքսի հովիտով ձգւում են այգիները։ Խառից ցած, մօտիկ տարածութեան վրայ, Արաքսի հոսանքով փռւած են Ղարաբաղ և Քերս գիւղերը. իսկ գետի հակառակ եզերքին՝ Կաղզւանը։ Առաւօտեան ժամը 8-ին հասնելով Խառ գիւղը, կապիտանը կանգնեցրեց զինւոր Պողոսեանին գիւղի ամենաբարձր կէտում, հրամայելով նրան դիտել ուշադրութեամբ, չկա՞ն արդեօք մարդիկ այգիների մէջ։ Ինքն էլ սկսեց դիտել գիւղի միւս ծայրից. սակայն, ոչ մի շարժում չնկատուեց։ Մի քանի ժամանակից յետոյ, նրանց ուշադրութիւնը գրաւեց այգիների մէջից բարձրացող խարոյկի ծուխը։ Միևնոյն ժամանակ, ինքը կապիտանը նկատեց, որ Խառի այգիներից դուրս եկաւ ինչ որ ձիաւոր և ուղղւեց դէպի Ղարաբաղ գիւղը։ Կապիտանը գնաց դէպի ծուխը, բաժանելով կօզակներին երեք մասի։ Կօզակների մի մասը կապիտանի հետ դիմեց ուղղակի դէպի այնտեղը, ուր բարձրանում էր ծուխը. միւս մասը, Մուխտար Ոսկանեանի հետ, գնաց դէպի նոյն կէտը ձախ կողմից. երրորդ մասը, կօզակներ՝ Դէնիս Զախարով, Դմիտրի Պոպով և Լուկա Խիլայ, զինւոր Ղազար Մարտիրոսեանի հետ—գնաց աջ կողմից։

Քայլելով այգիների մէջ, այդ վերջին կօզակները հանդիպեցին մօտ 100 հոգուց բաղկացած հայկական խմբի։ Ոմանք նստած էին կրակի շուրջը, ուրիշները կանգնած կամ քայլում էին հրացանները ձեռին։ Կօզակների առջևից քայլող զինւոր Մարտիրոսեանը, մօտենալով անյայտ մարդկանց, ասաց հայերէն, որ եկել է գաւառապետը և ուզում է խօսել նրանց հետ։ Մարտիրոսեանը ասաց նաև, որ թողնեն հրացանները։ Այդ խօսքերին՝ խումբը պատասխանեց հայհոյանքով. ապա լուեց հրացանի տրաքոց, որին հետևեց զալպ, միահամուռ հրաձգութիւն այն հայերի կողմից, որոնք ձեռներին հրացան ունէին։ Կրակում էին Մարտիրոսեանի և կօզակների վրայ։ Խմբի միւս անդամները նետուեցին դէպի իրենց հրացանները, որոնք ծածկուած էին եափունջիներով, խարոյկի մօտ, ծառի տակ։ Իսկ նրանք, որոնք ժամանակ չունեցան հրացաններն առնել, հրացանաձգութիւնը սկսելուն պէս փախան ցրիւ այգիների մէջ։ Կօզակ Դէնիս Զախարով, որ ամենից առաջ էր կանգնած, վիրաւորւեց, և վիրաւոր վիճակում անցաւ ծառի ետևը, այնտեղից մի քանի անգամ կրակեց չարագործների վրայ, ապա ընկաւ գետնի վրայ, գոչեց. „եղբայրնե՛ր, պինդ կայէք“ և սողաց դէպի կաւաշէն պատը, ուսկից կրակում էին Պոպով և Խիլայ։ Կապակ Զախարովի դիակը անդամահատելիս, գտան, որ ստացել է հինգ վերք, ոտքերի և կրծքի մէջ։ Կօզակների գրնդակներից մահացու կերպով վիրաւորւեց չարագործներից մէկը։ Շուտով վերջինները սկսեցին յետ նահանջել դէպի Ղարաբաղ և Քերս գիւղերը, շարունակ գնդակներ թափելով կօզակների վրայ։

Հրացանների տրաքոցը լսւում էր այգիների այլ և այլ կողմերում։ Շիվիակին և խուդեակով կօզակները դիմեցին դէպի այն կէտերը, ուսկից թնդում էին հրացանները և տեսան ուրիշ հինգ ձիաւոր հայեր, որոնք կօզակներին տեսնելուն պէս՝ սկսեցին արձակել նրանց վրայ—նոյնպէս յետ նահանջելով դէպի Ղարաբաղ գիւղը։ Մէկը նրանցից ճերմակ ձի ունէր, միւսը սև, երրորդը՝ մոխրագոյն, չորրորդը՝ (՞)։ Կօզակների գնդակներից ճերմակ ձիաւորը վիրաւորւեց և ընկաւ ձիուց. բայց նա շուտով փախաւ անյայտացաւ։ Կօզակների թիւը փոքր լինելով, կապիտանը չվստահացաւ հետամուտ լինել նահանջողներին, թողեց հսկողութեան համար Խառ գիւղի մօտիկ լեռան վրայ չորս կօզակ մուխտար Ոսկանեանի հետ և տեղեկացրեց կառաւարչի մասին՝ Կաղզւան։ Ժամը 12-ին դէպքի տեղը ժամանեց Կաղզւանից Դերբենդեան 154-րդ գնդի մի վաշտ և մի ջոկատ Ղարսեան սահմանապահ բրիգադի։ Մինչև վաշտի գալը՝ կօզակները ձերբակալեցին Խառ գիւղի այգիներում փախած չարագործներից 9 հոգի։ Վաշտը ժամանելուց յետոյ՝ Խառ և Ղարաբաղ գիւղերի մէջև, Արաքսի ափին, ձորերի ու դաշտերի մէջ ձերբակալեցին դարձեալ 16 հոգի։ Մէկ հոգի էլ ձերբակալեց Ղարաբաղ գիւղում, ապա դարձեալ մէկը ժայռերի մէջ, որ յայտնեց, թէ պատկանում է նոյն խմբին։

Ինչպէս յայտնւեց, ձերբակալածներից մի քանիսը զինւած էին հրազէններով, երեք հոգի ունէին բերդանի փամփուշտներ ու ատրճանակ։ Բայց մեծ մասը առանց հրացանի ու ատրճանակի էին։ Ձորերի ու այգիների մէջ փախչող չարագործներից մէկը, որ գնդակներ էր արձակում հսկիչ կօզակների վրայ, սպանւեց վերջինների ձեռքով։ Խառի այգիներում, ուր խումբը տեղաւորւել էր, գտնւեցաւ՝ 28 հրացան բերդանի սիստեմի, 2-ը՝ Վինչեստրի, 2-ը՝ Պիրօզի, 4-ը՝ Մեյդերի և 2-ը... Ապա 11 դաշոյն, 2 սուր, 6 սուին, 1 ատրճանակ, 2..., 24 եափունջի, 6 պայուսակ լի փամփուշտներով ու այլ իրերով և 2 ձի, Այն ձիաւորները, որոնք հրացանաձգութեան ժամանակ յետ էին նահանջել դէպի Ղարաբաղ, սպանել են այդ գիւղի մօտ հրացանի գնդակներով երկու քիւրդ, Ցաշիր Մահմեդ Օղլի և Ալա Աբդուլա Օղլի։ Նոյն օրը, գիշերով, դէպի Շօրակեալ տանող ճանապարհի վրայ, Բօզարջիկ գիւղի մօտ, հսկիչ արշաւախմբի անդամներ Աբբաս Դունեամալի Օղլի և Բայրամ Ապահվերդի Օղլի հանդիպեցին 5 ձիաւորի։ Հսկիչների կոչին ձիաւորները պատասխանեցին գնդակներով։ Ապա ծռելով ճանապարհը, յիշեալ ձիաւորները դիմեցին դէպի... գետակի ճահճոտ եզերքները. այդտեղ վրայ հասան երկու թիւրք հսկիչները և երկուսին սպանեցին։ Սպանւածներից մէկը յաղթանդամ տղամարդ է, սև մօրուքով, չերքեզկայով և 39-րդ դիվիզիայի սպայի պօգօններով։ Ղարսի բանակի ուրեմդնիկ Աւետիք Փահլեվանեան, նրա դիակի հանդէպ, ճանաչեց յանձին նրա՝ նախկին տաժանակիր Սարգար Աւետիսեանին, Ալէքսանդրօպոլի գաւառի Կօլատաշի գիւղի նախկին բնակիչ։ Միւս սպանւածն է Մկրտիչ Պողոսեան։

Դէպքի վայրը դիտելուց յետոյ, Ղարսի շրջանի նախիջևան գաւառի կառավարիչ (գաւառապետ) սպայ Շախտախտինսկի, սեպտ. 27-ին, զինւորների ջոկատ առած, գնաց Խառ գիւղ, որոնելու փախած չարագործներին։ Նոյն օրը նա ձերբակալեց մի մարդ, որ թաղնւել էր ժայռերի մէջ և որ ինքզինքն անւանեց Գանձակի նահանգի բնակիչ Մովսէս Աղաբէկեան Մելքումեան։ Նա ունէր եափունջի և ատրճանակ։ Շախտախտինսկու վկայութեամբ՝ ձերբակալածը յայտարարել է, որ պատկանում է նոյն հայկական խմբին, որ Խառի մօտ դիմադրութիւն է ցոյց տւել Կաղզւանի գաւառապետի օգնականին։ Նրա հրացանը մնացել է Խառ գիւղի այգիներում։

Խմբի առաջնորդներն են Սարգիս Կուկուեան և Սարգար Աւետիսեան։ Խումբը բաղկացած էր 100 մարդուց։ Նա գնում էր Թիւրքիա՝ օգնելու համայեղ թիւրքահայերին. սակայն, երբ նա արդէն յայտնւել էր Թիւրքիայում՝ առաջնորդները որոշել են — Աղաբէկեանին անյայտ պատճառներով—վերադառնալ։ Այնուհետև խումբը դիմել է Կաղզւանի շրջանով դէպի Խառ։ Երբ Աղաբէկեանին հարց տւին՝ ի՞նչ էր արդեօք անում նա և իր համախոհները Թիւրքիոյ մէջ և հեռա՞ւ էին արդեօք գնացել թիւրքական հողի վրայ—Աղաբէկեանը չպատասխանեց։

Ձերբակալածների ընդհանուր թւից 14 հոգի՝ Սարգիս Կուկուեան, Գաւիթ Զոլախեան, Թուբէն Դերձակեան, Մկրտիչ Պողոսեան, Աւետիս Մանուկեան, Ռուբէն Յովհաննիսեան, Կոնստանդին Լիսինեան, Գրիգոր Ակմաչեան, Մեհրաբ Դաշօեան, Եփրեմ Գաւթեան, Իսահակ Մինասեան, Սաեփան Յարութիւնեան, Մարտիրոս Գալստեան և Մուրադ Կալմուկեան՝ յայտարարեցին, որ իրենք պատկանում են հայկական այն խմբին, որ գնում էր Թիւրքիա։ Ուրիշ 6 հոգի

(յիշատակւում են անունները) չուրանալով հանդերձ, որ իրենք մտադիր էին Թիւրքիա երթալու, միևնոյն նպատակով, ինչ որ առաջին խմբի անդամները—պնդեցին, որ իրենք այդ վերջին խմբի հետ կապ չունէին, այլ գնում էին առանձին։ Բոլոր միւսները (յիշ. անունները) յայտնեցին, որ իրենք բոլորովին պատահական զուգադիպութեամբ են գտնւել Խառի և Ղարաբաղի մէջ, ուր տեղի են ունեցել սեպտեմբերի 26-ի դէպքերը և ուր զօրքը ձերբակալել է չարագործներին։

Թէ ինչո՞ւ էին հաւաքւել Կողզանի շրջանում, ի՞նչ էր արդեօք խմբի նպատակը — այդ առթիւ հետևեալ բացատրութիւններն էին տալիս։

Խումբը գնում էր Թիւրքիա՝ ազատելու իր ցեղակիցներին տաճկական լծից և վրէժ հանելու քրդերից այն գազանութիւնների համար, որ նրանք գործ էին դրել հայերի վրայ, 1890-ի ամառ։ Մի քանիսի բացատրութեամբ՝ ռուսահայերի վաշտը նպատակ ուներ ձեռք բերել ավտոնոմիա, ինքնավարութիւն Թիւրքաց Հայաստանի համար, նման բուլղարականին։ Մի քանի ուրիշները երազում էին վերականգնել հին Հայաստանը և միացնել բոլոր հայաբնակ հողերը։ Վրէժխնդրութիւնը Թիւրքերի ու քիւրդերի հանդէպ պէտք է արտայայտւէր սպանութիւններով։ Մուրադ Կալմուկեանի բացատրութեան համաձայն՝ խմբի ղեկավարներից մէկը, Թիւրքահպատակ Յակոբ Սարկաւագը ասել է, որ եթէ խումբը յաղթութիւն տանէր քրդերի վրայ՝ նրանց գոյքերը պիտի բաժանեն հայերի մէջ։

Անդրկովկասի այլ և այլ ծայրերից համախմբւելով Թիֆլիսի մէջ, նրանք փոքրիկ խմբերով անցել են Ալէքսանդրոպոլի վրայով դէպի Ղարսի շրջանը, ապա դէպի Էջմիածին, Անի (հին Հայաստանի աւերակ-մայրաքաղաքը) և Շօրագեալի գաւառակը։ Ղարսի գաւառակի Բեռնա գիւղի մէջ խմբակները միացան ու կազմեցին մեծ խմբեր։ Այդ նոյն գիւղում նրանք ստացան հրացաններ և ուրիշ զէնքեր։ Մի մասը արդէն զինւած էր նախ քան այդ գիւղը ժամանելը։ Այդտեղից անցան Շահտեվանի վրայից՝ Զուրուկ գիւղ։ Այդտեղից էլ մտադիր էին անցնել Ալաշկերտի լեռնաշղթայով՝ Տաճկաստան. սակայն, երբ մօտեցան տաճկական սահմանապահին՝ նրանց հաղորդեցին, որ Սարկաւագի (միւս անունն է՝ Վարժապետ) ղեկավարութեան տակ գտնւած խումբը արդէն իսկ անցել է սահմանը։ Այդ պատճառով—նաև որովհետև ցուրտ էր լեռներում — նրանք որոշում են իրենց նպատակի իրագործումը յետաձգել գարնան։ Եւ գնում են Խառ։

Գեներալ Պետանդերի վկայութեամբ (Ղարսի շրջանի զինւոր. Նահանգապետի օգնական) խմբի մարդիկ հարց ու փորձի ժամանակ ասում էին, թէ „Ռուսաստանը" զուր տեղն է միջամտում իրենց պաշտպանած դատին, քանի որ խումբը Ռուսաստանին հակառակ չէ գործում։

Թէ ի՞նչ միջոցներով էին նրանք ուզում հասնել իրենց նպատակին,—ձերբակալւածներից ոմանք յայտնում էին այդ առթիւ, որ յոյս ունէին, թէ իրենց գործողութիւնները պիտի գրաւէին եւրոպական պետութիւնների, մասնաւորապէս Անգլիայի ուշադրութիւնը Թիւրքահայերի կացութեան վրայ և որ այդ պետութիւնների աջակցութեամբ պիտի իրագործւէր այն նպատակը, որի համար նրանք դիմում էին Թիւրքիա։

Շահդեվան տանող ճանապարհի վրայ, ուրիշ հայեր ևս միացան խմբին։ Վերջինը հասաւ Շահդեվան սեպտեմբեր 22-ին, շաբաթ օր, ապա գիշերով գնաց Թիւրքական սահմանագլխի վրայ գտնւող լեռները։ Երկուշաբթի օր հասան Թէքէ-Բինա սարը։ Այդտեղ է, որ խմացան, թէ 2 օր առաջ հայկական միւս խումբը (Սարկաւագի առաջնորդութեամբ) անցել է սահմանը, ընդհարում և հրացանաձգութիւն ունենալով Թիւրքաց սահմանապահ զօրքի հետ։

Կուկունեանի և Սարգարի առաջնորդած խումբը մտադիր էր, Թիւրքական սահմանն անցնելով, գիմել դէպի Սասուն, իբրև աւելի յարմար վայր Թիւրքերի դէմ մղելիք կռւի համար։ Այդտեղ կան շատ հայ գիւղեր։ Այդտեղ սարերը ծածկւած են անտառներով։ Տեղական քրդերը բարեկամ են հայերի հետ...

Խմբի անդամները ուսերի վրայ զինանշան ունէին հայկական „Մ. Հ." բառերով, որ նշանակում է „Միութիւն Հայաստանի"։ Սարգարը կրում էր 39-րդ դիվիզիայի սպայի զինանշան. շուշեցի Աբրահամը ուներ կարմիր, իսկ Կուկունեանը՝ ճերմակ զինանշան, երկու շատ խոշոր տառերով։

Սարգիս Կուկունեան, Կոնստանդին Լիսինեան և Ռուբէն Յովհաննիսեան մեկնել են Պետերբուրգից 1890-ի յուլիսի սկզբներում, եկել են Թիֆլիս, ուր հանդիպել են Թիւրքահպատակ Սարկաւագին։ Վերջինը համոզել է նրանց Թիւրքիա գնալու. պատմել է հայերի կրած ճնշումները, մատնացոյց է եղել ազատ Բուլգարիայի վրայ, խօսել է Անգլիայի անելիք օգնութեան մասին և ասել է, որ Ռուսաստանի վրայ ներկայումս անկարելի է յոյս դնել։

Թիֆլիսից՝ Կուկունեան, Լիսինեան և Յովհաննիսեան գիմել են Ալէքսանդրոպոլ, այնտեղից՝ Ղարսի շրջանը։ Կուկունեան յայտնեց, որ իր խմբի մէջ եղել է 100 մարդ, որոնցից 20-ը՝ ձիաւոր։ Հաւաքել է նա այդ խումբը 2 ամսւայ ընթացքում, Ղարսի շրջանի և Ալէքսանդրոպոլի մէջ։ Նա ինքը ձիով պտոյտներ է գործել Ղարսի շրջանում՝ խումբը կազմակերպելու համար։ Խմբի անդամները զինւած էին արագաձիգ զէնքերով։ Գնել են նրանք մասամբ իր, Կուկունեանի, անձնական միջոցներով, մասամբ էլ նուիրաբերւած դրամներով։ Փամփուշտները գնել են Սարդարամիշում, նմանապէս Ղարսում ու Ալէքսանդրոպոլում։ Շահդեվան գիւղի մօտ հաւաքելով՝ խումբը դիմել է սահմանի լեռները, ուր մնացել է 2 օր։ Լեռների մէջ խմբից յետ են մնացել 25 մարդ։ Խումբը իջել է Խառ գիւղը, յետ մնացածներին սպասելու և նոր կամաւորներ հաւաքելու համար։ Կոնստանդին Լիսինեանի բացատրութեան համաձայն՝ նա ինքը գնացել է Շօրագեալ, այնտեղից Ալէքսանդրոպոլ, ուր հանդիպել է սարկաւագ Յակոբին և Կուկունեանին, որոնք ղրկել են նրան, Լիսինեանին, Ղարս։ Ղարսից Լիսինեանը գնացել է Սարդարամիշ, ապա Արմութլի գիւղը, ուր տեղեկացել է Աբրահամ Տէր-Անդրէասեանի սպանութեան մասին սահմանապահ զինւորների ձեռքով։ (Ինչպէս կը տեսնենք, Աբրահամ Տէր Անդրէասեանը նոյնպէս գնացել էր ուրիշ հայերի հետ Արմութլի գիւղը, Թիւրքիա անցնելու համար. հանդիպելով սահմանապահ զինւորներին, դոյց է տւել նրանց զինւած դիմադրութիւն և սպանւել է նրանց ձեռքով)։

Սարգիս Կուկունեանին խուզարկելու ժամանակ՝ գտնել են նրա մօտ նամակներ և նօթեր հայերէն լեզուով։ Այդ նամակներից մէկում, անյայտ հեղինակը հրաւիրում է Կուկունեանին մտնել, իբրև անդամ, Ընկերութեան մէջ, որ հպատակւում է Վարչութեան։ Ապա շարունակում է նամակագիրը. քանի Ընկերութեան անդամները կը գտնւին Ռուսաստանում, նրանք պարտաւոր են հնազանդւել Վարչութեան։ „Ուրեմն, դու ևս (դիմելով Կուկունեանին) լինելով գործօն անհատ և գտնւելով Ռուսաստանում, կատարելապէս հնազանդւում ես Վարչութեան և պարտաւոր ես, ինչպէս ամէն մի այլ անդամ, կատարել նրա հրահանգները։ Այլապէս՝ դա կը լինի պետութիւն պետութեան մէջ։ Եթէ ուզում ես Ընկերութեան աջակցութիւնը—դրամով, զէնքով, մարդկանցով—պէտք է բոլորովին հնազանդւես նրան։ Նամակի վերջում հեղինակը յոյս է յայտնում, որ Կուկունեան չպիտի կամենայ գործել առանձնացած, և որ նա կը միանայ այն մարդկանց, որոնք կապւած են սուրբ գործով։ Կուկունեանի մօտ գտնւած երկրորդ նամակը գրւած է գաղտագրով, պայմանական նշաններով։ Ծոցատետրի մէջ գտնւեց, սակայն բանալին և այդ նամակն ևս կարդացւեց։ Նրա տակը ստորագրւած է „Վարչութիւն"։ Վերջինը տեղեկացնում է Կուկունեանին, որ ստացել է նրա նամակը։ Շենք կասկածում, ասւած է նամակի մէջ, որ դու ունենալով Սուրբ Գործը իրբև նպատակ, պիտի համաձայնւիս գործել համերաշխ և ընդունել այն կանոնագրութիւնը, որին հնազանդւում են Ընկերութեան մէջ մտնող բոլոր անձերը։ Եկած լինելով այն համոզումին, որ նախ անհրաժեշտ է զէնք մատակարարել Թիւրքահայերին, Վարչութիւնը լիազօրութիւն է տալիս Կուկունեանին մտնել այդ նպատակով բանակցութեան մէջ Ղարսի խմբակի հետ, ըստ կարելւոյն շուտ իրագործելու համար այդ հրատապ կարիքը. այն է՝ ստանալ Ղարսի խմ-

բակից միջոցներ, որոնք անհրաժեշտ են յիշեալ նպատակն իրագործելու համար և նոյն խմբակի հետ խորհրդակցելով, կազմել Կուկունեանի տրամադրութեան տակ գտնուած մարդկանց մի խումբ, որ ընդունակ լինի զբաղուել այդ գործով, իսկ մնացած մարդկանց վերաբերմամբ տնօրինել այնպէս, ինչպէս որ կը գրուի Ղարսի խմբակին (կոմիտէին)։ Վարչութիւնը ի գործ կը դնէ իր բոլոր ճիգերը՝ գտնելու համար մօտիկ ապագայում ըստ կարելւոյն մեծ քանակութեամբ զէնք։

Կուկունեանի մօտ գտնուած երրորդ նամակի մէջ, նրա Թիֆլիսեան ծանօթը հաղորդում է, որ Ղարսի ոստիկանութիւնը տեղեկացել է նրա, Կուկունեանի, գործողութիւնների մասին, և խորհուրդ է տալիս (նամակի հեղինակը), որ Կուկունեանը իր պետերբուրգեան հինգ ընկերների հետ, ըստ կարելւոյն շուտով անցնի Թիւրքիա։ Մնացած կամաւորները, ասուած է նամակի մէջ, կասկածները հեռացնելու համար՝ պէտք է անցնին Երևանեան նահանգը։ Նամակի հեղինակը աւելացնում է, որ Թիֆլիս է եկել Շախտախտինսկին և պատում է Շերեմետեւին (կովկասեան կառավարչապետին) զեկուցումն ներկայացնելու համար. ասում է, որ ձեզ բոլորիդ ճանաչում է, գիտէ, թէ որտեղ էք գտնուում և պատում է կառավարութեան հրամանին՝ իր ընթացքը որոշելու համար։ Նամակի հեղինակը տեղեկացնում է Կուկունեանին, որ հրացաններ առայժմ չի գրկի, որ նա շատ թշնամիներ ունի և որ նրան աջակցութիւն ցոյց կը տուի, հենց որ փոքր ինչ առաջ կը մղէ գործը։ Առանձին թախանձանքով նամակագիրը համոզում է Կուկունեանին, որ շտապէ գէթ իր 5 պետերբուրգեան ընկերներով Թիւրքիա անցնել, ի նկատի ունենալով ռուս կառավարութեան կողմից սպառնացող վտանգը։ Միւս ընկերները կարող են Թիւրքիա անցնել—նաև Իդդիրով։ Նամակի վերջում ասուած է, որ եթէ Կուկունեանը ուզում է լուծել իր թշնամիներին, պէտք է շուտով Թիւրքիա երթայ. Թիֆլիսի մէջ լուր է տարածուել, իբր թէ Կուկունեանը վախենում է Թիւրքիա անցնել, բայց իր վերջին նամակով նա (Կուկ.) „փակեց բոլոր կասկածողների բերանները“։

Այդ նամակի թուականն է 8 սեպտեմբեր 1890։ Ծրարի հասցէից երևում է, որ նամակն ուղղուած է եղել Թիֆլիսից Սարգիսին, տեղացի վաճառական Կարապետ Խաչատրեանին, յանձնելու համար Սարգիս Կուկունեանին։

Չորրորդ նամակը (գտնուած նոյն Կուկունեանի մօտ) ստորագրուած է Վարչութեան մի անդամի կողմից։ Այդտեղ հաղորդուում է Վարչութեան վերջին որոշումը Կուկունեանի և նրա մարդկանց գործողութիւնների մասին։ Առաջին կէտում ասուած է. „աշխատիր ըստ կարելւոյն շուտով“... շարունակութիւնը անընթեռնելի է, բայց նամակի ամբողջ պարունակութիւնից երևաց, որ ուզում է ասել. „աշխատիր ըստ կարելւոյն շուտ անցնել Թիւրքիա“։ Երկրորդ կէտում ասուած է. „այն մարդկանց, որոնց անկարելի է այժմ իսկ բերել, աշխատիր ցրուել զանազան տեղերում, բայց ոչ Ղարսի շրջանում և ոչ էլ իրենց ծննդավայրերում։ Թիւրքիա գնացողները պէտք է բաժանուին առանձին խմբերի, պէտք է երթան կարաւանային ճամբաներով։ Կամաւորների միւս մասը պէտք է զբաղուի ժողովրդին զէնք բաժանելով։ Երրորդ մասը խաղաղ կերպով պէտք է մտնի ժողովրդի մէջ“։ Ինչպէս ասուած է նամակի վերջում՝ Վարչութիւնը չի ցանկանում (*) խմբից ակտիվ գործունէութիւն, բացի Սերվազի խմբից (*)։ Նամակի մէջ տուած բոլոր առաջարկների մասին Կուկունեանցը պէտք է խորհրդակցէ Ղարսի մասնաճիւղի հետ, որին Վարչութիւնը յանձնարարում է զբաղուել Կուկունեանի հետ միասին կամաւորների բաշխումով։ (Վարչութիւնը այդ նամակը ղրկած է Կուկունեանին վստահելի մարդու ձեռքով։ Նամակի մէջ ասուած է. „ուղարկում ենք մ ե ր մ ա ր դ ո ւ ն... Նա քեզ կը հաղորդէ մեր վերջին որոշումը“)։ Կուկունեանից խլուած թղթերից մէկի վրայ—որի պարունակութիւնը չունի անմիջական առնչութիւն նրա գործողութիւնների հետ — մատիտով գրուած է հետևեալը. „Օրթա-Քեադիկլար, այսինչի տունը“ (այդ մարդու անունը նշանակուած է նամակի մէջ)։

Կուկունեանի ծոցաթղթերի մէջ գտնուեց չորս անանցուցակ. իր խմբի մէջ մտած մարդկանց անունները, նրանց բնակատեղին, ապա նրանց յատկացուած զէնքերը, զգեստները։ Երկու թղթերի վրայ նշանակուած են այն գիւղերը, որոնց մէջ պահուում էին զէնքերը... Օրինակ, այսպէս. „Զուրուղ, Տէր-Խաչատուրի մօտ, 14 հրացան, մի խուրջին... պահեստի դրուած... թաղուած ժամի մէջ, աջ կողմը գտնուող նկուղում... փոխադրուած է նրա ասելով... (անընթեռնելի)... թագցրել է գեռնի տակ նաև պադրոնտաշները, ատրճանակները, դաշոյնները“։ „Զուրուկ“, Մանուկի մօտ 16 հրացան, 2 քսակ և 1 խուրջին. առաջ թագցրուած էին դարմանոցում։ Մի քանի ջահէլների ատրճանակները, դաշոյնները, փամփուշտամանները և եափուջիները գտնուում են մի քանի անձերի մօտ, որոնց անունները գիտէ Օսէփ քեօխան։ Օսէփ, Մանուկ և Յովհաննէս քեօխաները (գիւղերի տանուտէրներ) խնդրել են Մ-ից 5 հրացան“ և ն։

Զուրուկ և Արմութլի գիւղերը, վկայութեամբ խավալվի և Դրաչէվի (վերջինս Կաղզուանի շրջանի գաւառապետն է), եղել են Կուկունեան խմբի հաւաքման կենտրոններ, նախքան նրա մեկնիլը դէպի Թիւրքիա։ 1890 թ. օգոստոսի սկզբում խաբելով հրահանգ ստացաւ միջոցներ ձեռք առնելու այն հայերի դէմ, որոնք պէտք է համախմբուին Զուրուկ գիւղի մէջ և ապա մեկնին դէպի Տաճկաստան։ Նրա հաւաքած տեղեկութիւններից պարզուեց, որ Զուրուկի մէջ եղել են 7 հոգի, իսկ Արմութլի՝ մօտ 30 մարդ։ Ամենքն էլ Թիւրքիա պիտի անցնէին։

Օգոստոսի 14-ին սահմանապահ զօրքի Սատաչանակի բաժնի հրամանատար Բէլէկօզ, տեղեկանալով, որ Զուրուկ գիւղի մէջ հայեր են հաւաքուած, զէնքով սահմանազլուխն անցնելու համար, դիմեց մի խումբ ստրաժնիկներով դէպի յիշեալ գիւղը և նկատեց երկու մարդ, որ շուտաքայլ հեռանում էին գիւղից, անցնում էին կիրճով։ Երբ ստրաժնիկները սկսեցին հետապնդել նրանց, մէկը նրանցից նստելով ժայռերի մէջ, մի քանի գնդակ արձակեց ստրաժնիկների վրայ և հրայանաձգութեան միջոցին սպանուեց։ Իսկ նրա ուղեկիցը, Դաղեթ-Խաչի բնակիչ (Թիֆլ. նահանգ.) Ալէքսան Մկրտիչեան յայտարարեց զինուորներին, որ ինքը եկել է ուրիշ հայերի հետ Զուրուկ գիւղը՝ Թիւրքիա անցնելու և օգնելու համար իր ցեղակիցներին, որոնց նեղում են տաճիկներն ու քիւրդերը։ Նրա ասելով, Զուրուկ գիւղում կային 5 ընկերներ, եկած նոյն նպատակով խորասանի շրջանից։ Պօրուչիկ Բէլօկօզ ձերբակալեց նրանց Զուրուկից-Արմութլի տանող ճանապարհի վրայ։ Նրանք ախալցխացիներ էին և յայտնեցին, որ չեն ճանաչում՝ ոչ Ալէքսան Մկրտչեանին և ոչ էլ նրա սպանուած ուղեկիցին, որ իրենք ուխտի էին գնում Ախալցխայից „Վարդիվեր“ վանքը, իսկ Արմութլի մտել էին...? գնելու համար։ Յետոյ պարզուեց, որ Մկրտչեանի սպանուած ուղեկիցը նրա համագիւղացի Աբրահամ Տէր Անդրէասեանն է, որը Թիֆլիսի կայարանում մի գիշերապահ (դօրօգօվոյ) սպանելուց յետոյ, թագնուել էր և այլ ևս չէր գտնուել։

Օգոստոսի 15-ին կապիտան Կուգուշեվ գրում էր Դրաչեվին, որ օգ. 12-ին 9 հայ են մտել Արմութլի և Զուրուկ գիւղերը. ապա 18 հոգի լրջի զգեստով օգոստ. 15-ին պէտք է մեկնեն խառ գիւղից նոյն գիւղերը երթալու համար, որ Զուրուկ ու Արմութլի պահուած են 70 բերդանի հրացաններ, որ ընդամենը Զուրուկի մէջ պիտի հաւաքուին 80 հոգի, ապա զինուելով պիտի երթան Թիւրքիա, որ խումբը յոյս ունի սահմանն անցնելու աննկատելի կերպով, բայց եթէ հանդիպելու լինի սահմանապահ զինուորներին՝ պիտի դիմադրէ։ Այդ տեղեկութիւնները Կուգուշեվ ստացել է մի անձից, որը հայ կամաւորների վստահութիւնը շահելով, տեղեկացել է նրանց նպատակներին և պատրաստութիւններին։ Մի երկրորդ նամակով՝ Կուգուշեվը հաղորդում էր Դրաչեվին (22 օգոստ.), որ 16 հայ, կամենալով խառից երթալ խորասանի գաւառը և տեղեկանալով օգոստ. 14-ի Զուրուկի դէպքի մասին, գնացել են Ղարս։ Հաղորդում էր նաև, որ Շահդեվան գիւղում կան 90 բերդաններ և 7 արկղ փամփուշտ, Զուրուկի մէջ 7 բերդան. իմանալով սակայն, որ զինուորական նահանգապետի օգնական Պետանդերը շուտով խուզարկութիւն պիտի կատարէ Զուրուկի և այլ գիւղերի մէջ—զէնքերը պահող հայերը փոխադրեցին այդ

գէնքերը և թագցրին Շահդեվանի և Զուրուկի հայ եկեղեցիների մէջ...

Արմութլի գիւղը գալով, ենթասպայ Մելիք Բգնունի դիմեց այդ գիւղի պատուաւոր բնակիչ Սարգիս Հայրապետեան Մարկոսեանին, նոյն գիւղի տանուտէր Բաբի Մուրադեանին և այլոց, դիմեց նաև ուրիշ մօտակայ գիւղերի պատուաւոր բնակիչներին ու վաճառականներին, խնդրելով նրանց բոլորին՝ օգնութեան գալ թիւրքիա գնացող հայկական խմբին։ Եւ ահա երբ այդ անձերը լիակատար պատրաստականութիւն յայտնեցին իրենց աջակցութիւնը ցոյց տալու, այն ժամանակ կամաւորները սկսեցին համախմբուել Անդրկովկասի այլ և այլ տեղերից՝ Խորասան դաւառի գիւղօրայքում։

(Կը շարունակուի)

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՍՕ

(ԾՆՆԴԵԱՆ 200-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Հազուագիւտ տօներից մինը... Ֆրանսիական Յեղափոխութեան անզուգական մարգարէն է, որ իր հսկայ հասակով վերուստին կանգնում է լուսաւոր մարդկութեան առջև և պահանջում նրանից յարգանքի, զմայլումի ու երախտագիտութեան տուրքը։

Եւ տօնում է ողջ աշխարհը։ Տօնում է ռամկավարական Ֆրանսիան իր պատմութեան մեծագոյն գրուագի հրաբխաշունչ հերոսին։

Տօնում է մի առանձին բերկրանքով Ժան-Ժակի ծննդավայր — Ժ ը ն և ը, փոքրիկ, կոմպակտ, մտաւորական կենտրոնը, որ հպարտ է իր մեծանուն զաւակով, հպարտ է և իր հինաւուրց քաղաքակրթութեամբ ու ազատութեամբ։

Դրօշակները ծածանւում են Ժընէվեան հանրապետութեան համեստ բուրգերի վրայ, ժողովուրդը ցոյցեր ու խրախճաններ է սարքում հայրենասիրական ամենամեծ գինովութեան մէջ, ճառերն ու ծափերը որոտում են Լէմանի վճիտ ջրերի շուրջը, մեծ և սիրուած հայրենակցի հասցէին, 200 տարի նրա մահից յետոյ, այն նիւթական վայրերում, ուր Ժան-Ժակը ապրել է—դառնութեան ու տառապանքի մէջ—իր ալեծուփ և արկածալի կեանքի մի մասը...

I

Երկերի ծագումը

Համաշխարհային գրականութեան և կուլտուրայի պատմութեան մէջ Ռուսսոի դէմքը ամենաուշագրաւներից է։ Այսպիսի գրողներ դարերի ընթացքում յաճախ չեն երևում։ Յառաջադիմութեան միապաղաղ ու խուլ գնացքի մէջ՝ նրանք դուրս են ցցւում մի առանձին ուժով, փոթորկում ժողովուրդների միտքն ու հասարակական կարգը։ Երբ յետադարձ ակնարկով դիտում ենք այն երկարաձիգ ճանապարհը, որ անցել է մարդկութիւնը իր բարոյական և մտաւոր արժէքները երկնելիս՝ Ռուսսոի պատկերը այդ մեծ ուղիի գագաթնակէտերին է ներկայանում։ Նա մարդկային քաղաքակրթական ուժերի այն սակաւաթիւ խտացումներից է, որ իջնում է պատմական ասպարէզ՝ մէկ օր Սոկրատի, Պլատոնի, Արիստոտէլի, միւս օր՝ Դեկարտի, Լօկկի, երրորդ օր՝ Կանտի, Սպենսերի անունով։

Ռուսսոի անձնաւորութեան մէջ դարերի իդէալներն են ժողովւում, նրա մտքի մէջ մարդկութեան զգացմունքներն են կենտրոնանում։ Եթէ այդպիսի անհատներ աշխարհը չծնի՝ հաւաքական իմաստութեան, ժողովրդական ուժի ալիքները ցրուած ու տեղատուած կը մնան և քաղաքակրթութեան ու պրոգրէսի գործը անհունապէս կը դժուարանայ։

Ռուսսոի պէս մեծ հեղինակներն են կարողանում հաւաքել մարդկութեան հանճարը, բռնել ժամանակի և տարածութեան մէջ լողացող ոգին։ Նրանք են, որ այդ հանճարի և այդ ոգու օգնութեամբ կարողանում են ուղղել մեր նաւի ընթացքը, շարժել մեր կեանքը, լուսաւորել մեր անյայտ, անծանօթ ճանապարհը։

Ռուսսոն իր խօսքն ասաց գրական-գեղարուեստական աշխարհին։ Այդ միջավայրի սկզբունքները փոխուեցին, սրբագրուեցին, կատարելագործուեցին նրա հրահանգի համաձայն։

Ռուսսոն իր խօսքն ասաց սոցիալական կազմին։ Հասարակութեան կառուցուածքը, մարդկանց վիճակն ու ճակատագիրը, դասակարգերի յարաբերութիւնները նրա երկերի մէջ ուժգին ու անկեղծ վերլուծման ենթարկուեցին։

Ռուսսոն զգացմունքով ու բարձրաձայն խօսեց նաև քաղաքական-իրաւական կարգերի մասին։ Բռնակալի և ստրուկի, տիրողի և տիրուողի յաւիտենական առեղծուածը նրա աշխատանքների մէջ որոշ, կարուկ լուծումն ստացաւ։

Ռուսսոն կանգ առաւ նաև, սիրով ու յուզմունքով, դաստիարակութեան մեծ պրոբլեմի առջև։ Նա ցոյց տուեց՝ թէ ինչպէս պիտի զարգանայ մարդը, ինչպէս պիտի կրթուի անհատը՝ երջանիկ, ուժեղ, բարի լինելու համար։

Քաղաքակրթութեան այս մեծ խնդիրների մասին խօսեց նա, խօսեց առանց վարանումի, առանց տատանման, առանց կեղծիքի ու շահախնդրութեան։ Մարդկութիւնը երկար ժամանակներից ի վեր չէր լսել այնպիսի ազատ ու համարձակ խօսք։ Ի՞նչոր ասաց մեծանուն մարգարէն՝ սրտի՞ց ասաց, համոզմունքով ասաց։ Նա հաւատաց իր ներքին ձայնին և այդ հաւատքը անխախտ ու անայլայլ, մարդկութեան հաղորդեց։ Կուզէինք այսօր, նրա ծննդեան երկհարիւրամեակի առիթով, մի քանի խօսք ասել այդ ձայնի բովանդակութեան մասին, համառօտակի ներկայացնել նրա ծագումը, նրա էութիւնը և նրա դերը...

—

Որտեղի՞ց եկաւ այդ ձայնը և ի՞նչ աղբիւրից սկզբնաւորուեց։

Նախ և առաջ հին աշխարհը, որի կեանքն ու պատմութիւնը Ռուսսոյի երկերում յաճախ յիշատակւում են։ Յունաստանը և Հռոմը դարերի հեռաւորութիւնից ներգործում են նրա երևակայութեան, նրա խոհերի վրայ։ Անշուշտ միապետական Յունաստանը չէ այդ, որ գրաւում է տասնութերորդ դարի փիլիսոփային և ոչ էլ կայսերական Հռոմը, որ ժպտում է Ռուսսոյի հայեացքին։ Երկու տեղն էլ նրան հանրապետական, ռամկավարական շրջաններն են հետաքրքրում։ Այդ հինաւուրց երկիրների մէջ գեղարուեստների փայլը, գիտութիւնների զարգացումը և ընդհանրապէս քաղաքակրթութեան ծաւալումը չէր դրական կերպարանքով յայտնւում Ժան-Ժակին։ Ընդհակառակը. նա դրանց դէմ, կեանքի այդ ճոխ արտայայտութիւնների դէմ դժգոհութեան, ցասումի խօսքեր ունէր։ Ժողովրդական ուժի, ժողովրդական կառավարութեան փաստերն էին հաղորդւում նրա որոնող հոգուն։ Այն բոլոր դէպքերում, երբ Հռոմն ու Յունաստանը կարողացել են թօթափել բռնաւորի լուծը և իրագործել „ռամիկի“ իշխանութիւնը — այդտեղ են նրանք Ռուսսոյին բարեկամ։

Բացի հին աշխարհի կարգերից և իրողութիւններից՝ „Contrat Social“-ի հեղինակը նրանց իդեաների մէջ էլ գտել է ոգևորութեան սաղմեր։

Նա կարդացել, խորհրդածել է Արիստոտէլին, բայց իր գրուածքների մէջ ոչ մի տեղ նրա իմաստութեան և հեղինակութեան վրայ չի հիանում։ „Politique“-ի հանճարեղ ստեղծագործողը, որքան էլ իրապէս մեծ լինէր, չէր կարող հրապուրել „ժողովրդական գերիշխանութեան“ համոզած փիլիսոփային։ Արիստոտէլը իր պաշտպանութեան տակ էր առել հին աշխարհի ստրկատիրական կարգերը, Արիստոտէլը չէր ըմբոստանում անհաւասարութեան ռէժիմի դէմ. ռէժիմ, որ այնքան բացայայտ կերպով հարուածում էր մարդու „բնական իրաւունքը“։ Ռուսսոն բացասաբար միայն կարող էր վերաբերուել դէպի մի այդպիսի փիլիսոփայութիւն։

Պլատոնի և Սոկրատի համար նա այդ դիրքը չունի։ „Rébuplique“-ի հեղինակը նրան հաճելի է իր հաւասարութեան քարոզով։ Այդ իմաստասէրի մէջ Ռուսսոն տեսնում է այն արդարութիւնն ու իրաւունքը, որ հին աշխարհը կարող էր կտակել յետնորդ դարերին և որի վրայ նոր աշխարհը կարող էր հիմնել իր իդէալները։ Միւս կողմից՝ Սոկրատի անհատական վարքը, նրա ապրելու պարզ եղանակը, նրա առաքինութիւնը, նրա արհամարհանքը դէպի մեծերը և կասկածը դէպի գիտութիւնը—համակրելի էին Ռուսսոյին։ Հին աշխարհի այդ երկու նշանաւոր փիլիսոփաների գործն ու կեանքը որոշ ազդեցութիւն ունեցան Ռուսսոյի տրամադրութեան վրայ։

Նոր ժամանակներից նա աւելի բան ստացաւ։ Իտալական և մանաւանդ ֆրանսիական վերածնութիւնը գրական և հասարակական տեսակէտով՝ նշանակելի ծառայութիւն մատուցին նրան։ Երկու-երեք դար շարունակ այս կամ այն հեղինակը—բանաստեղծը, բարոյագէտը, փիլիսոփան—իրենց աշխատութիւնների մէջ շօշափում էին Ռուսսոյի սիրած նիւթերը։ Եթէ նրանք չէին կարողանում կամ չէին մտածում այդ իմաստով մի սիստեմատիկ, որոշ ու պարզ աշխարհայեացք ներկայացնել—այնուամենայնիւ տալիս էին այն տարրերը, որոնք անհրաժեշտ էին մի այդպիսի աշխարհայեցութեան համար։ Այդ տարրերը յաճախ ցրուած էին, յաճախ անգիտակից և անկապակից, բայց և այնպէս գոյութիւն ունէին։

Մի քանի մատենագիրներ՝ ֆրանսիական վերածնունդից սկսած մինչև տասնութերորդ դարի հանրագիտական շարժումը՝ բաւական զգալի աշակցութիւն ցոյց տուին Ռուսսոյի փիլիսոփայութեան։ Այդ շարքի մէջ հնագոյն տեղն են գրաւում Ռաբլէ (*Rabelais*) և Մոնտէյն (*Montaigne*)։ Բնական վիճակի, բնական առաքինութիւնների նկարագրութիւնը սրանցից է սկիզբն առնում։ Սրանք են, որ մանաւանդ դաստիարակութեան մէջ սխոլաստիկայի այն չոր դարում, բնական միջոցների օգտակարութիւնը վեր հանեցին։

Միապետական և սահմանադրական վարչաձևի պրոբլեմը Ռուսսոն մասամբ Մոնտեսքիոից դուրս բերեց։ Տասնութերորդ դարի այդ լրջմիտ, ծանրախոհ մատենագիրը իր „Օրէնքների Ոգին“ դասական աշխատութեամբ շատ խնդիրներ յուզեց և շատ մարդկանց վրայ ազդեց։ Հաւասարութեան և անհաւասարութեան կնճիռը, որ Ռուսսոի գործունէութեան հիմնական լարն է, այստեղ է ցուցահանուած։ Միայն թէ՝ Մոնտէսքիոն կանգ էր առել բացառապէս քաղաքական անհաւասարութեան վրայ և չէր զբաղուել տնտեսական անհաւասարութեամբ։ Ռուսսոն արձագանք տալով Մոնտեսքիոի աշխարհհայեացքին՝ կարողացաւ աւելի խորը հասկանալ անհաւասարութեան պրոբլեմը և աւելի հիմնապէս ներկայացնել այն։

Բնագիտական-փիլիսոփայական խնդիրներում Ռուսսոն ներշնչուեց Բիւֆֆոնի գործով։ Այս հեղինակի հռչակաւոր „Histoire naturelle“-ի մէջ բնութեան փիլիսոփան ուսումնասիրելու, իւրացնելու շատ բան գտաւ։ Անասնական և մարդկային հասարակութիւնների համեմատութիւնն ու նմանութիւնը, վայրենիի և կենդանիի դրացիութիւնը, նրանց հոգեկան և մտաւոր վիճակների մերձաւորութիւնը, կերպարանափոխութեան, զարգացման գաղափարը, բնաշրջումի նախնական սկզբունքը — որոնցով Բիւֆֆոն հանդիսանում էր Լամարկի և Դարվինի տաղանդաւոր նախորդը — այդ բոլորը Ռուսսոն նրանից ստացաւ։

Նշանակելի է նաև Դիդրօի դերը այս գործոնների շարքում։ Քաղաքակրթութեան դէմ ունեցած Ռուսսոյի բացասական տրամադրութիւնը նախապէս նրանով ամ-

բաղնդուեց։ Մինչև Ժան-Ժակի երևումը Ֆրանսիական գրականութեան մէջ Դիդրոն էր յայտնի իր այդպիսի դիրքով. նա էր քաղաքակրթութեան շարիքները խարազանում, նա էր բնութեան ներբողը անում։ Նա էր արտասանել „դէպի բնութիւն“ հռչակաւոր նշանախօսքը։ Ռուսսոի անձնաւորութեան մէջ Դիդրոն տեսաւ իր սիրած գաղափարների պերճախօս, հետևողական, նախասահմանուած արտայայտչին. զգաց, որ այդ ասպարիզում նրան չի կարող փոխարինել և սիրով նրան թողեց բնական վիճակի յայտագործումն ու պաշտպանութիւնը...

Յոսնեսթերորդ դարի անգլիական փիլիսոփայութիւնը կարևոր ազդեցութիւն է ունեցել ֆրանսիական սոցիալական մտքի վրայ։ Մոնտեսքիո և մանաւանդ Վոլտեր իրենց հայրենիքի կեանքը յեղաշրջելու և վերանորոգելու համար ցնցումներ ստացան ոչ միայն բրիտանական քաղաքական, հասարակական կարգերից, այլ և նրանց գաղափարներից։ Անգլիացի փիլիսոփայ-սոցիոլոգ Հոբս (*Hobbes*) և մանաւանդ փիլիսոփայ-հոգեբան Լոկկ (*Locke*) կարևոր դեր են խաղացել այդ ուղղութեամբ։

Ռուսսոն իր „*Contrat Social*“-ի մէջ քննադատաբար է վերաբերում դէպի Հոբսի աշխարհահայեացքը, սրբագրում է նրա իրաւական-քաղաքական ըմբռնումները։ Բայց չնայելով այս հանգամանքին՝ նա այդ հեղինակի մէջ ևս գտաւ իր հիմնական մտքի — բնական իրաւունքի—բաւական լսելի արձագանքները։ Լոկկը աւելի շատ ծառայութիւն մատուցեց Ռուսսոի աշխարհահայեացքի կազմակերպման։ Նրա քաղաքական ազատութեան թէորիան և նրա հոգեբանական դաստիարակութեան սկզբունքը անցան Ժընևցի փիլիսոփային, զարգացան, կատարելագործուեցին սրա հասարակական և մանկավարժական երկերի մէջ։ Մանաւանդ վերջին կէտում՝ Ռուսսոն թերևս ուրիշ աւելի արժէքաւոր աւելի հաստատուն ուղեցոյց չի ունեցել։ Լոկկի „Մտքեր դաստիարակութեան մասին“ լուրջ աշխատութիւնը Ռուսսոի „Էմիլ“-ին կարևոր և անգնահատելի նիւթ է մատակարարել։

Հոլլանդացի նշանաւոր իրաւագէտ-պատմաբան Գրոցիուս, որ գործում էր տասնեօթերորդ դարում՝ անշուշտ որոշ մասնակցութիւն ունեցել է Ռուսսոի իրաւական աշխարհահայեացքի կազմաւորման գործում։ Ինքը Ռուսսոն՝ այս հեղինակի նկատմամբ ևս քննադատական խիստ ոճով է խօսում, այնպէս, ինչպէս անգլիացի Հոբսի մասին։ Նրա տեսակէտով՝ ո՛չ Գրոցիուս և ո՛չ Հոբս չկարողացան իրաւունքը հասկանալ բացարձակ մտքով, իդէալականօրէն, անկախ այս կամ այն իրական իրաւունքից։ Ռուսսոն շատ առաջ գնաց. „բնական իրաւունք“-ի համար հիմքեր չգտաւ մեր հասարակակարգի „իրական իրաւունքի“ մէջ։ Այդտեղ նա և Գրոցիուսն ու Հոբսը անշուշտ իրար նման չեն։ Բայց դրանից անկախ՝ մարդուս իրաւունքների, մարդուս ազատութեան ջատագովումը առհասարակ Ռուսսոն կարդացել էր նաև վերոյիշեալ հեղինակների երկերում։

Ինչ որ ասացինք Գրոցիուսի մասին՝ նոյնը կարելի է կրկնել նաև սաքսոնացի իրաւաբան-պատմագէտ Պիւֆենդորֆի նկատմամբ։ Այս հեղինակի բաւական ժողովրդական աշխատութեան մէջ—որ կրում է „*Traité du Droit de la nature et des gens*“ խորագիրը — հրահանգուած է անհատի և ազգերի բնական, անձեռնմխելի իրաւունքը։ Եւ իբրև այդպիսին՝ նա ներկայացնում է „*Contrat Social*“-ի սաղմը։

Այս բոլոր ազդեցութիւններից բացի, որոնք յամենայն դէպս չէին կարող Ժան-Ժակ Ռուսսոի գրական, փիլիսոփայական, հասարակական գործը վճռականապէս պայմանաւորել—պէտք է յիշատակենք նրա հայրենիքը, Ժընևը։ Իր միջավայրով, իր բարքերով, իր քաղաքական ու հասարակական կազմով, իր մտաւոր վիճակով, իր կրօնով այդ փոքրիկ, պատմական հանրապետութիւնը մեծ դեր է խաղացել Ռուսսոի մտային կազմակերպման ու կառուցման գործում։ Նրա բոլոր աշխատութիւնների մէջ, առաւել կամ նուազ չափով, երևում է հայրենի հանրապետութեան բարոյական կերպարանքը։ Այդ գիծը գրեթէ կայ միշտ, բացայայտ կամ ծածկեալ, ուժեղ կամ մեղմ, գիտակից կամ անգիտակցական դրութեամբ։ Ռուսսոն շատ անգամ հրապարակով ներբողել է իր հայրենի քաղաքի պարզունակ վարքը, անպաճոյճ կեանքը, բնական ապրելակերպը, քաղաքական համեմատաբար արդար ձևը, ժողովրդի գերիշխանութիւնը և ազատութիւնը։

Անշուշտ, Ժընևը իր իրական վիճակով նրա երևակայած հասարակակարգը չէ. անշուշտ, Ժընևը նրա իդէալի վերջնական իրագործումը չէ—բայց և այնպէս նա սիրում է Ժընևը, իբրև սկզբնաւորութիւն այդ հասարակակարգի, իբր սաղմ այդ իդէալի։ Եւ այսքանը ինքնին բաւական է։ Իր հեղինակական յուռեռեսութեան վայրկեաններին՝ նրա միտքը կազդուրւում էր Ժընևով։ Այդ հանրապետութեան հանդէպ, այդ փոքրիկ ժողովրդի դիմաց՝ նա հաւատում էր իր իդէալին և մարդկութեան ապագայ երջանկութեան։ „*Contrat Social*“ը որքան էլ բացարձակ մտածողութեան արդիւնք լինի իր ձևով ու տրամաբանութեամբ, այնուամենայնիւ նրա կենսական աղբիւրը ամենից առաջ Ժընևն է։ Որքան էլ ռացիոնալ, բանական գունաւորում ունենայ այդ համբաւաւոր երկասիրութիւնը, այնուամենայնիւ Ժընևի հանրապետութեան պատմական փաստն է, ամենից առաջ, մնունդ մատակարարում նրա բանականութեան։

Իր աշխատութիւնների մէջ նա յաճախ խօսում է Ժընևի մասին, յարգանքով ու երախտագիտութեամբ, և իր անուան կողքին յաճախ դնում է „Ժընևի քաղաքացի“ մակդիրը։ Այս վերաբերմունքը ձևական, ար-

տաքին խնդիր չէ բնաւ։ Հեղինակի ու ժընևեան հանրապետութեան ներքին, բարոյական կապի արտայայտութիւնն է դա։

Հասարակական-քաղաքական կազմի հետ միասին՝ ծակ-ծակ Ռուսսոի զարգացման խնդրում որոշ դեր է խաղացել նաև իր հայրենիքի մտաւոր կեանքը։ Առանձնապէս յիշատակութեան արժանի է իրաւագէտ Բուրլամակի, որ ապրում էր տասնութերորդ դարում և որ ուսուցչապետի պաշտօն ունէր ժընևի ակադեմիայում։ „Բնական իրաւունքի“ թէօրիան Բուրլամակիի շնորհիւ բաւական առաջ էր գնացել թէ ժընևի ակադեմիայի և թէ քաղաքի կրթուած շրջաններում։ Իր երկու աշխատութիւններով—որոնք կրում են „*Principes du Droit naturel*“ և „*Principes du Droit politique*“ խորագիրները և որոնք այդ նիւթի պատմութեան մէջ կարևոր տեղ են գրաւում—ժընևի գիտնական ուսուցչապետը պաշտպանում էր մարդուս ազատութեան սկզբունքը, բնական իրաւունքի անձեռնմխելիութիւնը և ժողովրդական գերիշխանութիւնը։ Ժան-ժակ Ռուսսոի քաղաքական-իրաւական գործը մեծ չափով սկիզբն է առնում այս երկերից, որ այնքան հարազատ էին նրան։ Իր „*Contrat Social*“-ի համար իբրև երկրորդ խորագիր՝ նա նոյնութեամբ վերցնում է Բուրլամակիի աշխատութեան խորագիրը՝ *Principe du Droit politique*։

ժընևի կազմը, ժընևի բարքը, ժընևի միտքը—ահա այն առաջնակարգ աղբիւրը, որից դուրս ցայտեց Ռուսսոի հասարակական, բարոյական, փիլիսոփայական գործը։

Բայց, ժընևից բացի, կար նաև Շվէյցարիան ընդհանրապէս, կար նաև Սավոյիան։ Երկար տարիներ Ռուսսոն թափառեց այդ երկրի լեռներում, անտառներում, լճերի շուրջը, մենաւոր կղզիների վրայ։ Երկար տարիներ ապրեց նա բնութեան հետ միասին, հրաշալի և ընդարձակ դաշտերի վրայ, բաց, կապուտակ երկնքի տակ, աստղերի հմայիչ փայլին հայեացքը սևեռած։ Եւ այդ բոլորը, այդ բազմախորհուրդ ու սքանչելի բնութիւնը նրան շատ բան տուեց։ Ինչ որ նա չկարողացաւ ստանալ հին աշխարհից, նշանաւոր փիլիսոփաներից, ստացաւ ժընևից, և ինչ որ չկարողացաւ ստանալ ժընևից, ստացաւ այս խօսուն, այս իմաստուն բնութիւնից։ Նրա երկերը լի են այն թարմութեամբ, պարզութեամբ, խորութեամբ, ինչ որ կար շվէյցարական մեծ բնութեան ծոցում։ Ֆրանսիական գրականութեան մէջ, և առհասարակ աշխարհի չոր, դասական գրականութեան մէջ նա մտցրեց բնութեան բոյրը։ Նրա „Նոր Հէլօիզը“, նրա „Էմիլը“ թաթաւուած են այդ հոտով և այդ համով։ Նրա ամբողջ գործը այդ միջավայրի խորունկ կնիքն է կրում...

Բայց այս բոլորը ամեն բան չէր։ Այս բոլորը—հին աշխարհը, հեղինակները, ժընևը, բնութիւնը—բացատրում են գրողի տեսակը, մեկնաբանում են նրա այս կամ այն միտքը, այս կամ այն գիծը, այս կամ այն գործը ընդհանրապէս։ Ռուսսոի մեծութիւնը նրանք չեն նախասահմանում, չեն պայմանաւորում։ Այդ մեծութիւնը գալիս է նրա հոգուց։ Նրա ներքին էութեան, նրա անկեղծ, խորը, բուռն անհատականութեան մէջ զուտում են վերոյիշեալ գործօնները և այդպէս արժէքաւորուած հաղորդւում են աշխարհին։

Այս կազմով, այս հիմքերով և այս տրամադրութեամբ Ռուսսոն նետուեց տասնութերորդ դարի հասարակական, փիլիսոփայական մտքի ասպարէզը։ Եւ այսպէս սկսեց յեղաշրջել նա կեանքն ու գաղափարները...

II

Դիտութիւնների եւ գեղարուեստների դերը

—

1749 թուականին Դիժոնի ակադեմիան մի հարց նետեց հրապարակ. „Արդեօք գիտութիւնները և գեղարուեստները նպաստեցի՞ն բարքերի ազնուացման“։ Այդ համբաւաւոր հարցը մեծ աղմուկ բարձրացրեց Ֆրանսիական մտաւոր աշխարհում։ Ո՞վ կարող էր կասկածել դրա մասին, ո՞վ կարող էր բացասական պատասխան ներկայացնել իմաստունների կաճառին։ Ռուսսոն այդ ժամանակ արդէն 38 տարեկան էր և մինչև այդ՝ ոչինչ չէր գրել։ Նրա անունը միանգամայն անծանօթ էր գրական աշխարհին։ Ակադեմիայի հարցը նրան յուզեց, նրա ներքին էութիւնը ալէկոծեց։ Եւ նա որոշեց իր ձայնը հաղորդել աշխարհին։ Ինքը Ռուսսոն, մի նամակի մէջ, գրուած 1761 թուականին, այսպէս է նկարագրում իր հոգեկան դրութիւնը այդ հոչակաւոր հարցից յետոյ։

„... Ցանկարծ զգացի միտքս պայծառացած հազարաւոր լոյսերով։ Գաղափարների բազմութիւններ ներկայանում են ինձ մեծ ուժգնութեամբ և ինձ նետում են մի անարտայայտելի դողի մէջ։ Զգում եմ, որ գլուխս բոլորովին բռնուել է, ասես գինով լինեմ։ Մի անօրինակ բաբախում ճնշում է ինձ, արմատախիլ է անում կուրծքս։ Չկարողանալով այլ ևս քայլել՝ ես վար եմ ընկնում ճանապարհին, մի ծառի տակ, և մնում այդպէս մօտ կէս ժամ։ Եւ երբ յուզմունքից ուշքի եմ գալիս՝ նոր եմ նկատում, որ բաճկոնիս առաջի մասը ամբողջովին թաց է. ես լացել եմ անընդհատ առանց զգալու։ Օ, եթէ կարողանայի գրել բառորդը, ինչ ես տեսայ և զգացի այդ ժամին ու այդ ծառի տակ—ինչպի՞սի պայծառութեամբ ցոյց կը տայի հասարակական սիստեմի բոլոր հակասութիւնները, ի՞նչպիսի ուժով կը ներկայացնէի մեր հաստատութիւնների բովանդակ ինաստակարութիւնը, ի՞նչպիսի պարզութեամբ կ'ապացուցէի, որ մարդս բարի է բնականապէս և որ այդ հաստատութիւնների միջոցով է միայն չար դառնում“...

Բնութեան մարդու հոգեբանութիւնն է դա, որ ընկել է աշխարհիկ միջավայրը, քաղաքակրթութեան աղմկոտ կենտրոնը և տառապում է այնտեղ։ Ներքին պայքարը մի մարդու, որ այնքան տարիներ ապրել է հեռու գրական կեանքից և որ սակայն այդ բոլոր տարիներում ուսումնասիրել է, կարդացել, դիտել, խորհրդածել մեր գոյութեան իմաստն ու նպատակը։

Այդ հարցի տպաւորութեան տակ պայթում է բնական մարդու հոգին, դուրս է ցայտում տարիների բողքը, դժգոհութիւնը, գանգատը քաղաքակրթութեան դէմ, որ չի երջանկացնում մարդուն և որ ընդհակառակը՝ աւերում է նրան։

Այսպէս է սկսւում Ռուսսոյի գրական գործունէութիւնը։

Դիժոնի գիտունների ժողովին նա յայտարարում է բացարձակ կերպով, որ գիտութիւնները և գեղարուեստները բնաւ չնպաստեցին բարքերի ազնուացման։ Ռուսսոյի կարծիքով՝ գիտութիւնները մարդկային արատների արդիւնք են։ Առողջ, բարոյական մղումները չեն նրան ստեղծագործել, այլ հիւանդոտ ու մոլար կրքերը։ Աստղագիտութիւնը ծնունդ է նախապաշարման, պերճախօսութիւնը՝ ստախօսութեան, բարոյագիտութիւնը՝ մարդկային գոռոզութեան, իրաւագիտութիւնը՝ անարդարութեան, պատմութիւնը՝ բռնակալութեան։ Նրանց բոլորի էլ արմատը, աղբիւրը թունաւոր է ու անմաքուր։

Եթէ այդպէս են գոյացել նրանք՝ նշանակում է ուրեմն, որ չեն կարող օգտակար լինել մարդկութեան։ Նրանք վնասակար են կրկնակի տեսակէտով—վնասակար են մարմնին, վնասակար են նաև հոգուն։ Նրանց միջոցով կորչում է քաջութիւնը, առողջութիւնը, հերոսութիւնը։ Պետութիւնների և ժողովուրդների անկումը, այլասերումը՝ հեռաւոր թէ մերձաւոր, հետևանքն է գիտութիւնների և գեղարուեստների ծաղկման։ Հին Եգիպտոսը, Յունաստանը, Հռոմը երջանիկ էին, առողջ, կենսունակ անգիտութեան շրջաններում։ Գիտութիւններն ու գեղարուեստները պատճառ դարձան նրանց կործանման։ Գրքերի յետևից վազելով, դատարկ և անիմաստ ծանօթութիւնների հետամտելով, անպէտք արուեստների վրայ եռանդ վատնելով՝ նրանք կորցրին կեանքի զգացումը, իրականութեան հոտառութիւնը։ Հայրենիքը մնաց առանց հերոսի, առանց պայքարողի և դիւրութեամբ խորտակուեց ասպատակողների ոտքերի տակ, որոնք ոչ գիտութիւն ունէին և ոչ գեղարուեստ։

Մարմնի աւերումներից բացի՝ գիտութիւնների ու գեղարուեստների մէջ աւերում է նաև բարոյականը, հոգին։ Դաստիարակութիւնը դառնում է մի աւելորդ ու վնասակար պաշտօն։ Մանուկներին սովորեցնում են ամեն բան, բայց երբէք այն, ինչ հարկաւոր է մարդկութեան և հայրենիքին։ Գլուխները լցնում են քերականութիւններով, թւերով, գրքերով և սակայն չեն կարողանում ճշմարտութիւնը մոլորութիւնից տարբերել։ Գիտութիւնների և գեղարուեստների ազդեցութեան շրջանում կամքը, առաքինութիւնը արհամարհւում են և մեծարւում են երկրորդական, երրորդական յատկութիւններ։ Այլ ևս չենք հարցնում մարդկանց արիութիւնը, ազնուութիւնը, արդարութիւնը, այլ միայն տաղանդը։ „Մենք ունինք բնագէտներ, երկրաչափներ, քիմիկոսներ, աստղաբաշխներ, բանաստեղծներ, երաժիշտներ, նկարիչներ. մենք չունինք այլ ևս քաղաքացիներ“։ Մարդիկ հետապնդելով շատ բան գիտնալու փափագին, լաւ խօսելու ցանկութեան՝ կորցնում են գործելու ընդունակութիւնը։ Մարդու մէջ թաքնուած աստուածային ուժերը վատնւում են ի զուր և մարդկութիւնը զրկւում է իր գոյութեան հիմքերից։

Գիտութիւնները և գեղարուեստները այնպէս, ինչպէս կան՝ դէպի անկումն են տանում ժողովուրդներին։ Նրանք ծնում են անհաւասարութիւն և բաժանում են մարդկանց, հեռացնում են միմեանցից։ Ռուսսոյի կարծիքով՝ հասարակական անհաւասարութիւնը ոչ մի տեղ և ոչ մի շրջանում այնքան անտանելի չէ, որքան գիտութիւնների և գեղարուեստների տիրապետութեան մէջ։ Նրանք ծառայում են մէկին, ուրախացնում են միւսին, բայց ժողովրդական բազմութիւնները մնում են ոտնահարուած։ Նրանց անխուսափելի ծնունդն է շռայլութիւնը, luxe.-ը, որ աւերում է տնտեսական կանոնաւորութիւնը և սակաւաթիւ վայելողների հանդէպ՝ կանգնեցնում է կարիքաւորների բանակը։ Մարդկութիւնը այլասերւում է այդ ռէժիմի մէջ և մարդկային երջանկութիւնը դառնում է բանդագուշանք...

Դէմ լինելով գիտութիւններին ու գեղարուեստներին այնպէս, ինչպէս նրանք երևացել են պատմութեան մէջ՝ Ռուսսոն դէմ չէ գիտութեան, իմաստութեան, առհասարակ։ Նրա կարծիքով կեանքի մէջ կամքն ու միտքը անհամաձայն են եղել, հասարակական մինչայնօրեայ սիստէմի մէջ գործն ու իմացականութիւնը անհամերաշխ են ապրել։ Մինչդեռ նրանց ներդաշնակութիւնը հնարաւոր է և Ռուսսոյի համար անշուշտ ցանկալի է։ „Քանի որ մի կողմում միայն ուժ լինի, միւս կողմում միայն լոյսն ու իմաստութիւնը—գիտունները հազիւ թէ մեծ բան մտածեն, և իշխանները հազիւ թէ գեղեցիկ գործեր կատարեն“։

Քաղաքակրթութեան չարիքները հարուածելով հանդերձ՝ Ռուսսոն խորապէս զգաց վերոյիշեալ ներդաշնակութեան օգտակարութիւնը...

Ժան-Ժակ Ռուսսոյի այդ անդրանիկ աշխատութիւնը ահագին հարուածով պայթեց իր ժամանակի գրական-գիտական աշխարհում։ Դիժոնի ակադեմիան նրան մրցանակի արժանացրեց, և Ռուսսոյի անունը կարճ ժամանակում հռչակուեց ամենուրեք։ Այդ երկի մէջ նա դրել էր անկախ, ազատ, ինքնուրոյն մտածողութիւն և

կարողացել էր իր ժամանակի սրբագործված մոլորութիւնները համարձակօրէն քննադատել։ Այդտեղ սխալ տեսութիւններ կային անշուշտ, առերևոյթական հակասութիւններ գոյութիւն ունէին, մանրամասների մէջ վրիպումներ նկատւում էին, բայց և կային մէկից աւելի առողջ մտքեր, ճշմարիտ գաղափարներ, որոնք արժէք էին տալիս գործին և որոնք նոր իդէալներ, նոր հոսանք էին հաղորդում անշարժացած կեանքին...

Այդ մտքերն ու գաղափարները յետագայ տասնամեակում պիտի զարգանային, պատճառաբանուէին և բացատրուէին նրա նշանաւոր երկերում։ Ռուսսօն դրանցից մի սիստեմատիկ աշխարհայեացք պիտի դուրս բերէր...

III

Անհաւասարութեան պրոբլեմը

Գիտութիւնների և գեղարուեստների դերից յետոյ՝ Ռուսսօն դիմում է անհաւասարութեան պրոբլեմին։ Այդ նիւթին է վերաբերում նրա երկրորդ գրուածքը, որ այնքան մեծ ցնցում առաջ բերեց և որ այնքան ժողովրդականութիւն ստացաւ։ Այսօր էլ կարելի է հիացմունքով կարդալ այդ պատմական երկը—„Ճառ անհաւասարութեան մասին"—որ տասնութերորդ դարի հեռաւորութիւնից տասնիններորդ դարի հարցն էր վերլուծում։

Ժան-Ժակ Ռուսսօն այդ աշխատութիւնը բաժանել է երկու մասի։ Առաջինում „բնական կարգի" և „բնական մարդու" առաւելութիւններն է ցուցահանում։ Երկրորդում „հասարակական կեանքի" և „հասարակական մարդու" աղաւաղած պատկերն է ներկայացնում։

Անհաւասարութեան խնդիրը մարդկութեան ամենավիրաւոր կնճիռն է, համաշխարհային պատմութեան հիւանդոտ կէտը։ Ինչո՞ւ են մարդիկ անհաւասար։ Ինչո՞ւ մէկը տէր է առասպելական կարողութեան, իսկ միւսը զուրկ է ամենաանհրաժեշտ պէտքերից։ Ինչո՞ւ մէկը բռնակալ է, միւսը ստրուկ։

Փիլիսոփայութիւնը սկսած հնագոյն ժամանակներից մինչև Ժան-Ժակ Ռուսսօ միշտ զբաղուել էր այդ տիեզերական պրոբլեմով։ Հին աշխարհը, միջին դարը, նոր դարը, մեծանուն ու հանճարեղ իմաստասէրների բերանով այս կամ այն բացատրութիւնն ու լուծումն է գտել այդ դժբախտ պրոբլեմի համար։ Եթէ չհաշուենք մի քանի սակաւաթիւ հեղինակներ՝ մտածողների մեծ մասը այդ իրողութեան մէջ տեսել է մի բնական անհրաժեշտութիւն, որին կամայ թէ ակամայ պէտք է համակերպուիր։ Հաւասարութիւնը—նրանց ըմբռնումի համաձայն—ցնորք է միայն։ Անհաւասարութիւնը բնութեան անդառնալի օրէնքն է և տիեզերքի կանոնը։

Ռուսսօն ընդդիմանում է այս հայեացքին։ Նա ընդունում է անհաւասարութեան երկու տեսակ։ Մէկին կոչում է բնական կամ ֆիզիկական, միւսին բարոյական կամ քաղաքական *)։ Բնական անհաւասարութիւնը, այսինքն՝ հասակների, առողջութեան, իմացականութեան տարբերութիւնը՝ նա համարում էր բնութեան գործ։ Բարոյական անհաւասարութիւնը—հարստութիւն և աղքատութիւն, բռնակալութիւն և ստրկութիւն—նա համարում էր հասարակութեան գործ։

Նա գտնում էր մինչև անգամ, որ բնական դիտուած որոշ անհաւասարութիւն հետևանք է հասարակական անհաւասարութեան։ Առողջութիւնը, ֆիզիկական կազմը հասարակական պայմանների ծնունդ են յաճախ։ Իմացականութիւնը որոշ չափով հասարակական կարգի արդիւնք է։ Արդ, անհրաժեշտութիւն է և անխուսափելիութիւն այն, ինչ որ գալիս է բնութիւնից, ինչ որ բնական կարգի արտադրութիւն է։ Իսկ այն, ինչ որ հասարակական կարգի ստեղծագործութիւնն է՝ անհրաժեշտ չէ բնաւ և խուսափելի է մարդկայնօրէն։ Բնութեան մէջ չկայ մեր անհաւասարութիւնը։ Այնտեղ մարդը չէ ճանաչում վիճակների տարբերութիւն։ Այնտեղ մարդս ազատ է և անկախ։ „Բնական կարգի" մէջ մարդս բարի է միաժամանակ։ Նա իր նմանին չարիք չէ անում։ Նրա մէջ մի ինքնածին, ինքնաբուխ բնազդ կայ այլասիրութեան, որի համաձայն ապրում է կեանքը, կանգուն է կեանքը։ Առանց այս բնական բարութեան կեանքը, աշխարհը չէր կարող իր գոյութիւնը պահել։ Անկարելի է երևակայել թէ չարութիւնը, փոխադարձ ատելութիւնը մարդուս բնական յատկութիւնը լինին։ Այդ չար ուժերի վրայ չէր կարող ոչ մի մարդկային խմբակցութիւն իր հաւասարակշիռը անաղարտ պահպաներ։ Այդ բացասական և կործանարար ուժերի մէջ ամեն ինչ քաոս կը դառնար և մարդկութիւնը կ'անհետանար տիեզերքից։ Եւ եթէ այսօրուայ մարդկութիւնը այնուամենայնիւ ապրում է—ապրում է այն պատճառով, որ մարդուս մէջ բնական, ինքնաբուխ բարութիւն կայ։ „Հասարակական կարգի" մէջ մարդուս հոգին չարութիւն մտաւ, բայց այդ չարութիւնը չէր կարող բոլորովին արմատախիլ անել նախնական բարութիւնը, որ նրա հիմքումն է։ Բնական վիճակի այս բոլոր ներդաշնակութիւնը հետևանք է սեփականութեան բացակայութեան։ Մարդիկ ազատ են, հաւասար են, բարի են, որովհետև սեփականութիւն չկայ և սեփականութեան գիտակցութիւն չունին։

*) Հայերէն վերջին կոչումները ճիշտ չեն արտայայտում իրի իմաստը։ *Morale* և *politique* բառերը փիլիսոփայական նիւթերի մէջ շատ ընդարձակ բովանդակութիւն ունին։ Նրանք ընդգրկում են սոցիալական և բարոյական լայն սահմաններ։ Ռուսսօն քաղաքական անհաւասարութեան անուան տակ հասկանում էր մանաւանդ սոցիալական անհաւասարութիւն։

„Այն մարդը, որ առաջին անգամ շրջափակեց մի կտոր հող և ասաց՝ „այս իմն է“, և բաւական միամիտ մարդիկ գտաւ իրեն հաւատացող — եղաւ մեր հասարակութեան իսկական հիմնադիրը։ Որքա՞ն ոճիրներ, պատերազմներ, սպանութիւններ, որքա՞ն թշուառութիւններ ու սարսափներ կը խնայէր մարդկային տեսակին նա, ով աղաղակէր իր նմաններին. „Մի հաւատաք այդ խաբեբային։ Դուք կորած էք, եթէ մոռանաք, որ արդիւնքը պատկանում է ամենքին, բայց հողը—ոչ ոքի“։

Ռուսսոի կարծիքով՝ մարդիկ հողը սեփականացնելու ժամանակ՝ բռնութիւն գործեցին բնութեան դէմ։ „Սեփականութիւնը յափշտակութիւն է“, ձայնում էր ժընևցի փիլիսոփան։ Եւ իրրև այդպիսին՝ աղբիւր է դժբախտութեան ու չարիքների։ Այդ սեփականութիւնը պահպանելու համար՝ մարդիկ օրէնքներ հնարեցին, կառավարիչներ նշանակեցին և այդպիսով՝ նուիրագործեցին յափշտակութիւնը։ Եւ այդ օրէնքների ու այդ կառավարութեան մէջ, այդ սեփականատիրական կարգի մէջ, առաջացաւ անհաւասարութիւն։ Մարդկութեան մէջ գոյացան հարուստներ և աղքատներ, տէրեր և ստրուկներ։ Եւ այնուհետև դժբախտութիւնը փոխարինեց երջանկութեան, չարութիւնը բարութեան, գերութիւնը՝ ազատութեան։ Բնական կարգի մէջ չկար այդ անհաւասարութիւնը։ Հասարակական կարգի արդիւնք է դա։ Եւ այսօր, որքան էլ խաբուինք քաղաքակրթութեան արտաքինի հանդէպ՝ այնուամենայնիւ „մենք ունինք պատիւ, առանց առաքինութեան, բանականութիւն, առանց իմաստութեան և հաճոյք, առանց երջանկութեան“։ Այսպէս է վերջանում Ժան-Ժակ Ռուսսոի երկրորդ աշխատութիւնը։

Ինչպէս տեսնում էք՝ այդ երկու գրուածքներով Ռուսսօն խիստ քննադատութեան է ենթարկում ժամանակակից հասարակութիւնը, ընկերական կազմը, բարքերը և օրէնքները։ Այդ երկերի մէջ նա հարուածում է ոչ միայն քաղաքական անհաւասարութեան ռէժիմը, այլ և հասարակական-անտեսական անհաւասարութեան կարգը։ Նա բացասող է և մերժող։ Նրա փիլիսոփայութիւնը դերազանցապէս ժխտական վերաբերմունք ունի դէպի կեանքի արժէքները և դէպի քաղաքակրթութեան պտուղները։ Նա դրանց մէջ չէ գտնում մարդուս երջանկութեան գրաւականները։

Բայց այդ բացասական գործից յետոյ՝ նա առաջարկում է նաև դրական գործ։ Նա իդէալներ է տալիս։ Նա ձգտում է վերանորոգել կեանքը։

„Էմիլ“, „Նոր Հէլօիզ“ և „Ընկերային դաշինք“ այդ վերակազմութեան ազբիւրներն են...

Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ

ՊԱՌԱԿՏՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՍՕՑ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Իտալօ-թիւրք պատերազմը անդրադարձաւ նաև սոցիալիստ կուսակցութեան ներքին կեանքի վրայ, աւելի ճիշտ՝ ուժեղացրեց արդէն եղած հատուածային հակամարտութիւնը և հասցրեց պառակտումի։ Արտաքսեցին կուսակցութիւնից մի քանի աչքի ընկնող դէմքեր, որոնց մէջ Լէօնիդա Բիսսոլատի, ընկերվարական հինաւուրց գործիչը և իտալական պարլամենտի զարդերից մինը։

Հոսանքներ, այո, կային արդէն։ Մի կողմ թողնելով անիշխանականներին ու յեղափոխական ռէֆորմիստներին, որոնք կազմում են փոքրաքանակութիւն երկրի աշխատաւորական շարքերի մէջ — բուն սոցիալիստ կուսակցութիւնը ունի իմ երկու հակամարտ թեւերը, ինչպէս և բոլոր միւս երկրներում. ձախակողմեան և աջակողմեան, ուրիշ խօսքով՝ յեղափոխական և չափաւոր, բարենորոգչական (ռէֆորմիստ)։

Երկու թեւերը ունէին 20—25 տարիներից ի վեր իրենց պերճախօս առաջնորդները. ձախակողմեան կամ յեղափոխական հատուածի լիդերն էր՝ Էնրիկօ Ֆերրի, բարենորոգչական կամ չափաւոր հատուածինը—Փիլիպպօ Տուրատի։

Սակայն—մի տարապայման դիմադարձութեամբ—իտալական շարժման լիդերները փոփոխում են իրենց դերերը և փոփոխում են հիմնականապէս։ „Յեղափոխական“ Էնրիկօ Ֆերրին մի քանի տարուց ի վեր աստիճանաբար սահելով ու սայթաքելով, դարձաւ ի վերջոյ մի ողբալի պատեհապաշտ, օպպորտունիստ, ջնջեց իր նախկին ընկերվարական հաւատամքը, որով և ստիպուած եղաւ հեռանալ կուսակցութիւնից։

Մինչդեռ չափաւոր և օպպորտունիստ համարուած Տուրատին բարձրացաւ միշտ հակառակ ուղղութեամբ, և այսօր նա մէկն է այն ընկերվարականներից, որոնք դատապարտում են Բիսսոլատիի ու այլոց պատեհապաշտութիւնը...

Երկու թեւերը յաճախ էին բախւում իրարու, սակայն էական խնդիրների ու ձեռնարկների մէջ մէկ համերաշխ մարմին էին և այս պառակտումն էլ հաւանականօրէն չէր առաջանայ, եթէ չլիներ պատերազմը։ Չէր առաջանայ, քանի որ Բիսսոլատիի ու իր չափաւոր ընկերների տակտիկը էապէս նոյնն էր, ինչ որ կիրառում են միւս երկիրների համանուն բարենորոգչական հատուածները։ Բիսսոլատին աւելի չափաւոր ու պատեհապաշտ չէր, քան Էդուարդ Բերնշտայն. իսկ վերջինը մնում է անդամ Գերմանիայ հսկայ ընկերվարական կուսակցութեան և ոչ ոք չի մտածել նրա արտաքսումի մասին։ Բիսսոլատին գնացել է թագաւորի մօտ, երբ վերջինը հրաւիրել է նրան ի շարս ուրիշների՝ նոր մինիստրութիւն կազմելու համար։ Բայց կայսեր մօտ յաճախ գնացել է և աւտրիական նշանաւոր սոցիալիստ Պերներստորֆերը, իրրև պարլամենտի փոխ-նախագահ... և գնացել է միշտ, պատճառաբանելով. „Մենք յաճախ սեղմում ենք մինիստրների ու այլ պաշտօնական անձերի ձեռքը, ինչո՞ւ չենք սեղմի թագաւորինը“... Պերներստորֆերը նոյնպէս այսօր աւտրիական սոց. կուսակցութեան ամենայարգած առաջնորդներից մինն է։ Նոյն Բերնշտայնը յայտարարել է միշտ, որ գերմանացի սոցիալիստները չպիտի հրաժարուին Ռայխստագի մէջ փոխ-նախագահի պաշտօնից և երբ ստանձնեն այն՝ չպիտի մերժեն կատարելու իրենց պաշտօնական ձեւականութիւնները, պալատ գնալու և թագաւորի ձեռքը սեղմելու։

Բիսսոլատին գնացել էր պալատ թագաւորի հրաւէրով և մինիստրական պաշտօն ստանձնելու համար դրել էր այնպիսի պահանջներ, որոնց անընդունելի լինելը ինքը նախապէս արդէն գիտէր։ Այդ և նման քայլերի համար չէր, որ նշանաւոր գործիչը պիտի արտաքսուէր կուսակցութիւնից, թէև այդ քայլը փոթորիկ յարուցեց անհաշտների բանակում։

Պատերազմն էր, որ սրեց ու լարեց յարաբերութիւնները, շղթայազերծելով Իտալիայի մէջ հայրենասիրութեան ու շո-

վինիզմի մի կատարեալ համաձարակ, որից ազատ չմնացին, տարաբախտաբար, Լէոնիդա Բիսսոլատի իր ընկերներով։ Նա իբրև սոցիալիստ, դէմ է պատերազմների, բայց երբ արդէն պատերազմը յայտարարուել է, անկարելի է դիմադրական բանակ կազմել հայրենի կառավարութեան դէմ. այդպէս էր պատճառաբանում Բիսսոլատի։ Թւում է թէ նա, ինչպէս և շատ ուրիշ իտալացի սոցիալիստներ, սրտանց ուրախ էին պատերազմի անակնկալով, գոհ էին, որ Տրիպոլիսը մի կիսավայրենի պետութեան ձեռքից ազատուելով, անցնում էր համեմատաբար աւելի քաղաքակիրթ Իտալիայի ձեռքը։

Այսպէս թէ այնպէս, չափաւորների հայրենասիրական գինովութիւնը մնաց նրանց, յայտնուեց մի վայրկեան հակասութեան մէջ իրենց սոցիալիստական հաւատամքի հետ։ Եւ ահա Ռէջիո Էմիլիայի կուսակցական համագումարը մեծամասնութեամբ որոշեց հեռացնել կուսակցութիւնից չորս աջակողմեան սոցիալիստներին, որոնք անդամ են իտալական պարլամենտի. Բիսսոլատի, Բոնոմի, Կաբրինի և Պոդրեկկա։ Վերջինները իրենց համախոհներով կազմեցին անմիջապէս նոր սոցիալիստ կուսակցութիւն և անուանեցին այն՝ „Իտալական ռէֆորմիստ, ընկերվարական կուսակցութիւն“։

Այդ իրողութեան դէմ բողոքեց Կուսակցութեան վարիչ մարմինը մի նամակով ուղղած Միջ. Սոց. Բիւրոյին։

Ահաւասիկ այդ նամակը, որ Սոց. Բիւրոն շրջաբերականով ուղղում է մեզ Բրիւսէլից.

Սիրելի ընկերներ,

Ներքոյ ստորագրեալներս, ընտրած Ռէջիո Էմիլիայի մէջ տեղի ունեցած Իտալական Սոց. Կուսակցութեան համագումարի կողմից և անդամներ Կուսակցութեան Գործադիր Յանձնաժողովի, հաղորդում ենք ձեզ ի գիտութիւն, որ յիշեալ համագումարը մօտ 12,000 ձայնով արտաքսել է Իտալիկան Սոց. Կուսակցութիւնից՝ երեսփոխաններ Բիսսոլատիին, Բոնոմիին և Կաբրինիին և Պոդրեկկային, որոնց քաղաքական գործունէութիւնն ու բռնած դիրքը դիտել է Կուսակցութեան և համագումարի մեծամասնութեան կողմից, իբրև հակառակ սոցիալիստական Ինտերնացիոնալի սկզբունքներին և տակտիկին. մասնաւորապէս առաջին երեքը՝ արտաքսել են իրենց բռնած դիրքի պատճառով ներկայ պատերազմի հանդէպ, ինչպէս նաև իրենց միապետական ցոյցերի համար. իսկ վերջինը, Պոդրեկան՝ նոյն պատերազմի հանդէպ բռնած իր դիրքի պատճառով, իբր երեսփոխան և օրագրող։ Վերոյիշեալ չորս երեսփոխանները, Կուսակցութեան այլ անդամների հետ, հիմնեցին անմիջապէս մի մարմին, որ անուանեցին Իտալական Բարենորոգչական Սոցիալիստական Կուսակցութիւն (Il Partito Socialista Reformista Italiano)։

Ներքոյ ստորագրեալները, իբրև Կուսակցութեան գործադիր մարմնի անդամներ, տեղեկացնում են Միջազգ. Սոց. Բիւրոին այդ նոր Կուսակցութեան գոյացման մասին, որ սպառնում է Իտալիայի սոցիալիստական պրոլետարիատի միութեան։

Ներքոյ ստորագրեալներս բողոքում ենք այդ նոր կուսակցութեան յորջորջումի դէմ. բարենորոգչական կամ ռէֆորմիստական ուղղութիւնը չի արտաքսուել Կուսակցութիւնից, քանի որ նրա մէջ կան պատկառելի թւով ռէֆորմիստներ։ Չորս երեսփոխանները արտաքսուել են Կուսակցութիւնից ոչ թէ ռէֆորմիզմին յատուկ թէորիական կամ տակտիկական դիրքի պատճառով, այլ այնպիսի գործողութիւնների համար, որ կուսակցութեան մեծամասնութիւնը, առանց տեսական կամ գործնական ուղղութիւնների խորութեան, նշանակել է, իբրև ո չ-ը ն կ ե ր վ ա ր ա կ ա ն գործողութիւններ։

Խնդրելով ի նկատի առնել մեր այս տեղեկութիւնը, հաղորդում ենք ձեզ միաժամանակ, որ Միջազգ. Սոց. Բիւրոի երկու անդամներ Բիսսոլատի և Կաբրինի չեն այլ ևս պատկանում Իտալական Սոցիալիստ Կուսակցութեան։

Ընդունեցէք, սիրելի ընկերներ, մեր եղբայրական ողջոյնները։

Ադինի, Բաչչի, Բալաբանով, Գանիոնի, Դելլա Սեզա, Ֆիսնիկո, Մաստրակկի, Մուզատտի, Մուսսոլինի, Սմօրտի, Ռատտի, Տրէվատօրէ, Վէլլա, Ցերբինի, բարտուղար Լացցարի։

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ

Քօչանայի կոտորածը մեծ յուզումն է առաջացրել Բուլգարիոյ մէջ։ Պարզւում է, որ 100-ից աւելի բուլգար քրիստոնեաներ են ջարդուել զինուորների և խուժանի ձեռքով, բազմաթիւ կանայք ու երեխաներ, որոնց վրայ գործ են դրուել սովորական բարբարոսութիւնները։ Կան նաև 200-ի չափ ծանր ու թեթև վիրաւորուածներ։ Բուլգարական մամուլը ցասկոտ յօդուածների մէջ յորդորում է կառավարութեանը՝ միջամտել և վերջ տալ արիւնակից Մակեդոնիայի տառապանքներին։ „Երիտասարդ Թիւրքիայի ռէժիմը, ասում է նա, վերջին 4 տարուայ ընթացքում ոչնչացրել է 3,000 բուլգար կեանքեր“... Դուռը, ազդուած բուլգարական սպառնալիքներից՝ շտապեց Քոնիչ Յանձնաժողով ճամբել կոտորածի վայրը և այժմ Բուլգարիան սպասում է քննութեան հետևանքին՝ իր անելիքը որոշելու համար։

Տեղի ունեցաւ Սոֆիայի մէջ մի չտեսնուած միտինգ։ Մօտ 30,000 բուլգարներ հաւաքուեցին, ունկնդրելու մի շարք ատենախօսների։ Երեսփոխաններ, գրողներ, անգամ նախկին մինիստրներ, բոլոր դասակարգերը և բոլոր կուսակցութիւնները։ Գումարումը ընդունում է արտակարգ հանդիսաւորութիւն. հրթիռները սուլում են, զանգակները ղողանջում ամբողջ մայրաքաղաքի մէջ։ Հրատարակուած է ազգային սուգ. հսկայ թափորը շարժւում է դէպի պարլամենտի հրապարակը 30-ի չափ դրօշակներ, որոնցից երեքը՝ սև են, նրանք պատկանում են մակեդոնական յեղափ. կոմիտէին։ Դրօշակներից մի քանիսի վրայ գրուած է. „Պատերազմ ենք ուզում“...

Նոյն ոգով են խօսում բոլոր հռետորները։ Եթէ հարկ լինի, ասում են ոմանք, մենք կը տապալենք ներկայ բուլգար կառավարութիւնը և կըստիպենք կռիւ յայտարարել Թիւրքիային՝ Մակեդոնիայի ինքնավարութիւնը ձեռք բերելու համար։

Դաւառներից ևս նման պահանջներով դիմում են կառավարութեան. իսկ մամուլի տոնը միշտ աւելի և աւելի բարձրանում է։ „Հինգ դարուց ի վեր, ասում է մի կարևոր թերթ, բուլգարները ենթակայ են Թիւրքական ջարդերի. յիշենք Բատակը, Պերուստիցան, Իզթիրը, այժմ ահա Քօչանան. սա գագաթնակէտն է... Ժողովրդի պատիւը պաշպանելու է զէնքով։ Այլ ևս սպասել անհնարին է. նաճողական պատերազմ մենք չենք ուզում, այլ Մակեդոնիայի ինքնօրինութիւնը“...

***

Իթթիհատեան պարլամենտը լուծուելուց յետոյ՝ ալբանացիք հաշտարար տրամադրութիւն են ցոյց տալիս։ Ապստամբների պարագլուխները առաջադրել են Բ. Դրան մի շարք պահանջներ, որոնց իրագործումը հաւասար է

գրեթէ երկրի ինքնօրինութեան (ավտոնոմիայի)։ Այդ հանգամանքը լուրջ մտահոգութիւն է պատճառում ոչ միայն Թիւրք կառավարական շրջանների մէջ, այլ և բալկանեան ու եւրոպական դահլիճներում։ Ռուսաստանը, մասնաւորապէս, թւում է թէ ամեն կերպ պիտի ընդդիմանայ ալբանական ավտոնոմիային, ի նկատի առնելով, որ դա պիտի խախտէ անհրաժեշտօրէն Բալկանների հաւասարակշռութիւնը։ Եթէ—ասում է Corriere della Sera-ի պետերբուրգեան թղթակիցը—եթէ Ալբանեան կազմէ նոր ավտոնոմ պետութիւն ամփոփելով իր մէջ Նովի-Բազար և Սկիւբ վիլայէթները, որ սլավոնական ազգաբնակութիւն ունին—Սերբիան, Բուլգարիան, Մոնտենեգրոն պիտի բողոքեն և հաւանօրէն պիտի դիմեն յուսահատական միջոցների... Որովհետև իւրաքանչիւրը նրանցից ունի բաղձանքներ ու յաւակնութիւններ այդ հողերի վերաբերմամբ։ Սերբիան, օրինակ, յոյս ունի վաղ թէ ուշ ձեռք բերել մի նաւահանգիստ Ադրիատիկի վրայ։ Բուլգարիան էլ յոյսեր ունի Սկիւբի նկատմամբ։ Եթէ այդ երկու սլավ վիլայէթները մտնեն ավտոնոմ Ալբանիայի մէջ—վերոյիշեալ պետութիւնների երազները միանգամ ընդմիշտ պիտի խորտակուին։

***

„Իթթիհատի" պարագլուխները չեն հաշտւում Խորհրդարանը ցրելու մտքի հետ և Սալոնիկ անցնելով, ձգտում են նորէն իրենց կողմը գրաւել պատմական, ազատարար բանակը։ Յայտարարեցին Նոյնիսկ ի լուր Եւրոպայի, թէ պատրաստ են հետևել ռուս յեղափոխական Դումայի օրինակին և փոխադրել Իթթիհատեան պարլամենտը Սալոնիկ կամ Ադրիանոպոլ։

Սակայն թւում է, թէ ջավիտների ու թալաթների ջանքերը զուր պիտի անցնեն. բանակի մէջ նրանք այլ ևս չեն գտնում նախկին ջերմ համակրանքը — թէև բանակը ըստ երևոյթին, մնում է ջերմապէս սահմանադրական։ Իթթիհատի համախոհներ դեռ շատ կան սպաների ու ժանդարմների շարքերում, սակայն մեծ մասը կարծես որոշած է աջակցել նոր կառավարութեանը։ Օֆիցէրների բազմաստորագիր մի դիմումն Սալոնիկից ծանուցանում է Մուխտար փաշայի դահլիճին, որ բանակը մեծամասնութեամբ պատրաստ է կատարել իր զինուորական ու հայրենասիրական պարտքը, հրաժարուել „պոլիտիկից" և նեցուկ լինել նորակազմ դահլիճներին, պայմանաւ՝ որ վերջինը պաշտպան կանգնէ սահմանադրական կարգերին։

Այդպիսով, տագնապը, որ մի քանի օր առաջ հասել էր լարման գագաթնակէտին, բաւականաչափ մեղմացած է և Իթթիհատին մնում է միայն համակերպիլ ու ճիգ թափել առաջիկայ ընտրութիւններին նորէն անցկացնելու իր համախոհները։ Այդ յոյսը այլ ևս չի իրականանայ, Իթթիհատականները՞ զգում են այդ, և նրանցից ոմանք թելադրում են բոյկոտի ենթարկել ընտրութիւնները և նոյնը քարոզել ժողովրդին... Կռիւը, հարկաւ, շուտ չի դադարի... մի երկրի մէջ, ուր կուսակցական հակամարտութիւն, բառի եւրոպական իմաստով գոյութիւն չունի, այլ սովորաբար այլասեռւում՝ է, դառնում թայֆայական ու ազգակործան։

***

L'Humanité-ի մէջ, Ժորէս „Միացէ՛ք" խորագրով մի յօդուածի մէջ ուժգին յորդոր է կարդում Թիւրքիայ սահմանադրականներին և մասնաւորապէս հայերին՝ համերաշխ գործելու ներկայ ճգնաժամի ընթացքում և թոյլ չտալու հին ռէժիմի վերադարձը։

„Հայերը—ասում է Pro Armenia-ի Նախկին Խմբագրական Յանձնաժողովի անդամը—հայերը ծանր սխալ կը գործէին, եթէ չնպաստէին միաբան քաղաքականութեան յաղթանակին։ Նրանք միշտ առիթ չեն ունեցել գոհ լինելու նոր ռէժիմից։ Նրանք իրաւունք և պարտաւորութիւն ունին պահանջելու աւելի գործօն մասնակցութիւն կառավարութեան մէջ և այն դրական երաշխիքները, որ տալիս է իշխանութեան բաժանումը։ Բայց նրանք պիտի նպաստեն հաշտարար լուծումների, որպէս զի չվերադառնայ հին գարշելի ռէժիմը։ Նրանք գիտեն, որ մենք ֆրանսիացի սոցիալիստներս, կորովի կերպով պաշտպանել ենք իրենց՝ չարաշուք օրերին։ Նրանք դրա համար մի քանի անգամ յայտնել են մեզ իրենց երախտագիտութիւնը։ Եթէ այդ յիշողութիւնը կարող է մի յայտնի վարկ հաղորդել մեր խօսքին, թախանձագին խնդրում ենք նրանց՝ չտարուել ոխակալ քաղաքականութեամբ ընդդէմ երիտասարդ Թիւրքերի, այլ նպաստել նոր ռէժիմի ամրապնդման և բարւոքման։

„Ընդդէմ ռէժիմի թերութիւններին, այնուամենայնիւ, որոշ առաջադիմութիւն կատարել է։ Ստեղծուել են նոր հնարաւորութիւններ։ Մտածեցէք ճշմարիտ ներկայացուցչական ռէժիմը հաստատելու դժուարութիւնների մասին, մի երկրում՝ որ կրօնների ու ցեղերի մի քաոս է. երևակայեցէք մշտնջենական բաղխումները մահմեդականների ու քրիստոնեաների միջև, ի նկատի ունեցէք այն տարածութիւնը, որ բաժանում է Նրբեռնի հային կամ թէ Ստամբուլի խորամանկ յոյն վաճառականին՝ Էպիրի Նկարչագեղ և դժնդակ լեռնականից. թող մտածեն և մրցակից պետութիւնների դաւերի մասին, որոնք պատրաստւում են ապագայ նուաճումների համար... և այն ժամանակ նուազ խիստ կը լինին երիտասարդ-Թիւրքերի սխալների վերաբերմամբ"...